



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

107

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ  
ԲՆԱԿԱՆ  
ՊԱՏՄԱՆԻԹԵԱՆ

ԹԱՐԳՄԱՆԵՆՈՑ  
ՅՐ. Փ. ԳԻՐԳԵԱՆ ԻՄՈՎԻՏ



Կ. ՊՕԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Պ. ԳԻՐԵՃԵԱՆ  
ՊՈՍ ԳԵԼԻ ՓՈՂՈՑ ԹԻՒՆ  
1876 -

51075  
4-70

2010

, 2002



270

1862 թ 403

ԱՌԱՋԻՆ 'ՏԱՐԵՐԲ  
ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ



№ 403 - 1262

5(075) այ

Կ-70 ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵՐՔ

# ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏՍ ՄԱՆԿԱՆՑ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

ՕՐ. Փ. ԳԵՈՐԳԵԱՆ  
ԿԱՐՆԵՑԻ

ՀՐԱՄԱՆԱԻ

ՀԱՍՏՐԱԿԱՑ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՈՑ



ՏՊԱԳՈՒԹԻՒՆ Պ. ԳԻՐԿԵԱՆԱՆ

— 1876 —

1799



26031-Ա. 2.

179

ՆՈՒԷՐ ՍԻՐՈՅ

Ա. Ռ. Գ. Ե. Ա. Փ. Բ. Թ.

ՍԱ.ՔԵՆԵԿ

ԴՈՒՍՏՐ

ՄԿՐՏԻՉԻ Խ. ՊԱՂԱՐԵԱՆ

5278-56.



ՍԱ.ՔԵՆԵԿ

Բնական պատմութեան սոյն փոքրիկ ծաղկեփունջը թարգմանելով ֆու անուանդ կը նուիրեմ. ես գիտեմ, դեռաբողբոջ նորածաղիկ հասակիդ մէջ, լեզուդ նոր բացուած գիրք կը խնդրես, որ դբօսնուս ու կարդաս. ահա, ւասիկ զայն պատրաստեցի քեզ իմ պանդխտութեանս մէջ, առ ու կարդա և տուր բարձր Հայոց ֆո հասակակից մանկոտներուն և օրորդներուն, որ նոքա եւս քեզ հետ կարդան սոյն գեղեցիկ պատմութեան խօսակցութիւններ, որ գիտնաս թէ ինչպէ՞ս կը ծլին ֆո սիրած ծաղիկունքը, ինչպէ՞ս կը բուսնին ֆո սիրած պտուղներդ, ինչպէ՞ս կը ծնի դքեղ հրապուրող դունաւոր թիթեռնիկը, պատուհանիդ առջեւ ճլվըլացող ճնճուկը, կարդա՛, և իմացիր թէ ինչպէ՞ս կը մեծնան սիրուն դանակները, որք իրենց մայելովն դքեղ շատ կը զուարճայնեն, կարդա՛ որ գիտնաս թէ անոնց



բրդովն է որ ձմեռուան ցրտէն կը պահպանուիս, կարգա՛ որ գիտնաս թէ դաշտը գեղեցկացնող ցորենով է որ հացը կը շինեն, կարգա՛ որ գիտնաս թէ դքեղ զարգարող մետաքսէ զգեստներդ փոքրիկ որդի մը աշխատութեան արդիւնքն է, կարգա՛ և պիտի գիտնաս թէ ուրկէ՞ց շինուած է սկի գինդերդ վերջապէս կարգա՛ և գիտցիր դքեղ շրջապատող բնութիւնը, և խորհէ թէ այս ամենը մեր ամենակարող Արարչին ձեռագործն է, սքանչացիր և օրհնէ այն բարի Աստուածը որ դքեղ այսչափ բարեօք լեցուցած է :

Քու բարի դատտիարակութեանդ և Հայրենասիրական հոգւոյդ զարգացմանը ի սրտէ ցանկացող,

ՓԵՓՐՈՆԷ ԳԵՈՐԳԵԱՆ

## Ս.ՈՒԱԶԻՆ ՏԱՐԵՐԻ

### ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

1.

ՏՈՒՆԿԵՐԸ



ԵԱԳԻՆԱԼ ԳԱՐԵԱՆԱՐԸ

1. ԵԱԳԻԿ. — ՀԱՏԻԿ

Բան մը ցի կորսուիր,  
այլ ամեն բան կը փոխուի :

ԵԱՅՐԸ. — Ի՞նչ բրիւ այս առաւօտ, Սաթենիկա :

ՍԱԹԵՆԻԿ. — Մայր, դարնանաբերիս նախեցայ, որ շատ սիրուն ծաղիկ մ'է :

Մ. — Այո՛, շատ սիրուն է :

Ս. — Մայր, շատ ժամանակ պիտի ապրի՞ն այս ծաղիկը :

Մ. — Աղջիկ, ծաղիկները քանի մը օր մնայն կ'ապրին :

Ս. — Եւրը՞ :



Մ. — Ետքը կը չորնան :

Մ. — Անցեալ տարուան մեր պատուհանին վրայ եղած բազմաթիւ ալ :

Մ. — Այո՛, անոնք ալ թառամեցան, վասն զի բազմաթիւ տարեկան ծաղիկ մ'է, բայց հասնելու տուն, զոր խնամով ժողուեցի :

Մ. — Այն հատիկները՝ զոր պիտի ցանենք, այնպէս չէ՞ մայր :


Մ. — Այո՛, անոնք են որ երբ գարունը գայ, գեղեցիկ ծաղիկներ պիտի տան, ճիշդ անցեալ տարուան ծաղիկներուն պէս, որովհետեւ լաւ գիտցիր որ ինչ որ կը տեսնանք չ'ոչնչանար, այլ ամէն բան կը փոխուի կամ կը նորոգուի :

Մ. — Օ՛հ, որչափ կուզեմ գիտնալ, թէ ի՞նչ կը լինի հողին մէջ դրուած հատիկը :

Մ. — Սքանչելիք մը . . . որուն վրայ քեզ պիտի խօսիմ. մտիկ ըրէ :

ՀՈՂԻՆ ՄԵՋ ԴՌՈՒԱԾ ՀԱՏԻԿԸ ԿԱՄ ՍԵՐՄԻԱԸ

Երբ գարունը գայ, արեւուն աղբեցութեամբ բը հողը կը տաքնայ, ձմեռուան բոլոր խոնաւութիւնը պահելով՝ Հոն դրուած հատիկը շուտով այս ապրութիւնը և խոնաւութիւնը կը ծծէ, քիչ մը վերջը կ'ուռի, կը պատուի և ճեւղ ինչպէս կ'ըսեն



ՀՈՂԻՆ ԿՈՂՄԻ ՄԸ ԲՈՂՈՒՄԸ

արժար կ'արձակէ ու հողին մէջ խորը կը մտնայ, անունք փնտռելու համար. յետոյ իր արմատին հակառակ կողմէն ճիւղեր կ'արձակէ որ հողէն դուրս կ'ելլան օդին մէջ շնչելու և ապրելու համար :

Մ. — Ի՛նչ, միթէ գարնանաբերս կ'ուտէ՞ կը շնչէ՞ :

Մ. — Ատիկայ գիտես, աղաս, միթէ դու երբեքն ազր չես գներ որ կը մեծցնէ և կը քարձրացնէ, և միթէ՞ ամէն օր շուր չես տար տնոր :

Մ. — Հա՛, իբառունք ունիս, երբէք ատիկայ մտքէս չէր անցներ, կը շնչէ, ըսիր, այնպէս չէ՞ մայրիկ :

Մ. — Այո, Սթեֆենիկս, ինձի պէս՝ քեզի պէս, հօրդ պէս, քու պզտիկ կատուիդ պէս, վերջապէս այն ամենուն պէս որոնք կ'ապրին :

Մ. — Բայց, ուրկէ՞ կը շնչէ այս ծաղիկը, իր բերանը չեմ տեսներ :

Մ. — Անիկայ իր տերևներովը և իր բոլոր կանանչ մասերովը կը շնչէ, որոնք պզտիկ ծակտիկներ ունին, ուրկէ կ'անցնի օդը :

Մ. — Ըսածդ հետաքրքրական է, մայր :

Մ. — Ամէնը այս չէ, ցօղունին վրայ քեզի կ'արձակէ, յետոյ կ'ոչնչեց որ ծաղիկներ կը լինի և վերջապէս պատուի, կամ հասնելու և ահա կատարեալ հրաշք մը :

Մ. — Շատ գոհ եմ ասիկայ գիտնալու :



այս գիշեր Արամին պիտի ըսեմ. գրաւ կը դընեմ, որ անիկայ չը գիտեր :

Մ. — Աղջիկս, անիկայ դպրոցին մէջ ասէն բան կը սորվի :

Ս. — Չեմ կարծեր, մայր :

Մ. — Լա՛ւ, կը հարցնենք :

2. ՊՍԱԿ. - ԲԱԺԱԿ. - ԶՈՒԱՆՅՈԹ. - ՍԵՐՄԱՆՅՈԹ.

ԿԱՄ ՓՕՇԷԱՆՅՈԹ.

ՏԱՐԲԵՐ ՊՍԱԿԵՐ



ՄԺԱԿ



ԿՆՅՈՒՄՆԱԿԻԿ.



ՍՈՂՈՅ.

Քանի որ բան մը չենք կրնար ստեղծել, պետք չէ որ բան մը եղծանենք :

Ս. — Մայր, կ'ուզե՞ս տակաւին դարնաշարեր ծաղկիս վրայ խօսիլ :

Մ. — Ամենայն սիրով, աղջիկս, օ՛ն . . զգու՛շ



չութեամբ այս ծաղիկներէն հաս մը փրփրցուր, ու շագրութիւն ըրէ որ չը պատուես. - կամայ . . ահա այդպէս : Հիմայ կրնաս ըսել թէ ատիկայ ի՞նչ ձեւ ունի :

ՊԱՐՆԱՆԱՅԵՐԻ ՄԸ ՆԱՂԻԿ.

Ս. — Պզտիկ ձագառուի մը ձեւ ունի :

Մ. — Այո՛, ձագառաձեւ մ'է բողբոջակով վերջացած, հինգ բաժանում ունի : Այս խողովակը, այս ձագառաձեւը պակ կ'ըսուի, ցողունին վրայ եղած պզտիկ կանանչը՝ որ պակը կը շրջապատէ, քիչակ կ'ըսուի. այս բաժակին տակը ի՞նչ կը տեսնաս :

Ս. — Պզտիկ մօմի պէս բան մը կը տեսնամ :

Մ. — Որ գեղեցիկ կանանչ ձեւնաչտաշակի մը վրայ կեցած է :

Ս. — Այո՛, մայր :

Մ. — Լա՛ւ, այս ձեւնաչտանակը՝ որուն վրայ կեցած է մօմը, բուսաբանութեան մէջ յաւանք կ'ըսեն, աղէկ նայէ՛, այս ձուանօթը երեք մասէ կը բաղկանայ, նախ յաւանք մը, որուն վարի մասը ուռած է, և դու անոր ձեւնաչտանակ ըսիր, ասիկայ է որ հատերը եր մէջ կը պարունակէ, բաց, մէջք շատ մը պզտիկ ձուեր պիտի գտնես :

Ս. — Ի՞նչ գեղեցիկ են այս պզտիկ ձուերը :



ՄԵՆՅԱՆ ԶՈՒԱՆՅՈԹ ՄԸ



Մ. — Այսնք տունկերուն պղտիկ ձուերն  
են : Երբոր հասուննան , եթէ մարդ զանոնք  
աղէկ հողի մը մէջ գնելու լինի , կը ծղին վեր  
կուգան՝ կը մեծնան և ճիշդ իրենց մօքը պէս  
կը լինին :

Չուանօթք կունենայ նաև շոտանօթք մը ,  
այն փողաւոր թելին պէս , զոր դու մամ ըսիր ,  
այուն վերին ծայրը պղտիկ բերանով մը կը  
վերջանայ , ասոր ալ Պ. գիտնականները շոտանօթք  
կըսեն . այս երեք բառը շատ պիտի  
կրկնես , եթէ կուզես միտքդ պահել :

ԵՐԵՔ ԶՈՒԱՆՕԹՆԵՐՈՒՆ ԿՏՐՈՒԱԾԸ



ԳՏՐԱՆՕԹԵՐ ԿՏՐՈՒԱԾ. ՄԱՆՈՒՇԱԿ ԿՏՐՈՒԱԾ. ԿԱԿՈՋ ԿՏՐՈՒԱԾ.

Ս. — Այս , մայր , գիտողութեան տետ  
բիս մէջ պիտի գրեմ , ես ալ Արամին պէս  
տետարակ ունիմ :

- Մ. — Օ՛ն , կրկնէ տեսնեմ :
- Ս. — Չոտան , Չոտանօթք , Չոտանօթքերան :
- Մ. — Եւ ամէնը մէկէն ի՞նչ կ'ըսուին :
- Ս. — Այն անունը մտքէս ելաւ :
- Մ. — Սմէնը մէկէն Չոտանօթք կ'ըսուին :
- Ս. — Աղէկ , հիմայ ծաղիկներուն մէջ կը

ճանչնամ Պակ , Բախակ , Չոտանօթք , Չոտարան , Չոտանօթք , Չոտանօթքերան :

Մ. — Պղտիկ տահման մ'ալ աւելցնենք ,  
այս չտիր այսօրուան համար բաւական է :

Բաբակ գնդասեղ մ'առ , և ձագ առածե  
ւին պտակը վերէն վար զգուշութեամբ  
պատուէ :

- Ս. — Ըրի :
- Մ. — Ի՞նչ կը տեսնաս հոն :
- Ս. — Հինգ հատ պղտիկ կանանչ գլուխ  
կը տեսնամ :
- Մ. — Հինգ ճերմակ թելերու վրայ , խո  
ղովակին կպած :
- Ս. — Ճիշդ այդպէս :
- Մ. — Այս հինգ ճերմակ թելերը իրենց  
կանանչ գլուխներով՝ տերմանօթք կ'ըսուին :

Երբ հինգ կանանչ գնդակները հասուն  
նան անկէ բարակ փոշի մը պիտի ելլէ և պի  
տի երթայ պղտիկ հունտերը բեղմնաւորէ ,  
աես այն պղտիկ ձուերը՝ զոր ձուարանին մէջ  
տեսար , ասոնք տերմանօթք կ'ըսուին :

- Ս. — Ալ չեմ ուզեր ծաղիկ փրցնել , ո  
րովհետև այնչափ աղէկ բաներ կը պարունա  
կեն իրենց մէջ :
- Մ. — Իրաւունք ունիս աղջիկս , բան մը  
պէտք չէ եզժանել :
- Ս. — Մայր , սերմանօթի փոշին միշտ կանանչ  
չէ : Միտքս կուգայ որ երբեմն գեղին կը ներ



կուէր վրաս երբոր պարտիզին մէջի ճերմակ շուշանին մօտենայի, հարկաւ այս սերմիկներն էին :

Մ. — Գիտողութիւնդ ճիշդ է, սերմանօթներուն մէջի փոշին կամ սերմիկները շատ անգամ դեղին են, ինչպէս շուշանինը . բառ մը ևս ըսենք ու վերջ տանք մեր խօսակցութեանը :

ՍԵՐՄԱՆՕԹ



ԲՆՁՈՐԻ ԵՄԱՂԻ ԿՏՐՈՒՄԵ.



ՍԵՐՄԱՆՕԹ ԽՈՇՈՐՑԱԾ.

Չուանօթին պէս սերմանօթն ալ երեք բանէ կը բաղկանայ . սերմանօթափողէ մը՝ սերմանարանէ մը և սերմիկերէ . սերմանօթափողը՝ այն կապն է որ կը միացնէ կամ կը բռնէ սերմանօթը բունին վրայ, սերմարանը՝ պզտիկ պարկ մ'է, որ սերմիկները իր մէջ կը պարունակէ :

Հատուտութեան առնելը գալուն պէս, այն սերմիկները պարունակող պարկը կը բացուի, և այն փոշին կամ սերմիկները անկէ դուրս կելլան : Մեղունները այս փոշիով կամ սերմիկներով ծածկուած կը լինին, երբոր ծա-

ղիկներէն հիւթ կ'առնուն ու կը մեկնին իրենց մօտ ու մեղր շինելու :

Ս. — Չորս բառ ևս տետրիս մէջ պիտի գրեմ . Սերմանօթ, Սերմանօթափող, սերմարան, սերմիկ : Շնորհակալ եմ, շնորհակալ, սիրելի մայր :

3. ԿՐԿՆԱԹԵՐԹԻԿ ԵՄԱՂԿՈՒՆՔ. ՏԵՐՆԻՆԵՐ. ԱՆՊԱՏՈՒԱՍՏ ԿԱՄ ՎԱՅՐԵՆԻ ԵՄԱԹ. ԲՈՒՆ. ԳՐԳՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

Ինչ որ կուսենանք աշխատութեան պտուղն է, առանց աշխատութեան բան մը չի պահուիր :

Ս. — Մայր, այս առաւօտ պզտիկ վարդերնիէս վարդ մը բերի, կուղե՞ս անոր վրայ խօսիլ :

Մ. — Ոչ :

Ս. — Ինչո՞ւ համար :

Մ. — Վասն զի այն վարդը Կրկնաթերթի է, և ես կուղեմ միայն Դուր ծաղկանց վրայ քեզ խօսիլ, վասն զի բնութեան ստեղծած ամէն բան պարզ է :

Ս. — Բայց միթէ պարզ վարդ չ'կայ :

Մ. — Կայ, մացառներուն վարդերը պարզ են, դաշտերու ծաղիկները պարզ են, նոյն պէս նաև մարդագետիկներունը և անտառ-



հերուհը, միայն պարտէզներուն վարդերը պատուաստեալ կրկնաթերթիկ են :

Ս. — Ի՞նչ նորալուր բան :

Մ. — Այո՛, բնութեան յառաջ բերած ծաղիկները միշտ պարզ են, պարտիզպաններուն մշակութեամբն ու իր նամօքն այս ծաղիկները պատուաստուելով կրկնաթերթիկ կը լինին, և ծաղկանց առեջքները կամ սերմանօթները տեղեւի կը փոխուին : Նայէ՛քու կրկնա-



ՔԱՅՐԻ ՔԱՅՐԻ

թերթ վարդիդ, որ միայն ծաղկատեղեւներ կը ներկայացնէ, սակայն մերձակայ մնացառին մէջ վայրի վարդին գեղին պսակը սերմանօթներով լի է : Բայց կուզեմ զքեզ զարմացնել, կրկնաթերթ ծաղիկները հրէշներու տեսակէն են՝ ըստ տնկաբանից, փասն զի չեն կրնար անոնց վրայ քննութիւն ընել : Թէպէտ քաւ վարդըք Խաչատրի վարդ կ'ըսուի, բայց այն պզտիկ ծառը կամ թուփը՝ որ այս գեղեցիկ ծաղիկները առաջ կը բերէ, վայրի վարդենիէ մը պատուաստուած է, վարը ցանկին մէջ տեսածիդ պէս :

Ս. — Ինչպէ՞ս, այս գեղեցիկ ծաղիկը վայրի վարդենիի մը վրայ բուսած է :

Մ. — Այո՛, վասն զի վայրի վարդենիները շատ զօրաւոր են, ինչպէ՛ս բոլոր անպատուաստ

ծառերը կամ սունկերը, որք նոյնպէս գեղեցիկ ծաղիկներ առաջ կը բերեն :

Կարծեմ թէ աղէկ չը համոզուեցար, համբերէ, կը ջանամ աւելի աղէկ կերպով հասկըցընել քեզ, բնութիւնը մեզ միայն վայրենիները կ'ուտայ՝ գեղեցիկ տանձերը, խնձորները, ընտիր դեղձերը, քաղձրահամ սալորները, ինչպէս և կրկնակ ծաղիկները մարդոց աշխատութեան պտուղն են. վայրի վիճակի մէջ՝ տանձենիները, խնձորենիները, և այլն, պզտիկ և դառնահամ պտուղներ կուտան. դու երբէք ցանկին սալորենիներուն պտուղը կերած չես :

Ս. — Այո՛, և միշտ ստամոքսիս ցաւը միտքըս պիտի բերեմ, զոր կերած ատենս կզգայի, սպառնով եղիք, մայր, որ ես այդ մասին տընկաբաններուն կարծիքէն չեմ, ես կրկնածաղիկները պարզերէն նախամեծար կը սեպեմ, և մշակեալ խոշոր պտուղներն ալ վայրենիներէն :

Մ. — Լաւ, ըսածդ հասկցայ : Բայց բան մը պէտք չէ արհամարել բացարձակ կերպով. սիրելի աղջիկս եթէ տնկաբանները վայրի տունկերը նախամեծար կը սեպեն, ուտելու համար չէ, այլ անոր համար է՝ որ զանոնք կրնան քննել. Ի՞նչ կուզես որ ընեն քու կրկնաթերթ վարդ որուն գլխաւոր գործարանները ծաղկաթերթի փոխուած են, այն ինչ անպատուաստեալները առանց ուրիշի մը աշխատութեան առաջ կու-



դան, և որոյ ճանաչումը մեծ օգուտ ունի :

Ս. — Մայրիկ անոնք ալ կը սիրեմ, բայց ինչո՞ւ համար անարատու աստեալներն աղէկ են քանի որ տուած պտուղները գէշ են :

Մ. — Աղջիկս այն ծառերը՝ որոնց պտուղները շատ կը սիրենք, պատու աստեալ վայրի ծառեր են, ամէն ծառ մշակութեամբ կապրի: Աստուած այխատութիւնը մեզի պարտք մը դրած է, ինքը մեզի վայրենիները կուտայ, և կը թողու որ մենք կատարելագործենք իր գործը, կամ՝ ըստ եւս է ըսել, եթէ մարդոց աշխատութիւնը ընդհատէր, տունկերը, պտուղները, ծառերը, ծաղիկները, շուտով իրենց նախնական վիճակին պիտի դառնային :

Ս. — Ա՛հ, օրինակով մը բացատրէ ըսածդ, մայր իմ :

Մ. — Լա՛ւ, աղջիկս, աշխատութեան օրէնքը անոր համար մեր վրայ դրուած է, որովհետև մեր ամենէն գեղեցիկ ստացուածքներն անգամ անկայուն են, անոնք մեր վտւթաջանութեանը պէտք ունին, որ ձեռքէ չը հանենք կամ չը կորսնցնենք, երբէք դիտած չե՞ս մեր գրացւոյն տանը պարտէզը, որ երեք տարիէ ի վեր անմշակ մնալով՝ բոլորովին խոպանացեր է :

Ս. — Գիտեմ, այն խեղճ պարտէզը բոլորովին մացառներով և գէշ խոտերով ծածկուած է, ալ չ'երևար ծառուղիները, գեղեցիկ տանձենիները մամուռով ծածկուած են. երբէք

այսպէս տխուր բան չ'է տեսած :

Մ. — Լա՛ւ, սիրելի աղջիկս, դասախարակութիւնը այնպէս է տարւոյց համար ինչպէս մշակութիւնը տունկերուն, մարդկային բնութեան մէջ ալ վայրենին կայ. - Բայց վարդը չ'մոռնանք, յորմէ շատ հեռացանք :

Ս.՝ — Ս՛հ, ուրեմն ատոր վրայ ա՛լ պիտի խօսիս :

Մ. — Այ՛, փայն լուր այնչափ փայլուն և վրայէն այնչափ աղէկ ջնարակով օժուած ի նման տերեւներուն վրայ պիտի խօսիմ :

Ս. — Բայց եթէ օժուած են ինչպէ՞ս կրնան շնչել, ուրի՞շ կանցնի օդը :

Մ. — Ուրեմն քիչ մը սպասէ, եթէ կը հաճիս, անհամբեր աղջիկս, ըսի թէ տերեւները ջնարակով օժուած ի նման են միայն վրայէն, այնպէս որ ջուրը կրնայ թափիլ այս պզտիկ անձրեւանոցներուն վրայ առանց վնասելու այն փափուկ հիւսուածքը որ տակէն ամրացած է :

Ս. — Վերջապէս ինձի ըսիր թէ տունկերը կը քնանան. միթէ՞ ստոյգ է՞ պսիկայ :

Մ. — Այո՛, շատ ստոյգ է, երեկոյները երբոր՝ ա՛լ արեւը հորիզոնին վրայէն կ'երթայ, տունկերը թուշուներուն և պզտիկ աղջիկներուն պէս կը քնանան, այսինքն իրենց պսակները կը գոցուին, տերեւները կը ծալուին, ահա այս է անոնց քունը :

Ս. — Ասիկայ շատ հեռաքրօքական է, մայր :



Մ. — Այս երեկոյ գեղեցիկ աղասիային նայէ, երբ տեսնաս որ տերեւները իրենց վրայ կը ծալուին այն ատեն կընաս ըսել թէ կը քնանան. օրինակի համար, երբէք դիտած չես որ պուլվարին ծառերը նոյնպէս և փարիզի Եղիւսեան դաշտիները, չեն կընար հաւասարիլ անտառներուն ծառոց գեղեցկութեանը :

Մ. — Օ՛հ, անտառին ծառերը աւելի կանանչ և աւելի բարձր են :

Մ. — Ասիկայ քնոյ պակասութենէն է, Եղիւսեան դաշտին և Պուլվարին ծառուղիները այնչափ լի են գիշերուան լոյսերով, որ ծառերը երկար ատեն արթուն կը մնան :

Մ. — Ասիկայ կարելի է՞ բայց այն ատեն կառքերուն դղրդիւնն ալ գիրենք աւելի անհանդիստ չպիտի ընէ :

Մ. — Դու կը կարծես որ ծառերը ականջ ո՛ւնին :

Մ. — Մայր, այնչափ նորայուր բաներ կը սորվեցնես ինձ, որ կընամ ենթադրել թէ ծառերը կը լսեն, վասնզի կ'ապրին և կը շնչեն :

Մ. — Ա՛հ, ո՛չ, անոնք երբէք չեն լսեր, գոնէ ինչպէս որ ես գիտեմ. բայց զրդուական են, քանի մը տունկեր յայտնի կերպով կ'ազդուին ինչպէս է, զգայաւոր են, որ պզտիկ շոշափուս մը տերեւները կը գոցէ միջատի մը մօտ նալովը, արևուն վրայէն ամպ մը անցնելովը :



ԳՐԱՅԱԵԱՂԻԿ

Կը պատմեն թէ Արեւելեան կողմը Մեհակեաց (ճգնաւոր) մը զգայածաղիկ տնկեր է իր բնակարանը տանող ճամբուն վրայ, այցելու մը հոն մտած ատենը իր զգեստներուն չըփմամբը թուփը իր տերեւները սարսուռով մը վարդարձուցեր է, այս առ-

պաւորութիւնը փութանակի ճիւղէ ճիւղ փոխադրուել է ճամբուն մէկ ծայրէն մինչև միւս ծայրը, որով մենակեացին յայտներ են օտարականի մը գալուստը :

Մ. — Շատ կը փափագէի այն ծառուղին տեսնալ :

Մ. — Այնչափ հեռուն երթալու պէտք չկայ, աղջիկս. զգայածաղիկ կը գնենք, և ինքդ կարեհաս տեսնել անոր այս մասնաւոր յատկութիւնը :



4. ԱՐՄԱՏՆԵՐ. — ՀԻՒԹ

Բամ մը արհամարհե՞ու չե՛ր շատ անգամ ամենեկն խոնարհներն եւ օգտակարները :

Մ. — Այսօր տունը որոշելու կարգը իմն է, ահա տե՛ս որոշածս :

Ս. — Օ՛հ, ստեպղիններ, չողգամներ, ուրեմն խոհանոց մը պիտի կազմենք, օ՛, գեղեցիկ կարմիր բողկեր ամենն ալ աղէկ են, բայց ի՞մ գարնանաբեր ծաղիկս անոնցմէ աւելի կը սիրեմ :

Մ. — Այո՛, բայց եթէ միայն գարնանաբեր ծաղիկ լինէր, հպարտ աղջիկս, անօթութենէ պիտի մեռնէինք, բաշարեգէնները, թող թէ մեր կերակրոց մէջ շատ պէտք են, այլ և զայն ուսանիլ և դիտնալն ալ մեզ շատ օգտակար է : Ասոնց մէջ գլխաւոր և էական մասը կազմողը արմատն է . առոնք ընտրեցի, վասն զի կ'ուզեմ որ այսօր արմատներուն վրայ խօսիմ : Արդէն ըսի քեզ թէ անոնցմով է որ տունկերը կը սնանին : Ինձի հետ քննէ այս կարմիր քունք :

Ս. — Շատ կը փափաքիմ գիտնալ թէ ուսուցից կ'ուսէ : Միթէ՞ բողկը բերան ունի :

Մ. — Շատ բերան ունի, բռնէ այս թելը (մազաւոր արմատ), այն թելերուն ամէն մէ-

կին ծայրերը մէկ մէկ պզտիկ բերաններ կան, այս բերանները սպունքներու կը նմանին, և առաջին կ'ըսուին : Ասոնք բոյսին սննդեանը յարմար եղած նիւթը վեր կը տանին :

Ս. — Մայր, ուրեմն դու կը կարծես թէ տունկերը իրենց պէտք եղածը դանել գիտեն :

Մ. — Անշուշտ : Տունկերը հողին մէջէն իրենց սննդեանը յարմար եղածը միայն կանան : Ծառեր կան՝ որոց արմատները լայն խորամներէ կ'անցնին մտակայ դաշտերէն սընունդ փնտռելու համար : Գիտած են որ բոյսերը նախապատուութիւն անգամ ունին, և շատ անգամ իրենց տեղը կը փոխեն անոգալապէս իրենց արմատներուն տարածելովը : Այս դործարանը (այսինքն) արմատը՝ որ գետնին տակը պահուած կ'ապրի, երբեմն կերպ մը բնազդում կը ցուցնէ, դրեթէ անասնոց նման : Ծառեր ալ կան՝ որ ամէն տեսակ արգելքներէ կ'անցնին, որ իրենց համար աղէկ հող գտնեն (այսինքն) ժայռեր կը խորտակեն, պատերէ կ'անցնին և այլն :

Ս. — Այս մանրամասնութիւնները ինձի աւելի սիրելի կ'ընեն տունկերը, ի՞մ կարծիքով աւելի հանճարեղ կը դանեմ զիրենք :



ՄԱՋԱՌՈՐ ԱՐՄԱՏ

16571) 95-8735







ՎԱՍՐԻ ՄԱՏՈՒՄԱԿ

ճառէ : Ի՞նչ հետաքրքրական բաներ կը սորվեցնէ գիտութիւնը :

Մ. — Տունկերը կը սիրեն նաև ընկերութիւնը : Օր մը անտառի մը մէջ շատ մը մատուտակներ տեսայ, որ խուսի խուսի եղած կ'ապրէին : Պէտք է հաւատալ որ այս տունկը, հազուադիւարէ, և այս անտառին մէջ իրեն յարմար սնունդ գտեր է : Դու չես կրնար երեւտկայել այս կարմիր մատուտակներուն գեղեցկութիւնը, սսոնց համար իրաւամբ ըսած են օսկւոյ կրտորներով լեցուած Պօհիմեայ գաւաթներ :

Երբ սսոնց հասուն ձուարանը բացուի մէջի հատիկները կարմիր բուստի և մարգարիտի պէս կ'երեւան : Ս,յս ծաղիկները այնչափ գեղեցիկ են որ կ'ուզէի ամէն մէկէն հետս բերել :

Ս. — Մատուտակը, ես անոր կրկնաթերթիկը միայն տեսած էի :

Մ. — Ասիկայ հանձար չէ՞ այլ կերպ մը բնագոյում, որ ամէն գործարանաւոր էակներ ունին, որով կըրնան իրենց սնունդը փնտռել :

Ս. — Ս,յն բնազգումն իսկ ինծի մեծ զարմանք կը պատճառուէր :

Մ. — Ա,յո՛, մեր պարտիզին՝ մէջինը կըրկնաթերթիկ է, բայց անտառներունը պարզ է : Շարունակենք մեր քննութիւնը, որմաք ձուանօթին և սերմանօթին պէս, երեք մասերէ բաղկացած է, մարմինէ մը որ նոյն ինքն բողկն է, մազերէ, որ բուն արմատն է, և սպիտակմանէ մը :

Ս. — Ասոնք այն պղտիկ բերաններն են, որոնցմով կ'ուտեն, ըսիր :

Մ. — Ա,յո՛, արմատին վրայի մասը, որ աւելի կարծր է, ուրիշ կ'ելլան տերեւները, պարանոց կամ փող կ'ըսուի :

Ս. — Միթէ՞ շոգամը որեւէնք բողկը ծաղիկ կուտան :

Մ. — Ա,յո՛, ստեպղինը՝ ճերմակ հսկանկերոյ գեղեցիկ ծաղիկ մը կուտայ բողկը շոգամը և արիշներն ալ նոյնպէս ծաղիկ կուտան : Ամեն տունկեր իրենց ծաղիկը ժամանակն ունին, որ շատ ու քիչ որոշ կը լինի : Արմատները՝ սնունդը տունկերուն մէջ կը տանին, ածգոյն հեղուկի մը պէս որ հե՛ք կ'ըսուի : Հիւթը կը շրջի տունկին ամէն մասերուն մէջ :



ՍՏԵՊԻՆԻ ՆԱԳԻԿ

Ս. — Մայր, տունկերը եթէ շատ ուտեն կը հիւանդանան :

Մ. — Անշուշտ, ճիշդ պագիկ, աղջիկներ



բուն նման , օրինակի համար երբ պարտիզ պանները զանոնք շատ ջրեն , կը խեղդեն , և այն ատեն հիւանդ կը լինին ջրոյն անմարտութեամբ : Նոյնպէս նաև կը հիւանդանան երբ շատ աղբուին :

Ս. — Սոք յանցանքը իրենցը չէ , այլ պարտիզպաններուն :

Մ. — Սո՛ր , վասն զի ատուկերը իրենց արբուած բանը չեն կրնար մերժել , մինչդեռ պրզ տիկ աղջիկներուն մեծ պակասութիւն է եթէ շատ ուտեն :

Ս. — Մայր , ըսիր թէ հիւթը կը շրջի ատուկերուն մէջ :

Մ. — Սո՛ր , ինչպէս որ արիւնն ալ մեր մէջը այս է որ մարդոց և անասոց կեանքը կը պահպանէ , պէտք է գիտնաս որ թէ արիւնը և թէ հիւթը երկու շարժում ունին , մէկ մը ելնալ , մէկ մը իջնալ , այն գործողութեամբ նոր խաւ մը կը կազմեն , որ բոյսին կամ կենդանւոյն անձանը կ'օգնեն :

Ս. — Մայր , դու որչափ բարի ես , որ ինձի այս բաները կը սորվեցնես : Եւ կ'ըսես որ Արամը կը պնդէ թէ անկարանութեան ուսումը բան մը չարժեր , որչափ աղէկ է պզտիկ աղջիկներուն համար , վասն զի անոնք մեծ բան չեն կրնար սորվիլ :

Մ. — Արամը չի խորհիր աղջիկս : Տնկարանս թիւնը զուարճալի գիտութիւն մ'է որ կըրգ-

բօցնէ , և միանգամայն կը կրթէ , անիկայ մեզ կը սորվեցնէ ճանչնալ աղէկ և օգտակար ատուկերը , անիկայ տիեզերաց սքանչելիքներուն զմեզ հաղորդակից կ'ընէ , և կը բարձրացնէ մեր միտքը առ Աստուած : Վերջապէս Արամը պիտի ստիպուի սորվիլ , թող հիմայ այդպէս անհող լինի , երբ հասկնայ որ ամէն գիտութիւն շղթայի նման իրարու հետ կապուած են , այն ատեն չպիտի ուզէ և ոչ մէկին անհող լինիլ :

Յ.- ԳԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ. — ԸՆՏԱՆԻՔՆԵՐ

Առջի բերան ամեն բան զծուար կերեալ , բայց երբ անգամ մը առաջին զծուարութեանը յաղթուի , միասնեքն ալ կը ղյուրանա :

Ս. — Մայր , գիտես թէ երեկունէ 'ի վեր ի՞նչ բան ուշադրութիւնս դրաւեր է :

Մ. — Ո՛չ , չեմ գիտեր , ըսէ նայիմ , աղջիկս :

Ս. — Երբ ցորենի դաշար , մեծ անտառը , մացառը և մեր պարտեզը կը նայիմ , ինքնիս կը հարցնեմ , թէ կարե՞լի է արդեօք ամեն ատուկերը ճանչնալ . այնչափ կայ որ . . .

Մ. — Կարելի է աղջիկս :



Ս. — Ի՞նչ , ամէն բա՛ն , ամէն բա՛ն , խոտերն ալ մամուռնե՛րն ալ վերջապէս ամէ՛նն ալ :

Մ. — Այո՛ , քեզ պիտի պատմեմ թէ տե՛կաբանները ի՞նչ բրած են այս մասին , որ իրենց նպատակին հասեր են . — շատ մը քննութիւններէ ետք ճանչցած են որ շատ տունկեր կը բուսնին երկու տե՛րեւոր ոմանք փայտի տե՛րեւոր ոմանք ալ առանց որոշ տե՛րեւոր :

Ս. — Առանց տերեւի՞ , որոնք են ուրեմն այն տունկերը :

Մ. — Օրինակի համար առնել :

Ս. — Այո՛ :

Մ. — Այս նշանները գիտնոց համար բնական դասակարգութեան սկզբնաւորութիւն մ'է :

Ս. — Մ'հ , կը հասկնամ . կան տունկեր որ երկու տերեւ կ'ունենան , ոմանք մէկ հաս մը , և վերջապէս ոմանք երբէք :

Մ. — Ճիշդ այդպէս է ազջիկա , բայց պէտք է գիտնաս որ այս տերեւները մէկըմէկու չեն նմանիր , անոր համար անոնց ալ մասնաւոր անուն մը տուեր են , որ կ'ըսուի ընձիւ կամ բլբլի նաև տերեւանոցց ալ կ'ըսուի . և իրօք ալ այս բլբլիները կամ ընձիւղները խիստ հասա տերեւներ են որ նորաբոյս տունկերը անուցանելու կը ծառայեն , մինչեւ անոնց առաջին տերեւները և արմատները կազմուին

և կարենան բողբոջին մինակ ապրիլ : Այո՛ , պէս են նաև պղտիկ աղաքները , որ մայրերը կը դիեցնեն մինչեւ որ ահուայ հասնեն :

Ս. — Ա՛հ , այս որչափ հետաքրքրական է :

Մ. — Այո՛ , ազջիկա հետաքրքրական նա մանաւանդ խանդաղատական է , վասն զի ոչ ինչ այնչափ արժանի է մեր զարմանաց , որչափ նախատես Արարչին խնամքը , որ ամէն բան իմաստութեամբ պատրաստեր է : Գիտնականները , երեք մեծ կարգեր գտած կամ ճանչցած են տունկերուն մէջ :

Առաջին , անոնք որ առանց ընձիւղի գետնէն կը բուսնին և կ'ըսուին անձիւղ կամ անբլբլի , երկրորդ անոնք որ մէկ ընձիւղով կամ բլբլակով մը կը բուսնին կ'ըսուին փայտի կամ փայտի երրորդ անոնք որ երկու ընձիւղով կամ բլբլակով կը բուսնին , կ'ըսուին երկու կամ երկու տսիկայ շփոթ կամ խառնի խուռն չերեւար , այնպէս չէ՞ :



Այս մեծ բառերէն մի վախ՝ ԵՐԵՎԱՆԻ ԳՆԱԿԱՆ նար , ես հիմակունէ քեզի խօսեցայ անոնց վըբայ , վասն զի ամբողջ սոյն դրբին մէջ այս բառերուն պիտի հանդիպիս , որոնք վերջը քեզ արդեւը չ'պիտի լինին երբ ամբողջ անկարա նութիւնը սորվիս :



Գ. — Ա՛հ, մնայր, ասիկայ որչափ դժուար կ'երեւի ինձ :

Մ. — Ազնիկս, քեզի ըսի թէ առջի բերրան ամեն բան դժուար կ'երեւի, բայց եթէ մարդ համբերէ, այն ատեն կը տեսնայ որ եթէ անդամ մը դժուարութեան յաղթէ, մնացեալները շատ դիւրութեամբ կ'ընէ, փորձէ՛, և պիտի տեսնաս անոր արդիւնքը :

Ս. — Հանգիստ եղիք, մայր, կ'ուզեմ քեզ մտիկ ընել :

Մ. — Այս մեծ գասակարգութենէ ետք, որ տունկերուն դեմնէն բուսնելու կերպին վրայ հաստատուած է, անկաբանները ուրիշ գասակարգութիւն մը եւս ըրեր են ընդհանուր նըմանութեան վրայ, վասն զի տեսած կամ դիտած են որ տունկերուն մէջ շատ տարբեր ձեւեր և տեսակներ կան, կերպ մը խընամութեամբ, որոնց ամենէն որոշ նշանները ծաղկանց վրայ կ'երեւի :



ԻՆՁՈՐԻ ԾԱՂԻԿ

Այսպէս է որ ինչորեքնի և եւէի. այս երեքէն աւելի չըսելու համար (որ միեւնոյն ընտանեաց կը վերաբերին) շարքադէ են, այս ընտանիքը շատ բազմաթիւ և օգտակար է. վասն զի անոնցմէ շատերը մեր պաղատու ծառերուն ալ կը յարմարին :

Գիտնականները այս գաղափարը՝ բազ-

դատմամբ մարդկային ընտանիքի՝ ունեցեր են պէտք է դիտել որ մեր ճանչցած ընտանիքներուն մէջ, ազաքը շատ ու քիչ իրենց հօրը կամ մօրը կը նմանին, մազերուն գոյնովը, աչքերովը քթին ձեւերովը, բերանովը ակօսներովը, հասակովը, մարմնոյն դիրքովը թեւերովը ծունկերովը եղունքներովը և այլն :

Ս. — Մայր, դիտեմ որ ես հօրս կը նմանիմ, ամեն մարդ կ'ըսէ թէ հօրս աչքերուն կը նմանի իմիններս :

Մ. — Այս նմանութեամբ է որ առջի բերան ճանչցան բոյսերուն ընտանիքները, բայց որովհետեւ ծաղիկներ կան որ շատ կարեւոր են անոր համար նախ անոնց վրայ քիչ մը խօսինք :

ԾԱՂԿԱՆՑ ԿԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ



ԾԱՂԿԱՆՑ ԿԱՄ ՄԵՆՄՆ

Ս. — Այո՛, մայր իմ :

Ծաղիկ մը գրեթէ միշտ վազի կողմէն կանաչով կը կազմուի, որ կ'ըսուի քառակ. պսակ մը, որ ծաղկին որոշ մասն է, վերջապէս յառաջի է մը և սերմաբան մը որ մէջ տեղն է : Կը յիշես անշուշտ ինչ որ ըսինք դարձանաբեր ծաղկիդ համար :



Մ. — Խաչածեւ ծաղկի մը վրայ խօսինք , որ մեծ ընտանիքի մը նախատիպն է : Որոնք Խաչածեւեր կ'ըսուին , նախ պարի շահարկներուն վըրայ խօսինք :

Ս. — Այդ ծաղիկները կը ճանչնամ , շատ սիրուն են :

Մ. — Այս խաչածեւ ծաղիկը վեց սերմնային կը բաղկանայ որոնց երկուքը կարճ և չորսը երկար են : Կոշածք , շղթածք , քոշիչ , անոր կը նմանին . ասոնք խաչածեւներ են :

Ուրիշ օրինակ մը կ'ուզեմ , շահարկերու , շահարկ ասոնք ալ մի և նոյն յատկութիւնն ունին , իրենց ծաղիկները բաժակ չունին , պսակը վեց բաժանում ունի բունը առանց տերեւի է , վերջապէս վեց սերմանոթ ունին , և մէկ ձուսնօթաբերան երեք բաժանմամբ : Բոլոր այս ընտանեաց մէջ եղածները , շահարկերու կ'ըսուին , որ վեցի և երեքի



ՊԱՅՍ. 2

բաժնուած են , մանուշակ և հնգաթերեւեան մանուշակ ձեւով իրարու կը նմանին , անոնք մանուշակ պէտքերուն ընտանիքէն են : Ուրիշ շատերու ալ անուն կրնամ տալ , բայց քու յիշողութեանդ համար շատ երկար կը լինի , անոնք վերջէն պիտի տորվիտ : Միայն գիտցիր որ ծովերը ժայռերը , գետերը , դաշտերը , մարգագետին

ները , անտառները , այգիները , դետակները , ամենքն ալ իրենց համար մասնաւոր տունկեր ունին մարդ կրնայ զանոնք անուանել վարժութեամբ և ուշագրութեամբ :

Ս. — Մայր տակաւին բան մ'ունիմ քեզ հարցնելու :

Մ. — Խօսէ աղջիկս :

Ս. — Տունկերու շնչելը ինձ սորվեցնելէդ 'ի վեր ալ չեմ համարձակիր անոնց դպչիլ , շատ կը վախնամ թէ անոնց կը վնասեմ :

Մ. — Բանը այդպէս չափազանցել պէտք չէ : Տունկերը քեզ չունին . հետեւաբար չեն զգար :

Ս. — Հապա մենակեացին զգայածաղիկն ունի :

Մ. — Գեղ ըսի թէ անոնք դիւրագրգռական են : Իրենց այս յատկութեան համար շահարկային անունը տուեր են : Բայց ծաղիկն այն շարժումը աւելի դիւրագրգռականութենէ է քան թէ զգայականութենէ :

Աղջիկս , սիրէ՞ ծաղիկները , նոյնպէս նաեւ ինչ որ աղէկ է , աներկիւղ զանոնք խնամէ , վասն զի տունկերը մարդոց և անասնոց պիտոյից համար ստեղծուած են : Հիմա անոնց օգտակարութիւնը պիտի ըսեմ և դու պիտի ասնաս որ փոխանակ մեղի երկիւղ պատճառելու , ընդ հակառակը մեր մտաց հանդարտութեան պատճառ կը լինին : Վասն



զի անոնք իրենց հետ կը բերեն առողջութիւն  
և կեանք :

Բոյսերն են որ կը զովացնեն օդն և զայն  
առողջարար կ'ընեն , իրենց և կենդանեաց  
շարունակ շնչառութիւնը կը վերակենդանա-  
ցընեն մթնոլորտը :

Սակայն և այնպէս ինչ որ ստոյգ է բաց օ-  
դի մէջ եղած կանանչներուն համար , այնպէս  
չէ ներփակեալ (Չերմոցներու կամ սենեակնե-  
րու մէջ) նա մանաւանդ կտրուած ծաղկանց  
և տերեւով ճիւղերուն համար , ուրեմն զգու-  
շացիր դիշերը սենեկիդ մէջ երբէք ծաղկէ  
փունջ պահելէ , այս անխոհեմութիւնը կրնայ  
մասաւոր լինիլ . ծաղիկներէն ոմանց արտա-  
շնչութիւնը երբեմն թունաւորիչ են :

6.— ԲՈՒՆ ԿԱՄ ՅՕՂՈՒՆ

Երկրի մը հարստութիւն  
տուողը մշակութիւնն է :

Մ. — Սիրելի աղջիկս , զբօսանաց վայր-  
կեանքներէն օգուտ բաղենք , և տունկերուն  
բուները ճանչնալով միշտ օգտակարը հաճոյա-  
կանին հետ միացնենք :

Նախ այս մեծ կազմիին քով կենանք , որ  
ժեր անորոնք ըստաւորն է : Աղջիկս անիրաւութիւն

չէ անոր այսպէս ըսելը , վասն զի մեր երկրին  
ծառերուն մէջ ամենէն դեղեցիկն և զորաւորն  
է , իր փայտը թեւային , խիտ , դիմացկուն և  
մեր գործածածներուն մէջ ամենէն յարգելին  
է : Կաշնիլին բունը բարձր և ուղիղ է , մինչև ճիւ-  
ղաբաժանման տեղը , բուն անունը , ամէն ծա-  
ռերուն համար նոյն չէ :

Ս. — Ուրեմն ինչ ծառ էր այն զոր անկա-  
բանական պարտիզին շերմոցին մէջ տեսանք  
և զարմացանք , այն բազմաթիւ տերեւները ,  
այնպիսի հաւասարութեամբ ծառած էին որ մե-  
տաքսէ ծոպերու կը նմանէին : Ես կը կարծէի  
թէ անիկայ է ծառոյ թագաւորը :

Մ. — Կարծեմ որ արտաւանդ վրայ խօսիլ  
կ'ուզես : Անիկայ տաք երկրի ծառ մ'է : Անոր  
ճառագայթաւոր ալ կրնաս ըսել , անիկայ բու-  
սական սքանչելիք մ'է : Որչափ որ դեղեցիկ է  
այնչափ ալ օգտակար է : Իր պտուղը շատ թո-  
ղովդոյ համար հացի տեղ կը բռնէ : Բայց  
մեզի համար աղամաթղենին ուրիշ բանի չի  
զար , եթէ ոչ զարդի : Ամառը հասարակաց  
պարտիզին մէջ միայն տեսար , այն ալ ձմեռը  
չեկած ներս առած էին , վասն զի չի կրնար դի-  
մանալ , որ արտաւանդ պտուղը մեր կլիմային տա-  
կը չի հասնիր :

Բայց չը դիտեցիր թէ այն ծառը որչափ  
տարբեր է մեր երկրին ծառերէն :

Ս. — Ահ , ստուգիւ , սիրելի մայրս , և Ա-



քամին աղ ըսի թէ ծառ չէ տունկ է :


Մ. — Ինչպէ՞ն տունկ մը :

Ս. — Այո՛, անիկայ ոչ ճիւղ ունի և ոչ բուն, տերեւները կարծես թէ ստորտէն կ'ելլան : Ահագին պրաս մը պիտի ըսէի եթէ անպատկառ համեմատութիւն չը լինէր այնպիսի կաքերու բանի մը համար :

Մ. — Յիրաւի աղամաթղենին միաընձիւղ կամ միաբլթակ տունկ մ'է պրասին պէս, սակայն այս երկու տունկերը նոյն ընտանիքէն չեն, վասն զի պրասը շուշանակերպ մ'է մինչդեռ աղամաթղենին ծառայնէր կամ հակադէմնէրոց եղէն է, բայց անոնց մէջ ալ մեծ նմանութիւն կայ, այսինքն աղամաթղենիին բունը կը կազմուի պրասին բունին պէս, փաթթուած տերեւներով, որ արմատին փողէն կ'ելլայ : Այսպէս սնկաբանները միաընձիւղ ծառերուն բունին սնկ կամ խոշոր անունը տուեր են :

Բանին և սնկին տարբերութիւնը իրօք շատ մեծ է : Մեր երկրի ծառերուն մէջ՝ որ բոլորն ալ երկնձիւղ են և համակեղրոն խաւերով կամ շրջանակներով կ'աճեն, վար իջնող հիւթը կը խտանայ, և այսպէս բոլորաբը կը կենայ, կեղեւին տակ, և ամէն սպրի նոր խաւ մը կը կազմէ : Այն խաւը որ ժամանակէ մը վերջը պիտի կարծրանայ սպիտակոց ծառի կամ նորհաս փայտ կ'ըսուի. բայց ահա ծառ մը որ արդէն փայտահարները սղոցով մը կտրեր են,

այս փայտին կեղրոնը ծառ է փայտէ կարծր խաւին շուրջը որ աւելի մօտ է կեղրոնին. նախնիք ասոր օրէր կ'ըսէին,



անոր վրայ կուգայ սնկերու ցոյց որ վերջէն կազմուած է և տակաւին կատարեալ փայտ չէ, վերջապէս ամէնը հասցնելու համար ահա կեղեւը որ մերթի տեղ է ծառերուն համար, և զանոնք կը պատսպարէ :

ԿՆՆՆՆՆՆՆՆ ՌՈՐՆԻ ՄԸ ԿՏՐՈՒՄԸ  
Մ. ԵՌԵՍ Ս. ՄԻՔ Փ. ՓԱՏԱՆԻԹ ԿԱՊ  
ՍՊԻՏԱՆՈՅ ԵՄՈՒՅ Կ. ԿՆՆՆԻ

Ս. — Ուրեմն ամէն խաւ մէկ մէկ տարի՞ կը ներկայացնեն :

Մ. — Ճիշդ այդպէս է :

Ս. — Ուրեմն կրնան այս ծառին տարիքը գիտնալ անոր խաւերը համբերով :


Մ. — Այո՛, բայց ինչպէ՞ս : Բայց յայտնի չէ որ ծառերուն ամուսնի մը, որ գրեթէ ունի այն ժամանակէն, շատ տարբեր եղանակով կ'աճեն : Այն տեղերու ծառերը առանց խոշորուի, առանց բոլորակաւոր խաւերու, առանց ծուծի են, երբոր այս ծառերը վերէն վար մէջ տեղէն կտրուին իրենց բունը կը ներկայացնէ առանձին առանձին



և անկարգաւոր ներդերու խորժեր : Տուն մտնենք հոն քեզ կարած արմաւենիի կտոր մը պիտի ցուցունեմ, որ հայրդ իր թանգարանին մէջ կը պահէ :

Ս. — Ուրեմն արմաւենիին տարիքը չե՞ն կրնար գիտնալ :

Մ. — Կրնան, բնութիւնը մեզի ուրիշ միջոց մը տուեր է զանոնք ճանչնալու : Արմաւենիին բունը ամէն տարի կը մեծնայ, տեսակ մը կոճակներով կամ պալարներով որ դադարժը կը լինին, և տերեւներով կը զուարթանայ ծառին կատարը կազմելու համար : Ասան զի միաբնձիւղները ընդ հանրապէս ոչ ճիւղ ունին ոչ բաժանում, իրենց տերեւները չորնալով կը թափին և օղակ մը կը կազմեն բունին շուրջը : Այնպէս որ կրնայ ըսուիլ թէ ծառը որչափ որ օղակ ունի այնչափ ալ տարի :



ԱՐՄԱՎԵՆԻԻ ՄԵ ԿՏՐՈՒՄ

Ս. — Ատիկայ շատ պարզ է :


Մ. — Միաբնձիւղները որ մեր բարեխառն կլիմային մէջ կ'աճին շատ պարզ բոյսեր են : Մօտակայ դաշտին մէջ ցորենը կը տեսնա՞ս, տհա անիկայ միաբնձիւղ տունկ մ'է, տարիք չունի վասն զի ամէն տարի կը կտրեն :

Ս. — Այո՛, ամէն տարի կը կտրեն երբոր հասնի :

Մ. — Ատիկայ արեւմտեան մ'է այսինքն այնպիսի տունկ մը որ մէկ տարի կ'ապրի : Պրասը որուն վրայ արդէն խօսեցայ քեզ, շուշանակերպը, կակաչը և բոլոր կոճղեղաւորները նոյնպէս տարեկան տունկեր են :

Ս. — Ուրեմն ինչպէ՞ս ընելու է որ հետեւեալ տարին ալ լինի այն տունկէն :

Մ. — Քաղուած հունձքը այլ ևս ցորեն չի տար պէտք է նորէն զայն ցանել : Կոճղեղաւոր բոյսերուն ինչպէս է յակնթածաղիկը, կակաչը և այլն, պէտք է ուշադրութիւն ընել անոնց հատիկին և գետնին մէջ եղած կոճղեղներուն :



ՅԱՆՔԱՅԱՆԻ ԿՈՃՂԵՂԸ ԿՏՐՈՒՄ

Ս. — Մշակելը ի՞նչ աղէկ բան է :

Մ. — Այո՛, իմ կարծիքս ալ այդ է, վասն զի անիկայ շատ աղէկ արհեստ մ'է :

Ս. — Ամէն մարդ մշակ չի կրնար լինիլ :

Մ. — Անշուշտ, բայց և այնպէս երկրագործութիւնն աւելի յարգ և կարեւորութիւն պիտի ստանայ : Եւ կը յուսամ թէ այս գործը պիտի յաջօղի, երբ մարդիկ աւելի կրթուին ու դաստիարակուին, պիտի հասկընան որ անիկայ ազնիւ և շատ օգտակար արհեստ մ'է, այն ա-



տեն աւելի աղէկ մշակեալ երկիր և մեծ եկամուտ մը պիտի ունենանք , քիչ խոտան, անգործ և անպաուղ երկիր . և շատ դաշտ , մարդագետիկն , այդի , պտղատու ծառեր , բանջարեղէն , աւելի արջառներ , և աւելի բարեկեցութիւն պիտի ունենանք , վասն զի երկրագործութիւնը երկրի մը հարստութիւնն է :



7. ՕԳՏԱԿԱՐ ՏՈՒՆԿԵՐ

Օգտակարը , հաճոյականիս հետ միացնենք :

Մ. — Քեզ խոտացոյ օգտակար տունկերուն վրայ խօսիլ . և այս օրէն սիրեալ կը կատարեմ խոտումն : Եթէ աղէկ ուշադիր լինիս , կրնաս այս խօսակցութենէն օգուտ քաղել :

Ս. — Ամենայն սիրով , սիրելի մայրս :

Մ. — Տունկերը իրենց օգտակարութենէն զատ կրնան նաև գործածուիլ անտրի , ճարակ , բժշկականութեան , հիւսելու , ներկելու համար ալ :

Մտանքի գոանկերը անոնք են որ կը սնուցանեն , ինչպէս է ցորենը , գեղմաննը , և այլն :

Ճարակի գոանկերն են խոտը ճարական առևոյրը և այլն : Բժշկական գոանկերն են բժիշկները կը գործածեն ինչպէս է , վերստորը գործը և այլն :

Հիւսելի գոանկերն կտու և շարժասեռ կը

շինուի , ինչպէս են կանկը , վաշտ , բանակը , և այլն : Ներկաբեր գոանկերը կը ծառայեն ներկերու համար , ինչպէս է արմուշ , գորմը , ալժարին :

Ս. — Ալժարին կը ճանչնամ , անիկայ դեղին գոյն մը կուտայ :



ԳՐԲՈՒՄ

Մ. — Կրնանք յաւելուլ նաև փայտը որ մեզ կը տաքցընէ , անով մեր տանց տախտակամած , դուռ , կարասի և այլն կը շինենք . կտուրու նաւերու և ուրիշ բաներու ալ կը գործածուի , գիւղերուն մէջ , ցուրտի և ցեխի համար ամենէն աղէկ հողաթափները փայտէ են , յորմէ ամէն տարի հազարաւոր զոյգ կը շինեն :

Վերջապէս փայտի ածուխով է որ ընդհանրապէս մեր խոհանոցին կերակուրները կը աւարցնենք :

Ս. — Քիչ մը առաջ ինձի ըսիր թէ այս խօսակցութենէն միշտ օգուտ պիտի կարենամ քաղել այնպէս չէ՞ մայր :

Մ. — Անշուշտ , ինչո՞ւ համար չի պիտի ստրվիս ճանչնալ բուժիչ տունկերը այսինքն քեզ ժըշկական գոանկերը :

Ս. — Աւելին չեմ ուզեր :

Մ. — Դու ինքդ պաշար մը պիտի ընես և խնամօք զանոնք արկղի և որոշեալ պարկերու



մէջ պիտի կարգադրես, տնական դեղարան մը պիտի ունենաս, զոր նախատես մայր մը պէտք է միշտ իւր ձեռաց տակն ունենայ:

Ս. — Այո՛, մայր, վաղուքնէ պիտի սկսիմ, այնպէս չէ՞:

Մ. — Առիկաց արդէն ըսի: Առաջին կարգին մէջ կրնաս նշանակել քողովուրդէն, վարձի կաշուէն, եղևնիէն և մանուշակէն, ասոնցմէ աղէկ օշարակ կը շինուի շաքարօղիի տեղ. — մայրերը այս բոլոր բաներով շինուած քաղցրահամ աղէկ կը ճանչնան:

Հիմա դանք կուրծի ծաղիկն, որուն օշարակը կը դործածուի անամարսութեան դէմ, յետոյ վարձի, որուն չորցած տերեւներէն աչքի համար աղէկ ջուր մը կը շինեն, վերջապէս խաւիչէն ծաղիկն շինուած օշարակը կը դործածուի ցաւերը ամբարշտու համար:

Ուրիշ շատեր ալ թէև կան, բայց ես այժմ միայն ամենէն դործածականները ըսի քեզի:

Ս. — Միւսներն ալ վերջը պիտի սորվեցընես այնպէս չէ՞, մայր:

Մ. — Այո՛, բայց ամէնը այսչափ չէ, պէտք է գիտնալ թէ, ո՞ր բոյսերն են փաստօրէն, վասն զի տունկեր կան որ խաւիչ են, ինչպէս է

չնդեղը, որուն ծաղիկները շեփորուկի նման են, և որչափ որ գեղեցիկ են, այնչափ ալ խարոյ են, ասոնք որ կարուսի կը նմանի, քաղցրը որ պարակէզներու մէջ կը մշակեն Գոթիկ անուամբ ասիկորով այն գեղեցիկ կապոյտ կառքը որ կը քաշեն երկու պղտիկ աղաւնիներ, և որուն Ասորիան կոչ կ'ըսեն: Մենք երբէք անոնցմէ չի պիտի ժողվենք, անոնք երբէք մեր դեղարանին մէջ չի պիտի մտնենք, թէպէտ և բժիշկները զանոնք օգտակար կերպով դործածած լինին: Մենք այն գործը մեզմէ աւելի գիտուններուն կը թողունք, այն է ճշմարիտ դեղադործներուն, որ մասնաւորապէս ուսած են դեղեր պատրաստելը: Սակայն պէտք է որ զանոնք աղէկ ճանչնանք, որպէս զի ըզմեզ զնասող պատահարներէ զգուշանանք, որք զժբաղդաբար շատ յաճախ կը պատահին:

Ս. — Հարկաւ քու փորձառութիւնդ այդ մասին ինձ պիտի անաջնորդէ:

Մ. — Այո՛, քիչ օրէն զքեզ փաստօրէն պարտեալ պիտի տանիմ, այն բուրաստանը, որ որոշուած է տնկաբանութիւն սորվելու համար: Դու հոն շատ մը գոյներու յատկանիշ եղող պղտիկ ցանկերը պիտի տեսնաս, որոնք առն





Կերուն վրայ դրուած են ուսանողներուն ցուցուներու անոնց յատկութիւնները :

Կարէր գոյնը կը ցուցունէ բժշկական տուն, Կերը, կանաչ՝ աննդականները, կարգաւ՝ արհեստի մէջ օգտակար եղածները, Կերէն՝ զարդի տունկերը, Կեր՝ թունաւորները և վնասակարները :

Ս. — Մայր, ես հոն անոնց աղէկ ուշադրութիւն պիտի ընեմ :

Յ. ԵՐ ԿՐ Ա. Գ. ՆՏԻՆ Վ. ՐԱՅԻ ՏՆԿՈՑ ԲԱՇԵՈՒՄԸ

Վեանքը ամեն ուրեք տարածուած է, բայց կիսմայից համեմատ կը տարբերին :

Ս. — Մայր, երկրի վրայ ամէն տեղ տունկ կայ, օրինակի համար բեւեռները, որ այնչափ ցուրտ է :

Մ. — Ձիւնին տակ, սառուղեալ ովկիանսին մէջ բոյս չկայ : Բայց եթէ հիւսիսային բեւեռէն դէպի Լափոն, Իսլանդա, Ռուսիոյ և Շուեթի հիւսիսային կողմը երթաս, նախ պիտի տեսնաս մամուրներ, լուրեր, յետոյ կանաչեալ և ռետնաբեր ծառեր շնչի, եղևնափայտ, որք խիստ ցուրտ կլիմաներու կը դիմանան : Ճերմակ ցաւին բեւեռին կողմը բաւական կը բարձրա-

նայ, կանաչ հիւսիսային 60 էն անդին չ'անցնիր, բայց շատ սիւնայեղ, ինչպէս գարին և վարսակը մինչեւ 0° 70. Ի կը դիմանան :

Ըսածս կը հասկնաս այնպէս չէ :

Ս. — Այո՛ մայր, քեզ կ'ապահովցնեմ այս սրահին մէջ կախուած երկրագնաին վրայ :

Մ. — Շարունակենք. — բարեխառն գօտիներու մասնաւորապէս յեւրոպա, մշակեալ անկոց մէջ շատ մեծ տարբերութիւն կայ. ցրեմուտ արքի, արքադուր, ինքնուրուշ, արքիւն, որ Դամասկոսի շրջականերէն Գողիա բերուած է պատուաստով Կերէն, Պարսկաստանէն, Չեռնի Հայաստանէն, Կերէն բնիկ է, զոր մեր նախնիք շատ աղէկ կը ճանչնային ընդհանրին, կանին, ցրեմուտ, Կերէն մեկտու Կերէն, Կերէն, ինքնուրուշ, որք հարաւային կողմը միայն կ'ապրին, մեզի օտար են :

Ս. — Ասոնք ամենն ալ կը ճանչնամ :

Մ. — Այրեցեալ գօտիէն շատ քիչ կ'եղլայ որ դրեթե Ասիական կերակուրներուն մեծ մասը կը կազմէ, հոն ընդհանրապէս համեմի վերաբերեալ տունկերը կը մշակեն, ինչպէս է պղպեղ, հնդկապղպեղ, արքապղպեղ և այլն :

Ս. — Ա՛հ, այն անպիտան կարմիր և դօր զոյն փոշին որ մարդու լեզուն այնպէս սատիկ կ'այրէ : Ա՛հ, որչափ կծու է :

Մ. — Աղջիկս այն կծու համը, ինչպէս որ դու կ'ըսես, պղտիկ աղջիկներուն համար չէ



եղած . մենք իսկ անտնայմէ շատ քիչ անգամ  
կը գործածենք : Բայց այն նահանգներուն մէջ  
ուր բնութիւնը բուսուցած է և մարդիկ ալ  
զայն կը մշակեն , ատոնք ստամոքսը և ջիւղերը  
թուլացնող տաքութեան գոգոխչներն են :

Ս. — Իրաւունք ունիս , մայր , Աստուած  
ամէն բան աղէկ ըրած է : Ես տգէտ մ'եմ :

Մ. — Ափրիկէէն կ'ելլայ ընտիր տեսակ ար-  
մաւենիներ , ինչպէս են , պրճաւենին , հնդկ-ընդ-  
վեն և այլն : Ահագին պատուով . այս ծառը Ա-  
մերիկա կը գտնուի . որուն ծառայ հսկան կ'ըսեն :

Ս. — Հապա հացապտղին , որուն պատկերը  
տեսած եմ :

Մ. — Հացապտղին , սնուցիչ մեծ պտուղ մը  
ունի որ Ովկիանոսին յատուկ է :

Ս. — Այնպէս չէ՞ , ընդհանրապէս հասա-  
րակածին կողմն է որ հնդկանոց կը բուսնի և  
անկէ աղէկ տուրմ կը շինեն զոր առաւօտնե-  
րը կ'ուտեն :

Մ. — Վերջապէս հնդկանուշը երբէք մեր  
քաղաքներուն մէջ չի բուսնիր , այլ Մեքսիկո ,  
Նիւ-Իրլենդ Արևելեան կղզիները , Պրուէն-  
կէ-Մալթա կը մշակեն , և այլն և այլն : Թէ՛յը միայն Ասիոյ  
արեւելեան կողմը կ'աճի , և մասնաւորապէս  
Չինաստանի մէջ առատութեամբ կը բուսնի :  
Ս. — Արաբիոյ մէջ , նաև Արևելեան կղզիներու  
մէջ ալ շատ կը մշակեն , որ վերջի դարուս հոս  
բերվեցաւ :

Ս. — Այնպէս չէ՞ Պրաքիտիոյ մէջ Քիւն-  
մարտներ կը գտնուին , որոնց վրայ երբեմն ինձ  
խօսած ես :

Մ. — Այո՛ , աղջիկս , այն անտառները ա-  
րեւմտեան կողմը կ'ենթան : Աստիճանաբար  
բարձրացած երկիրները անշուք ծառեր միայն  
կուտան , որոնց բարձրութիւնը անդգալբար  
կը նուաղին : Ահա այս ընդարձակ երկիրներուն  
կ'ըսեն , Պարսաս (որ է հարաւային Աֆրիկայի Քիւն-  
մարտերը) ուր միայն ցած և փոքրիկ ծառերու  
խումբեր կան , և շատ ընդարձակ տեղերու  
մէջ ալ սիլվիոսներ , մարտիներ և ուրիշ անպէտ խո-  
տեր կը գտնուին :

Ս. — Ի՞նչ , անպէտ խոտ :

Մ. — Մեր երկրին մէջ այն խոտերուն այս  
անունը կուտան , որք առանց մշակութեան  
կը բուսնին , մասնաւոր Վայրի սիլվաբոյսերուն  
որ մշակուած և մեղի աղէկ հունա տուող բոյ-  
սերէն որոշուին :

Ս. — Միթէ վայրի ցորեն ալ կո՞յ :

Մ. — Այնուշա . միթէ քեզ չըսի՞ թէ բը-  
նութիւնը մեզ վայրենիները միայն կուտայ ,  
մեր դաշտին ցորենը , քարին , համարը , հին խիլառ-  
կամ անպէտ խոտերէն առաջ եկած են :

Ասորիական , Երբ—Հայաստան , Երբ—Չինաստան այս  
բոյսերը մեզ ճանչցուցած են , այն ատենուան  
յայտնած կենդանիները և տունկերը որոց նը-  
մանը այսօր տեղ մ'ալ չկայ , էլ չէ՛ ճարտարը

1262



(ուետնարեր ծառեր են) որոց նմանը այժմ չկայ, գիտնականները ասոնց քարացածները միայն գտած են :

Ս. — Ուրեմն ուրիշ նահանգներու տուն կերը և ծառերը կրնան մեր գաւառը փոխադրուիլ :

Մ. — Երբեմն, բայց միշտ կլիմայէն կախում ունի : Նոյն իսկ Գաղղիան շատ մը կլիմաներ ունի որ կ'ըտուի հոսի ճակոտեան և կրնայ այլ և այլ ծառեր առաջ բերել, ինչպէս և Հայաստան ալ ունի զանազան կլիմաներ, ուր կրնան փոխադրուիլ և ածիլ տաք երկիրներու ծառեր և բոյսեր :

Ս. — Սիրելի մայրիկ, ուսումը ձեզմով որչափ քաղցր և սրտազրաւ բան մը կը դառնայ :

Մ. — Եւ որչափ երջանիկ կ'ընէ զմարդ, այնպէս չէ՞ աղջիկս :

Ս. — Այո՛, մայր, ուսումը շատ կ'երջան կայնէ զմարդ :



ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ



1. ԳԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ

Մարդ որչափ որ բնութիւնը սորվի, այնչափ ալ կը զարմանայ հոն բազաւորած կարգերուն վրայ : |

Մ. — Այսօր Արամը մեզի հետ պիտի ըլլայ, կերևայ թէ տնկաբանութեան համար ունեցած արհամարհանքը՝ կենդանեաց համար չիպիտի ունենայ, այդ մասին շատ գոհ եմ : Մինչև որ դայ մենք կրնանք քանի մը խօսք ընել այս գասի առարկային վրայ. — Չեմ յուսար թէ կըյիշես, սիրելի Սաթենիկս, վասըն զի դու այն ատեն շատ պզտիկ էիր, երբոր Արամը իր կնքամօրմէն կենդանեաց հաւաքածոյ մը ստացաւ իբր կաղանդչէք :

Իր առաջին ուրախութեան մէջ, նախ այն նոր խաղալիքներուն շատերը դուրս հանեց և հետզհետէ կը զարմանար անոնց վրայ, յետոյ մտածեց զանոնք կարդադրել, և սկսաւ մեծ կենդանիները պզտիկներէն զտօել, յետոյ գեշատիչները խաղաղ կենդանիներէն, իրեն սիրածները շուրջը շարեց, և իրեն հա-



կապրութիւն ու վախ ազդողները մէկ կողմ դրաւ :

Վերջապէս, շատ անդամքակել շինելէն զկնի այս դասակարգութենէն շատ մը կարգերու գաղափարներ ունեցաւ, զանոնք որոշ խումբերու բաժնեց, քաղոյնները մէկտեղ դրաւ, թուղները մէկտեղ, սողացողները մէկտեղ, լողացողները մէկտեղ, զեռունները մէկտեղ, ձուկերը մէկտեղ և այլն :

Այս վերջի կարգադրութիւնը առանց վարանաց չեղաւ, ասոր պատճառը քեզ կըսեմ հիմայ, վասնզի Արամը շատ անդամ երկմտեցաւ, բայց գոհ չեղաւ մինչեւ որ իր պղտիկ ծանօթութիւնն ու ճարտարամտութիւնը ներածին չափ կրցաւ զանոնք կատարեալ կերպով կարգադրել :

Լաւ, սիրելի Սաթենիկա, Արամը բնազդմամբ այս բնական դասակարգութիւնը գտած էր : Գիտուններն ալ այսպէս ամէն բան տարակուսանօք սկսեցին : Ինչ որ ստունկերուն համար ըրած են, նոյնը ըրեր են նաև կենդանեաց համար, անոնք շատ անդամ դիտած, խորհած, կարգերու ընտանիքներու բաժնած են : Այսպէս, ցեղ կայ որ բնազդ է ինչպէս է մեր շունը, ցեղ կայ որ կարողան է որուն նախատիպը կառուն է, ասոնք ճակիւն են, ուրիշներ ալ կան որ խտտակեր են, և այլն :

Ս. — Զուկերը, թուղները, միջիւնները,

ինչ կ'ուտեն :

Մ. — Համբերէ՛, աչիկա ամենը մէկէն չեն սորվիր, ա՛հ, ահա առիկ Արամը :

Ս. — Մայր, կենդանեաց վրայ պատմած այն զեղեցիկ բաներդ մտիկ ընելու կ'ուզամ :

Մ. — Լաւ, — պէտք է նախ գիտնաս որ կենդանիները չորս մեծ ճիւղերու կը բաժնուին իրենց մարմնոյն կազմութեան համեմատ :

- 1<sup>o</sup> Ողնաշարաւորք :
- 2<sup>o</sup> Օղակաւորք :
- 3<sup>o</sup> Թուլամորթք :
- 4<sup>o</sup> Կենդանաբոյսք :

— Ողնաշարաւորք անոնք են որ մարդոց պէս ոսկրային կմախք ունին, ասոնք բազմաթիւ են :

— Օղակաւորքը ոսկրային կմախք չ'ունին, բայց միայն շարժուն օղակներ, ինչպէս մեզուն, խեցգետինը ևն :

— Թուլամորթները, ոչ ոսկոր ունին ոչ յօդուած, անոնցմէ ոմանք մերկ են խղունջի պէս, ոմանք ալ խեցիով մը ծածկուած, ինչպէս են ուլականջը (միտեէ) ոստրէն (իտարիտիլէ) խղունջը :

— Ասոնցմէ ետք կ'ուզան կենդանաբոյսերը, որոնց կեանքը գրեթէ բոյսերէն վեր չէ, ինչպէս են սպունդը, բուստը ևն :

Ս. — Ի՛նչ, սպունքը՞ բուստը կենդանի են :



Մ. — Մի զգուիր Սաթենիկս , բու բուստէ մանեակդ ծովուն պզտիկ կենդանիներուն առաջ բերած աշխատութեան արդիւնքն է : Այս անասունները հողին վրայ կը հաստատուին և իրարու վրայ ծլելով բուսային տեսակներ կը կազմեն :

Ս. — Այդ քանքը ինծի վախ կ'ազդէ , ալ չեմ ուզեր բուստէ մանեակս դնել :

ԱՐԱՄ. — Տղայ ե՞ս Սաթենիկ , ատոր վրայ այլ ևս կենդանի չկայ , հեռացած են , միայն իրենց աշխատութեան արդիւնքը , բուստը մնացած է :

2. ՃԻԻՂԱՐԱԺԱՆՈՒՄՆ. — ՈՂՆԱՇԱՐԱՒՈՐՆԵՐ

Մ. — Հիմա ալ կենդանիներուն ամենէն կատարեալներուն (այսինքն) ողնաշարաւորներուն վրայ խօսինք :

Շունդ կանչէ , կուզեմ որ մասներովդ անոր կունակը շոյախես :

Ա. — Մետօ՛ր , հոս եկ — :



ՀՈՒՆ

Մ. — Չեռքդ կունակին քոտէ՛ ի՞նչ կզդտա :

Ս. — Հանդոյցներ :

Մ. — Ճիշդ է . — եթէ կարենաս զանոնք համրել 33 հատ պիտի գտնես , այս հանդոյցները ոչէ են , անոնց շարունակութիւնը ոչնչ է : Կ'ըսուի :

Բոլոր չորքոտանիները չորս թաթ ունին , ինչպէս ձին , կովը , ոչխարը , կատուն , բոլոր թռչունները , ձկները , գորտերը սոկրէ կմախք և ողնաշարի սիւն ունին , ասոնք առաջին մեծ ճիւղաբաժանման մասը կը կազմեն (այսինքն) ողնաշարաւորք :

Մերելիներս այս մեծ ճիւղաբաժանումը հինգ գլխաւոր կարգի կը բաժնուի . զորս ձեռք պիտի ցուցնեմ , և ասոնք են :

- 1<sup>o</sup> . կաթնտուրք :
- 2<sup>o</sup> . թռչունք :
- 3<sup>o</sup> . Չեռունք :
- 4<sup>o</sup> . Գորտանմանք :
- 5<sup>o</sup> . Չկունք :

ԲՅԺԱՆՈՒՄ ՈՂՆԱՇԱՐԱՒՈՐԱՅ

ԿԱԹՆՏՈՒԿ . — ԹՈՉՈՒՆԿ

Առ կենդանիս եղած խնայողութեամբ իմար հպարտութեան եւ գեղ բնաւորութեան նշանն է :

Մ. — Կ'ըսուի , որ ողնաշարաւորներուն մէջ



ամենէն կատարեալներն են : Անոնց մէջ դըլ-  
խաւորն է Տարդը :

Ս. — Ինչպէ՛ս , մարդը կենդանեաց մէջ :

Մ. — Այո՛, Սաթեհիկ , բայց առաջին կար-  
գի և առանձին դասի մը մէջ , ասով չենք ը-  
սեր թէ մենք անասուն ենք :

Ս. — Միեւնոյն բանն է տօիկայ , զիս կը  
նուատացնէ , մարդս կենդանեաց մէջ դասա-  
կարգե՛լ :

Մ. — Ուրեմն դու Սէնթ Ֆրանսուաէն <sup>1</sup>  
հպարտ ես որ թուշումներուն « թեւաւոր եղ-  
բարքս կը կանչէր » :

Ասկէց զատ պէտք չէ արհամարհել զանոնք ,  
որք մեզի այնչափ ծառայութիւն կը մատու-  
ցանեն , և առանց որոնց մենք շատ թշուառ  
պիտի լինէինք : Մտիկ ըրէ՛ : Միայն մեր շուր-  
ջը գտնուողներուն վրայ խօսինք , եղբ՛ ոչ մի-  
այն զօրաւոր աշխատող մ'է , այլ և իր միտը  
մեզ կը սնուցանէ , կաշին մեզ ոտից աման ,  
կաշեպատ արկղ , փոկ և այլն կը լինի : Նոյնպէս  
կովը կրնամ ըսել որ իր կաթը մեզ համար ա-  
ղէկ սնունդ մ'է : Այժմ , ոչխարը , և ուրիշ  
կաթնատուներ , որոց բուրդը՝ նորը չուխայ ,  
կաղուղ կերպասներ և այլն կը շինուի : Մինչև  
անգամ խողը՝ որուն կերպարանքը տհաճելի է ,

<sup>1</sup> Ֆրանչիսկեան վանական միարանութեան հիմ-  
նադիրն է : (Մն 1182 Մահ 1226)

անշուշտ եմ որ քու որկրամարմնով թիւնդ սիրելի  
է : Յաւելունք նաև թէ այս խեղճ կենդանի-  
ներէն ոչ նուազ բան կը շահին : Հաղա՞ ձին ,  
էջը՞ , որ այնչափ խնամարհ և օգտակար է , շունք  
օրինակի համար բարեկամից Մետառը :

Ս. — Այո՛ , մայր իրաւունք ունիս , ես ան-  
խորհուրդ մէկն եմ :

Մ. — Կաթնատուաց կարգը գիւրիւն է ճանչ-  
նալը այս նշանով որ մայրերը կը սնուցանեն  
ձագերնին իրենց կաթովը : Միս կարգերուն  
մէջ նմանակերպ բան մը չկայ . ինչպէս և թըռ-  
չուններուն :

Ս. — Գիտեմ մայր , թուշումները հաւկթին  
մէջ կը սնանին : Իսկ պզտիկ դեղին սարիկս  
բաւական մեծցեր էր , երբ հաւկթէն դուրս  
ելաւ , կեղեւը պարապ էր և մայրը կտուցի  
հարուածներ կուտար :

Ս. — Բայց թուշուոց և կաթնատուաց մէջ  
երբէք նմանութիւն չկայ :

Մ. — Ներողութիւն կը խնդրեմ , պարոն  
գիտնական , թուշումները՝ այնչափ հեռի չեն  
կաթնատուներէն , որչափ որ դու կը կարծես ,  
և ասոր տարացոյցն է բնապատումներուն զա-  
նոնք անմիջապէս կաթնատուներէն վերջը դա-  
սելն :

Ս. — Սակայն , թուշումները . . .

Մ. — Բարեկամ , թուշումներուն սակարային  
հիւսուածքը նայն բաժանումները կը ներկա-



յացնեն, ինչ որ են կաթնատուներունը : Եթէ թռչունները կը թռին՝ անոր համար է որ ի բնեց ուսերուն ոսկորները կը նպաստեն թռչելուն կտրողութեանը : Բամպակը կամ թիակ կը (ուսին ետեւը գրուած ոսկոր) նեղ՝ բայց շատ երկար է, ողնաշարի սեան զուգահեռական կողմի վրայ :

Կարծածիդ չափ տարբեր չէ անոնց թռչունները մարդոց բազկէն, անոնք ունին բազուկը, ծղիկ ոսկր և մէկ ճիւղի վերածեալ ձեռք մը, որուն ետեւի կողմի եզերքին վրայ երկար փետուրներ բուսած են :

Ս. — Մայր, այդ ըսածդ շատ հետաքրքրական է :

Մ. — Տեսա՛հ մը թռչուններ շատ արագ կը թռին ինչպէս են, քանի մը գիշակեր թռչունները. մանաւանդ Արծաթն, Անգղ, Պակասը եայցն. որ դառները կը վերցնեն, Յն որ մեր ախոռի հաւերուն վրայ կը յարձակի, դաշտերուն մէջ ճագար կ'որոսայ, և իր որսը օդին մէջ բռնած կը տանի : Ծովուն մեծ թռչուններն ինչպէս է Գրեյնը (ծովու երազաթռիչ թռչուն մ'է) որ մերիկը առ ոչինչ կը համարի և ծովէն ձկներ կը վերցնէ : Վերջապէս այս գիշակերներէն ՚ի դատ, իմաստուն Միշտը յիշենք որ միջիւնները կ'որոսայ և ամառուան երկար օրերը օդին մէջ կը կենայ :

Ասիկց դատ օգտակար թռչուններ ևս կան

որք թեւ ունին, բայց երբէք չեն թռիր, ինչպէս է հաւը, ճնճողկը՝ որ այնչափ շատ կայ, թէ քաղաքի մէջ և թէ դաշտերու, ասոնք շատ հեռուն չեն կրնար թռչիլ, ահա ասոր համար է որ ձմեռները զմեզ չեն թողուր,



Յնճողկ

Մինչդեռ շատ մը թռչուններ այնքան վերջը ծովերէն կ'անցնին, աւելի տաք երկիրներ երթալու համար, և գարունը նորէն կը դառնան մեզ մօտ :

ՍՈՂՈՒՆՔ. — ԳՈՐՏԱՆՄԱՆՔ. — ՁՎՈՒՆՔ

Սողուններն ու պահուրտողները մեզ խոր ատերութիւն կը ներշնչեն : Օճը խաբուրեան նշան է :

Մ. — Չաւակներս, երէկ թռչնոց վրայ խօսեցանք, այսօր քիչ մը շուտ անցինք ողնաշարաւորներուն միւս բաժանման վրայ :

Ա. — Մայր, երէկուան դասը թէեւ ինձ այնչափ հաճելի չէր, բայց չեմ ալ արտնչար որպէս զի չը նեղանաս :

Մ. — Ո՛չ, տղա՛ս, ոչ երբէք կը նեղանամ. — շարունակենք մեր դասը : կենդանեաց դասակարգութիւնը, կրնայ



աստիճանով մը բաղաառել : Այս աստիճանին



02

վրայ ողնաշարաւորներու մէջ, պիտի հանդիպինք, թուչուններէն վար դէպքով կրնան կրամաղացող անասուններուն ինչ-

պէս է յիշ, աստեղմէ ետքն են Գորտաման, ինչպէս արջամարտը, Գորտը որք կրնան անխորարար ջրոց մէջ և ցամաքի վրայ ապրիլ : Յետոյ ձուկերը :

Մ. — Մայր, այս սողուններէն մէկ քանին մեզի ցցուր պատկերով գրքիդ մէջ :

Մ. — Ահա՛ւասիկ նախ շատ մեծ մը, ասի-



ԿՈՎՈՐԳԻՒՆ

կայ Կովորտէն է, մեծ մողէզի տեսակէն՝ որ մինչև 8 մէթր երկայնութիւն կ'ունենայ և աւելի ջրոց մէջ կ'ապրի քան թէ ցամաքի վրայ : Խիստ ջատակեր, և խիստ մեծ են ասոնք՝ Եղիպտոսի մէջ շատ կը գտնուին . Նեղոս գետին և կի-

նէի մէջ, ուր խափշիկները ասոնց արջի անունը տուեր են : Փորթուկէզի մէջ ալ Ալիսիոն կ'ըսեն : Վերջապէս Հնդկաստանի գետերուն մէջ, մասնաւոր տեսակ մը կայ, որք շատ ազեղ և ծոպաւոր են :

Ս. — Տգե՛ղ անասուն :

Մ. — Ահա՛ւասիկ կրնան, որ լաւ կը ճանչնար . յիշե՛ք՝ որոնց տարբերութիւնը մեծ է, աս հազին վշապէն և սուղը վտանգաւոր յիշե՛ք մինչև թիւնաւոր արջը, և մեր երկրին անվտանգ յիշ : Հոս չեմ յիշեր շատ տեսակ Գորտեր, և շուտով Գորտամաններուն կ'անցնիմ :

Գորտամանները երկակնորան ալ կ'ըսուին, վասն զի թէ ջրոց մէջ և թէ ցամաքի վրայ կրնան ապրիլ, ասոնք երկար ատեն սողուններուն կարգէն սեպուած էին : Ոմանք կարծած են թէ ասոնք պզտիկ ատենները ձուկի ձեւ ունին : Այս կարգին գլխաւոր անասունները սա-կաւաթիւ են . ինչպէս են Գորտը, արջամարտը և արջամարտը :

Ահա՛ւասիկ պզտիկ գորտ մը, զոր երէկ մարդ ազեղանին վրայ չ'ըտայ, ասիկայ գրեթէ կանանչ գորտ մ'է որ Կենեք կ'ըսուի : Նայե ինչպէս սիրուն և փափուկ է, իր բաց կանանչ և փայլուն մորթովը :

Մ. — Ինչո՞ւ համար իր շիշին մէջ աստիճան մը գրիլ :

Մ. — Որպէս զի ամեն օր եղանակին ինչ-



պէս բնիւր մեզ յայտնէ : Երբոր ջրին յատանը  
իջնայ անձրեւի ի նշան է, երբոր վեր ելնայ ընդ-  
հակառակը աղէկ օդի նշան է :

Ա. — Օհ, ասիկայ հօրս ծանրաչափին  
պէս է :

Մ. — Ծովերու և լճակներու գորտերը երբ  
մեծնան սեւի մօտ մութ գոյն մը կ'ունենան :  
Գորտերուն ձայնը կը ճանչնա՞ք :

Ա. — Կարծեմ թէ կրճ կրճ կրճ կ'ընեն :

Մ. — Ահա՛հա՛հա՛ գորտին մերձաւօր ազգա-  
կանն է, միայն կերպարանքը տարբեր է, մութ  
և խոնաւ ծակերու մէջ պահուելու սովորու-  
թիւնը զինքը մեզի ատելի ըրած է :

Սակայն վախկոտ, և անմաս է, մեզ ալ  
ժառայութիւն կը մատուցանէ. մեր պարտիդի  
թշնամեաց հետ կուտելով, այսինքն, պղտիկ  
խղունջները, օրդերը և միջատները ուտելով :

Արջնագորտը գիշերները միայն գուրս կել-  
լայ, ասոր ձայնը երբէք լսած էք :

Ս. — Այո՛ մայր, երեկոյին լսած եմ, զան-  
գահի ձայնի կը նմանի :

Մ. — Հիմա ալ ձկանց վրայ խօսինք :

Ա. — Մայր, քեզ խնդիր մը պիտի առա-  
ջարկեմ : Ձկները ինչպէ՞ս շունչ կ'առնեն ջրին  
մէջ, վասն զի պաղ ջրով լողանալու համար  
գետը մտած ատենա եթէ չը կրնամ ոտքի վը-  
րայ կայնիլ դուրս ջրին մէջ կրնկրմի, այն ատեն  
կըզամ որ ականջներս կը դժան և ալ բան մը

չեմ լսեր, կը կարծեմ թէ պիտի մեռնիմ :

Ս. — Բայց ձկները չեն շնչեր, վասն զի ջրոյ  
մէջ կ'ապրին :

Մ. — Կը սխալիս, աղջիկս, անոնք ամենալ  
կենդանեաց պէս կը շնչեն :

Բայց ձկանց դործարանները այնպէս շին-  
ուած են որ կրնան ջրին  
մէջ պարունակեալ օդը  
շնչել, առանց ականջ-  
ները շժարու : Իրենց վը-  
րայ եղած սրոյածեւ



ՅՈՒԿ

գործարանները, որ ականջները կը պատեն,  
կրենց թոքերն են, որնոնցմով կը շնչեն :

Ա. — Լա՛ւ, որովհետեւ անոնք ալ մեզի  
պէս ապրելու համար օդի պէտք ունին, ինչո՞ւ  
համար է որ եթէ ջրէն դուրս օդին մէջ ել-  
լան անմիջապէս կը մեռնին :

Մ. — Վասն զի այն սրոյածեւ գործարան-  
ները գործելու համար պէտք են խոնաւ լի-  
նել, և որովհետեւ օդին մէջ կը չորնան՝ օդն  
ալ չի կրնար անոնց մէջէն անցնիլ՝ շնչառու-  
թիւննին կ'արդիւրի հետեւօրար կը մեռնին :  
Այն գործարանները ջրոյ մէջ գործելու հա-  
մար եղած են և ոչ թէ ցամաքի վրայ :

Ս. — Չուկերը մէկ բանով մը դիս շատ կը  
զարմայնեն : Բա՛ջ դիտեմ որ կը լողան, որով-  
հետեւ փամփուշտ ունին, բայց ինչպէ՞ս կըր-  
ան զիրենք ջրին վրայ բռնել, և այնչափ շուտ



վեր վար ելլալ իջնալ :

Մ. — Ուրեմն դու ձուկ մաքրել երբէք չես տեսած զոր կը պատրաստեն երեւու համար :

Ս. — Ներէ՛ , մայր խո՛ , տեսած եմ :

Մ. — Լա՛ւ , ուրեմն դիտա՞ծ ես որ օդով լի անօթ մը ունին իրենց փորին մէջ :

Ս. — Այո՛ , այո՛ , երբեմն ինձ տուած ալ են ոտքիս տակ պայթեցնելու համար , ձեռքերն իրար զարնելու պէս ձայն մը կը հանէ :

Մ. — Այն օդով լի փամփուշտը կը ծառայէ զիրենք ջրին վրայ բռնելու , ճիշդ այն բաներուն պէս զոր լողալ չը դիտցող աղսցը թեւերուն տակը կը դնեն՝ անոնց լողալ սորվեցընելու համար :

Ս. — Ա՛յ , այո՛ կը հասկնամ , հօրեղբայրս ինձի համար անկէ երկու հատ դնած էր , անցեալ ամառ մեծ ջերմուկի մէջ լողալու համար , խոզի փամփուշտներ էին ասոնք , պրզ տիկ կապով մը իրարու միացած , անոնց մով մարդ կրնայ ջրին երեսը կենալ առանց ընկղմելէ վախնալու :

Մ. — Չուկերը վեր ելլալու համար կուռեցնեն իրենց փամփուշտը վար իջնալու համար կը ճնշեն : ճնշելով կը պղտկնան հետեւաբար իրենց տարածութեանը համեմատ աւելի կը ծանրանան և այնպէս վար կ'իջնան , ընդհակառակը փամփուշտը ուռեցնելով , ա-

ւելի կը մեծնան և վեր կ'ելլան :

Իսկ պղտկեցուցած ատենները իրենց տակը քիչ ջուր կուռնենան , և մեծցուցած ատենները շատ , ահա բոլոր գաղտնիքը :

Ս. — Շնորհակալ ենք , մայր , տուած բացատրութենէդ :

Մ. — Այլ ջիկա կը հաճիս մինչև հիմայ ողնաշարաւորներուն բաժանման վրայ խօսածնե՞րըս քանի մը բառով համառօտել :

Ս. — Ամենայն սիրով , մայր :

Ունաշարաւորները : Ողնաշարաւոր կենդանիները հինգ կարգի բաժնուած են :

1<sup>o</sup> կարգը , կաթնատուները , որ իրենց ձագերը իրենց կաթով կը սնուցանեն (ինչպէս է այժմ) :

2<sup>o</sup> կարգը , թռչունները , որ կը թռչին և օդին մէջ կապրին (ճնճղուկը) :

3<sup>o</sup> կարգը սողունները , որ կը սողան , (օձը) :

4<sup>o</sup> կարգը , գորտանմանները , որ թէ ջրոց մէջ և թէ ցամաքի վրայ կապրին (գորտը) :

5<sup>o</sup> կարգը , ձկները որ ջրոց մէջ կապրին (ձաճանը) :

Ս. — Շատ աղէկ , հիմա քանի մը դիտողութիւն ընենք ողնաշարաւորները լրացնելու համար :

Մենք ըսինք թէ , առաջին կարգի կենդանեաց յատկութիւնն այն է , որ մայրերը կաթ կուտան իրենց ձագերուն , ասկէց երա՞ծ



է, կանոններ անունը պէտք է գիտնալ նաև որ անոնք կենդանի կը ծնին, անոր համար կենդանիներն ալ կ'ըսուին :

Ա. — Այո՛, մա՛յր :

Մ. — Միւս չորս կարգերը յո՞ւսուին, վասնզի մայրերը կածեն հաւկիթի կերպարանօք : Այս հաւկիթները կ'արգիւնաւորին շատ ու քիչ երկար ժամանակուան մէջ : Այսպէս թռչունները, սողունները, գորտամանները և ձկները յո՞ւսուին :

Վերջի երկու կարգերուն մէջ, էգերը ամեն տարի հաղարաւոր մանր հաւկիթ կ'ածեն՝ ցորենի հատի պէս : Անշուշտ ձուկերուն փորին մէջ տեսած էք :



ԵՐԿԱՆԱՆԻ

Ա. — Այո՛, այո՛ մեք զայն տեսած և կերած ալ եմք որուն ձկնկիթ կ'ըսեն :

Մ. — Վերջապէս, ողնաշարաւոր կենդանիներուն մէջ միայն կաթնատուները, և թռչունները տաք արիւն ունին, իսկ վերջի երեք կարգերուն արիւնը սառն է :

Ա. — Այո՛, ասիկայ աղէկ միտք պահենք, գորտերը, օձերը, մողեղնիները, կրիաները, ձկները սառլ արիւն ունեցող անասուն են :

Յ. ձԻԿԱԲԱԾԱՏՈՒՄԵՆ. — ՕՂԱՆԱԻՈՐԲ

ՅՕԴԱԻՈՐԲ. — ՈՐԴԵՐ. — ՁԻՆԵՐ. — ՄԻՋԱՏԵՐ

Ձանճը ի՞նչ է տգետի մը համար, ոչինչ, իսկ զիտունի մը համար՝ սքանչելիք մը :

Մ. — Արա՛մ, եթէ թռչող ճանճ մը բըռնես՝ անոր վրայ կը խօսինք :

Ա. — Ա՛հ, ահաւասիկ, բռնեցի հատ մը :

Մ. — Գիտէ սղան, որ այս պզտիկ կենդանւոյն մարմինը առանց ոսկրի՝ այսինքն առանց ողնաշարի է. պարզապէս յօդերէ կազմուած է, ասկէ ելած է յօդաւոր անունը, թեւերը, թաթերը, նոյն իսկ գլուխը դիւրաւ կ'որոշուին : Այս գլուխը կերպով մը կուրծքին վրայ կեցած է, կուրծքին ալ փորին վրայ : Ամէն միջատներու մէջ, այս երեք մասերը որոշ են, գլուխը՝ կուրծքը, և փորը : Թաթերը երկու կողմը զոյգ զոյգ կապուած են : Միջատները իրարմէ իրենց արտաքին ձեւովը և հագուստովը կը տարբերին :

Անոնք երբեմն շատ կոկիկ հագուած են : Նայէ, այս պարտիզին մաշկաթե միջատը՝ իր սակեզօծ հագուստովը սիրուն է, և ծառի բնիկը՝ իր մթապոյն հագուստովը, և բո՞ւր բո՞ւրստ միջին սեւ թաւիչ հագուած է :



Ս. — Այս, բայց այս գեղեցիկ միջատնե-  
րը երբեմն շատ նենգաւոր կը լինին, մանա-  
ւանդ մեղուները :


Մ. Մեղուն, աղջիկս, մեծ աշխատող մ'է,  
ինքզինք կը պաշտպանէ, երբ եր վրայ յարձա-  
կին :



ԿԵՅՈՂ ՄԵՂՈՒ

Ա. — Ըսածիդ պէս կը հասկնամ  
իր դիտաւորութիւնը, և կ'ըսեմ  
թէ պղտիկ աղջիկներուն համար լա-  
օրինակ մ'է. մայր, կ'ուզեն հիմայ  
ալ իր աշխատութեան վրայ խօսիլ :

Մ. — Ամենայն սիրով : Մեղուներուն թա-  
գուհին այսինքն մայրերնին երբոր իր գաղ-  
թականութիւնը որ և իցէ տեղ մը հաստատել  
ուզէ, արունները և գործաւորները անոր կը հե-  
տեւին . մայրերնին ուր որ կենայ իրենք ալ հոն



ՄԵՄԱՏԱՂ ՄԵՂՈՒԵ

կը կենան, և նոր գաղ-  
թականութիւն մը կը  
կազմեն : Մէկ մեղուի  
պարբի մը մէջ 6-7 հար-  
րիւր արու և ութը տա-  
սը հազար գործաւոր-  
ներ կը լինին, որ փե-  
թակին մէջ մանելով իւրաքանչիւր ոք իր գոր-  
ծը կ'սկսի, սասնց աունը շինուած է մեղրա-  
ման անջրպետներով զոր քիչ մը վերջը մեղ-  
րով կը լեցնեն :

Իւրաքանչիւր մեղրախորիւսի կազմուած է

երկու կարգ խոռոչներէ կամ բճիճներէ, որոց  
ծակերը իրարու հետ հաղորդակցեալ են,  
այնպէս որ մեղուները կարենան փեթակին ա-  
մէն կողմը պարտել աւանց ետ դառնալ ափաղ-  
ուելու :

Ա. — Այն խոռոչները կամ բճիճները ի՞նչ  
ձեւ ունին :

Մ. — Վեցակողմեան հաստածակողմի ձե-  
ւ ունին : Մէկ մայր մը հազարաւոր հաւկիթ կածէ,  
որ նոր մեղուներ կը լինին, մայրերնին իբրեւ  
մեծ ընտանեաց մը գլխաւորը կը պատուի կը  
պաշտպանուի : Երբոր խոռոչները լրանան մայ-  
րը բազմաթիւ գործաւորներու ընկերութեամբ  
կ'երթայ ամէն խոռոչի մէջ մէկ մէկ հաւկիթ  
ածելու, իրեն հետեւողները, այն աստի իր  
ճաշը կամ սնունդը կը պատրաստեն, ասիկայ  
խանդաղատական բան մ'է :

Ոմանք վրան կը լիզեն կը մաքրեն, ո-  
մանք կը սնուցանեն զինքը, ոչ ոք զինքը կը  
պաշարէ և կը նեղէ : Այն բազմաթիւ հաւ-  
կիթները որ կ'ածէ, 6 էն մինչեւ 12 հազար  
կրնայ լինել, այս բանը երեք շաբաթ կը տե-  
ւէ :

Ածելէն երկու օր վերջը թրթուրը հաւ-  
կըթէն կեղայ, մէկ սնուցիչ մը՝ օրը քանի մը  
անգամ անոր ուտելիք կը բերէ, և 5-6 օր կը  
չարունակէ, յետոյ սնուցիչը խոռոչը կը գո-  
ցէ, և թրթուրը իր պատեանը կը շինէ, հոն



կերպարանափոխ կը լինի և զինքը կը կատարելագործէ : Երեք օր վերջը, թրթուրը պատեանի մէջ փակեալ որդի վիճակը կ'ունենայ, աւթ օր վերջը պատեանին մէջ փակեալ որդը մեղու կը լինի :

Ս. — Մայր, որչափ հետաքրքրական և յանկուցիչ է :

Մ. — Անցեալ բաները աղէկ յիշէ՛, զաւակս : Այն խոռոչին կափառիչը վեր կը բարձրանան,



ԹԲ 207 ՄԵՂՈՒ

մեղուն գուրս կելայ, իր ցնուցիչները կը փութան վրան լցել և մաքրել, մնացեալը արեւը կը նէ : Ասոնց հարիւրաւորը մէկ տեղ խոռոչէն գուրս կելան,

այն օրը մեղուներուն համար մեծ տօն է :

Այն պզտիկ խցիկները որ երեսի վրայ մը նացած էին, անմիջապէս փութալան գործաւորները կ'սկսին մեղրով լեցունել :

Բայց պէտք է ըսել որ, այսչափ ժրջան և այսչափ իրենց մօրն ու անոր պզտիկ սաներուն հոգածութիւն ընող գործաւորները շատ խնայող են, իրենց այս անտեսութեան հօգին երբեմն զիրենք մինչև անգթութեան կը տանի :

Արունները շատ կ'ուտեն և չեն աշխատիր, ոչ մեղր կը շինեն և ոչ մով :

Զմեռը կը մօտենայ, ծաղիկունք իրենց մը նաք քարեաւը կ'ըսեն ուրկէ մեղունները մեղր

և մով շինելու նիւթ կառնէին, հետեւապէս պաշարները իրենց քիչ կ'ուզան, այն ատեն գործաւորները, առանց գթալու՝ ծոյլ արունները կապանեն, ասիկայ ճշմարիտ կոտորած մ' է :

Ա. — Ա՛հ, այս վերջինը ինձ անհաճոյ է, մեղուաց պատմութիւնը սքանչելի կը լինէր առանց այս կոտորածին :

Ս. — Մայր, աւելի կը սիրեմ որ մեղի թիթեռնիկին վրայ խօսիս :

Մ. — Այո՛ աղջիկս, խօսինք այն սքանչելի միջատին վրայ, որուն գեղեցկութիւնը թեւերուն գոյներուն վրայ կը կայանայ :

Ա. — Այս գոյները ո՛րքից են :

Մ. — Այս գոյները թեփոտ փռչիւնք են որ թեւերուն վրայ կը գտնուին, յորմէ շատ



ԹԻԹԵՐՆԻԿ

փայլուն երեոյթ մը առաջ կուգայ : Թիթեռնիկները չորս թեւ ունին՝ մաշկազարդ և խաչածեւ, ծծելու համար ալ բերան մը ունին : Ոմանք փող մը միայն ու

նին, որով ծաղկանց բաժակէն զիրենք սնուցանող հիւթը կը ծծեն :

Ս. — Ուրեմն այս գեղեցիկ միջատները որկրամոլ են :

Ա. — Միշտ այնպէս գեղեցիկ չեն : Թի-



Թեռնիկները շատ զարմանալի կերպարանափոխութեան մը ենթակայ են :

Իրենց կեանքը երեք տարբեր նկարագիր ունի : Այս գեղեցիկ միջատը որուն վրայ գուկը զարմանաս և որ ծաղիկէ ծաղիկ կը թռչի , և որ բուն ծաղիկներէն աւելի փայլուն է , այս թիթեռնիկը առաջ թրթուր մ' էր :

Ս. — Թրթուր մը :

Մ. — Այո , տղեղ թրթուր մը , բաւական ժամանակ իր սնունդը գտնելու համար սողալով կեանք անցընելէն ետքը թրթուրը կ'առանձնանայ , և իրեն շատ փափուկ մետաքսէ ծածկոց մը կը շինէ , խիստ շուտ , և տեսակ մը մոմապատով կը ծածկէ որ ջրէ անթափանց կը լինի : Ասիկայ պտուղի մը կը նմանի , իսկ իրեն համար գերեզման մ' է , ուր կը քնանայ և վերջը թիթեռնիկի կերպարանօք կարթննայ : Այս , գեղեցիկ օր մը թրթուրը թեւաւոր կարթըննայ , այն ատեն նոր կեանք մը կ'սկսի : Այն սողացող շատակեր և տղեղ ա՛ստունը չէ : Թիթեռնիկը կը թռչի օդին մէջ , ամենէն մեծ ծառերուն վրայ , և իր պայծառ գոյնը արեւուն մէջ կը փայլեցնէ :

Ս. — Շերանս ալ թիթեռնիկ կը լինի այնպէս չէ :

Մ. — Այո՛ , անիկայ հաւի պէս կը ծնի , ցորենի հատի պէս հաւկիթէ մը կ'ելլայ , երաժին պէս ուտել կ'սկսի իր գոյութիւնը ե

րեռունը չորս օր կը տեսէ , հետզհետէ ախորժակը կը շատնայ , խիստ արագ կը մեծնայ , շերասը չորս անգամ մարմը կը փոխէ , ասոր համար այս պղտիկ կենդանւոյն զբաղողները այս փոփոխման շերասի փոշի կ'ըսեն , մարթափոխութեան ատեն կը թմրին ալ չեն ուտեր , բայց մորթափոխութենէն ետքը ախորժակն կը կրկնապատկի , թիթեռներուով կը սնա



նին , որոշ քանակութեամբ կ'ուտեն , և կերած ատենները ձայն մը կը հանեն որ յորդահեղեղ անձրեւի ձայնին կը նմանի :

Ս. — Մայր , կը պատմես թէ ինչպէ՞ս կը շինեն իրենց մետաքսը :

Մ. — Իրենց չորրորդ մորթափոխումէն ետք է որ մետաքս շինելու հիւթը կը պատրաստեն , ալ ժամանակը հասած է , մարմինը կը ճերմակնայ և կը կակղընայ , բերնէն թել մը կ'ելլայ որ նախ ճիւղի մը վրայ կը հաստատէ , յետոյ տունը կը կաղմէ : Շարունակ ինքն իր վրայ գառնալով , և տատանելով ճախարակի պէս իր վրայ կը գլորի , սխմած շրթունքներէն մետաքսի թելը կը հանէ : Մետաքսը միջատին ըրծային գեղձերուն արդիւնքն է , այսինքն կե



բաժ տերեւին արգասիքն . շերասի բնութե-  
նէն կախեալ է մեռաքսին դեղին կամ ճեր-  
մակ լինելը :

Ս. — Երկար կը մանէ՞

Մ. — Շատ անգամ 600 մեթրէն աւելի եր-  
կար , այս աշխատութիւնը չորս օր կը տեւէ ,  
անկէց վերջ դադարէ լրացած է : Այն ատեն  
պղտիկ հաւկիթի մը կը նմանի , բողբոջին թե-  
լով փաթթուած և խիստ փայլուն ու շատ բա-  
րակ , երբեմն անոյշ դեղին կը լինի , երբեմն  
յատակ ճերմակ : Շերասը 18-20 օր այսպէս  
բանտարկուած կը մնայ , և միշտ կը քնանայ ,  
ու թիթեռնիկի կը փոխուի : Այս ժամանակէն  
վերջ միշտը երարտադրած հեղուկովը պատ-  
եանին այն մասը կը կակղցնէ կամ կը թրջէ ,  
զոր ծակելով դուրս պիտի ելլայ : Այն ատեն  
դիտովը այն խոնաւ կէտին կը զարնէ , պատ-  
եանը կը պատուի և թիթեռնիկը դուրս կե-  
լայ :

Շերասի թիթեռնիկը գեղեցիկ չէ , անի-



շերասի թիթեռնիկը և զոնիթը  
կայ մեծ , մազաւ , կարճ , ճերմակէկ , միով

քանիւ տղեղ է , 10-20 օր միայն կ'ապրի և  
հաւկիթ ածելէն ետք կը մեռնի , սակայն կեր-  
պարանքէն զոռւելու չէ : Մէկ էդ մը 500 էն  
աւելի հաւկիթ կ'ածէ :

Այս պատմութիւնը լրացնելու համար յա-  
ւելունք նաեւ թէ թիթեռնիկին դուրս ելլա-  
լու համար պատրած մեռաքսը բողբոջին կը  
կորսուի , ասոր համար իրեն խնամատարները  
կը ջանան որ շատ դուրս չելլայ , որպէս զի  
անխոց պատեաններ ունենան , ասոր համար  
պատեանները եռացեալ ջրոց մէջ կը լեցնեն ,  
ուր շերասը կը մեռնի , միայն սերմ առնելու  
համար քանի մը հատ կը պահեն :

Շերասի մշակութիւնը շատ օգտակար ար-  
հեստ մ'է որուն շնորհիւ շերասի կ'ըսեն :

Ս. — Ուրեմն ունեցած կապոյտ շրջազգեստս  
շերասին արդիւնքն է՞

Ս. — Օ՛հ , Սաթնեիկ կը կարծես թէ կա-  
պոյտ շերաս կայ :

Ս. — Ա՛հ , ոչ , գիտեմ որ ներկած են :

Մ. — Փութանք ժամանակը ոչ է՞ շատոնց  
ի վեր է որ զոնիթը վրայ կը խօսինք :

Տակաւին երեք կարգ յոգաւոր կենդանիներ ալ  
կան , բայց անոնք նուազ օգտակար են , ընդ-  
հանրապէս տղեղ կենդանիներ են :

Միջատներէն ետք հազարամեայները կուգան  
յետոյ ճանաչելու . անոնց մէջ բաւական է մի-  
այն կարէն յիշել , և յետոյ երեւոյթները որ քեզի



առաւել հաճելի է. գիտունները այս կարգին



ՍԱՐԳ ԿԱՅ ՄԱՍՈՒԿ



ԻՍՏՅՈՒՆԵՐ

մէջ կը գնեն խեցեփեր և ֆոփեր խեցեփեր :

Ա. — Ապրին խեցեփերները, կորսուն մամուկները նոյնպէս և կարիճները :

Ս. — Ես խեցեփերներ աւելի նախամեծար կը սեպեմ :

Մ. — Որովհետեւ դուք այդչափ հակառակ էք, անոր համար կուզեմ մէկդի թողուլ որդերու կամ ճճիներու խումբը, այսինքն ազրուկները, որդերը, միւս գարշելի միջատները որ երկրորդ ճիւղին վերջի մասը կը կաղմեն :

4. — Գ. ՃՈՒՂ ԱՅԱԺԱՆՈՒՄ. — ԹՈՒՂԱՍՈՐԴՔ

Ուրիշ բռնէ կարծող ինքն է բռնուած :

Մ. — Մշտեմ այսօր այնպիսի կենդանեաց

վրայ պիտի խօսինք, որք ոչ ոսկրային հիւսուածք ունին, ոչ օղակ, այսինքն Բուսաբաններու վրայ, ասոնք որոց վրայ արդէն քեզի ըսի : կակուղ և անձեւ է ախներ են, ասոնցմէ ոմանք մերկ կ'ապրին (ինչպէս խղունջը) ոմանք խեցիմ'ը ունին պարզ կամ կրկնակ ինչպէս (ոստրէն) :



ԻՊՈՒՆԸ


Ս. — Ես ոստրէին պարզ կերպարանքէն կը զղուիմ, Այն ու ասորէ ին առակը ըսելէս իվեր ինձ այնպէս կը թուի թէ մուկը կը մօտենայ իր կնճիթը կ'երկնցնէ և ոստրէն մէկէն 'ի մէկ կը դողուի, ինչպէս որ լաֆօնթէն ըսաւ «այն բռնուած է որ կը կարծէ բռնել» ոստրէն կեղծաւոր խաբեբայ մ'է :

Ա. — Բայց այս բոլոր կենդանեաց պատեանը ինչպէս կը կաղմուի, ինչպէս կը մեծնայ, ըսէ մեզի :

Մ. — Յաջորդաբար իրարու վրայ դրուած խաւերով կը մեծնան : Այս իրարու վրայ դրուած խաւերը, տարրոշման մը արդիւնքն է զոր այս կարգի կենդանիները միայն կարող են առաջ բերել այն արագ խաւերը կը կարծեն ամենէն պզտիկ որովհետեւ ամէն մէկ նոր խաւ որ ներսի կողմէն կ'աւելնայ կանցի նախընթացէն այսինքն ներսի խաւն, այնպէս



որ ամենքն ալ այս կերպով մեծնալով, խեցին աւելի կը թանձրանայ :



ՈՍՏՐԷ ՔԱՅՈՒՄՆ

Ա. — Ուրկէնց կուգան այն գեղեցիկ գոյները :

Մ. — Այն գոյնը իրենց մորթէն արաջ կուգայ :

Ս. — Ոստրէն ուրկէ՞ կ'որսան :

Մ. — Մովերուն՝ ժայռերուն մէջէն և ծովեզերքէն :

Ս. — Կարգացած եմ որ մարդարիտը ոստրէին մէջէն կը գտնեն, ամէն ոստրէի մէջ ալ կայ :

Մ. — Մարդարաւոր ոստրէն Հնդկային ծովերէն կ'որսան, մասնաւորապէս Սէյլանի գոյնէն որ շանաձկանց մէջ շատ խորը պիտի քրթան զայն գտնելու, ուստի այս որսորդու-

թիւնը շատ վտանգաւոր է : Մարդարիտները գնտաղներու պէս են և ստատիւ անոյշ գոյն մը ունին, երբեմն խեցիին փակած են, երբեմն չեն : Մարդարիտները շատ սուղ են իրենց մեծութեան, գոյնին, ձեւին համեմատ. փարիզի ֆէ փողոցին գոհարավաճառները շատ անգամ խիստ աղէկ մարդարիտներ կ'ունենան հոն խեցիի մը մէջ երկու հատ մարդարիտ կայ որ 2500 Քրանք կ'արժէ :

Ա. — Ահաւասիկ երկու հատ մարդարիտ որ այոջա՞փ թանկագին են :

Մ. — Աղջիկս վաղը վերջին մեծ ճիւղաբաժանումը պիտի կարդանք :

Ե. Դ. ՃԻՒՂԱԲԱԺԱՆՈՒՄՆ. — ԿԵՆԴՈՆԱԲՈՅՄԹ

Մ. — Ահա կենդանեաց ամենէն ստորին մասին հասանք, այսինքն կենդանիներուն, որ չորորդ ճիւղաբաժանումը կը կազմեն : Ասոնք խիստ անկատար կենդանիներ են, ծովուն տակը կը բուսնին, շատ տարբեր և օտար կերպով մը :

Շատերը դուրսէն աւելի բոյսի կը նմանին քանթէ կենդանիի, ոմանք կարծր և փշոտ պատեան մ'ունին, ինչպէս ծովային որուն որսորդները ծովա շափածակ կ'ըսեն, շագանակի պտուղը պատուղ փշոտ կեղեւին նմանութիւն ունենալուն համար :



Ոմանք ծաղկի կը նմանին ինչպէս սաղաթեր  
պէ կամ ծովասղաթը, ծառայեցանք կամ ծովադուռը :



ԱՐՏՆԱԿԵՐՊ

Ա. — Կամ լաւ եւս է ըսել զիս վախցնե-  
լու համար :

Ա. — Իսկ ծովապաւտը ընտանեցման  
պարտիզին տւազանին մէջ շատ կը գտնուի ,  
ստուգիւ մարդ կրնայ ըսել թէ անոնք ջրին  
տակը բուսած ծաղիկներ են , երբ անոնց սի-  
րուն ձեւերը և հարուստ գոյները տեսնայ :

Մ. — Դեռ բուստը կայ որուն վրայ մենք  
արդէն խօսած ենք , ասոնք պողիպոսներու  
կոյտեր են , որ տաք երկիրներու  
ծովերու մէջ ժայռերու և կղզ-  
ղիներու ձեւով իրարու վրայ կը  
կուտակին : Վերջապէս սպուն-  
գըն ալ յիշենք , որ բուստին պէս  
անասնիկներու արդիւնքն է , ու  
րոց պատմութիւնը դեռ ապէկ  
մը գիտցուած չէ :



ՅՈՒՍ

Ե. ԱՏԱՄՆԵՐ. — ԱՏԱՄՈՒՔՍ

Ս. — Մայր , երբէք գիտա՞ծ ես , թէ մեր  
շանը ահւաները որչափ գեղեցիկ են , միթէ՞  
անոր ահւաներն ալ մերինին պէս շինուած է :

Մ. — Այո՛ , աղջիկա , ճիշդ մերիններուն  
նման շինուած է , ինձ մտիկ ըրէ :

Մարդիկ և կաթնաու կենդանիներէն շա-  
տերը երեք կերպ ահւայ կ'ունենան :

1. Հարմուղէ՛ բերնին առջեւի կողմը վերի և  
վարի ծնօթներուն վրայ չորսական հատ : Դի-  
տէ՛ եզրօրդ ահւաները և ըսէ ինձ :

Ս. — Շատ աղէկ մայր :

Մ. — Այս չորս հատանողները կը կտրեն :

2. Գիշտել կամ կողմնական ատամունք՝ չորս  
հատ են : Ամէն մէկ հատանողներուն քովերը  
երկերկու հատ :

Ս. — Այո՛ , կը տեսնամ հատանողներուն ան-  
միջապէս քովերն են . համբերէ՛ , եղբայր , զիս  
մի՛ նեղեր :

Ս. — Մի՛ , վախնար :

Մ. — Կողմնական ահւաները կը պատրտեն  
կերակուրը :

3. Յետոյ կուգան վտրը աղայողներն , ու մեծ  
աղացողները , որոնք տանական հատ են և  
կերակուրը կը մանրեն :

Ա. — Համբեր , ու թը հատանող անիւնք ,



չորս գիշատիչ , քսան աղացող , ամէնը կ'ընէ երեսուն երկուք :

Մ. — Ճիշդ այդպէս , բայց դու դեռ ամէնը չունիս քու բոլոր աղացողներդ երած չեն :

Ա. — Հա՛ , հա՛ , իմաստութեան ատամունքը քուածները :

Մ. — Պէտք է գիտնալ աղջիկս , որ կաթընտուներուն սկռաններն իրենց մասնաւոր անդառութեան համեմատ կը տարբերին , այնպէս որ կենդանւոյն ծամելիքները միայն քըններով կրնայ գիտցուիլ թէ ի՞նչ կ'ուտեն . այսպէս այն կենդանիք որ միս կ'ուտեն (սաւիթր) կ'ըսուին անոնց աղացողները հատու են :

Այն կենդանիք որ միջատով կը սնանին (փշափայտ) կ'ըսուին անոնցն ալ սրածայր են :

Անոնք որ միրգով կը սնանին (փրփայտ) կսուին անոնց աղաները հաստատ և ուռեցիկ կըր են :

Վերջապէս անոնք որ խոտով կը սնանին , (խոտիկ) կ'ըսուին անոնց աղաները տափարակ և անհարթ են երկայնաքարի երեսին պէս :

Ա. — Կարծեմ աղացողներն են որ կերակուրը կը մանրեն :

Մ. — Ճիշդ այդպէս , անոնք շատ օգտակար են և որովհետեւ ամենէն օգտակարներն են , անոր համար երկար ատեն կը դիմանան :

Ա. — Ա՛հ , բնութիւնը որչափ նախատես է :

Մ. — Փիղերուն հատանող աղաները շատ կը մեծնան և ամուր են : Այս ժանիքնե-

րըն են որ երբեմն անհամեմատ մեծութիւն կ'ունենան որ արհեստներու մէջ գործածուելով այն գեղեցիկ փղոսկրը առաջ կուգայ :

Ա. — Շատ կը սիրեմ փղոսկրը որչափ փափուկ է երբ շոշափելու լինիս :

Մ. — Աղաներուն գործը կերակուրը մանրել է , այս գործողութիւնը ծանօտ կ'ըսուի Ծամելը շատ կարեւոր է , և կարծեմ կը հասկընաս , աղջիկս : Ամեն գործարան իր աշխատութիւնն ունի , զոր բնութիւնը որոշած է ստամոքսը կը նեղուի եթէ չը ծամուած կերակուրներ ընդունի . ընդհակառակը հանգիստ կը լինի եթէ աղէկ ծամուած կերակուրներ ընդունի , ուստի պէտք է որ ինքզինքնիդ վարժեցնէք աղէկ ծամելու , եթէ կուղէք աղէկ ըստամոքս մ' և աղէկ առողջութիւն մ' ունենալ :

Ա. — Բայց ըսէ , մայրիկ , թռչունս ինչպէ՞ս կը մանրէ այն հատիկները , որոնցմով կը սնանի , անշուշտ չի կրնար ծամել , վասն զի աղացչունի :

Մ. — Տղաս , նախ թռչնոց կաուցները եղջերային գոյացութիւն մ' ունին որ շատ կարծր է , այնպէս որ կարող է հատիկներուն կեղեւը հանել , և մեծ կտորները մարել : Դիտէ՛ երբ ճնճողկիդ նուշ մը տաս , կը ջնայ մանրել իր կաուցովը : Ասկէ զատ թռչունները երեք ստամոքս ունին որք ի՞նչ կ'ըսուին . ասոնց



երկրորդը՝ որ մասնաւոր կազմութիւն մ' ունի, կարծր և մտտ պարկի մը կը նմանի, այնչափ զօրաւոր է որ ակռայի պաշտօն կը կատարէ, այսինքն հատիկները իրարու քսելով կամ շըփելով կը մանրէ :

Ս. — Մեր ստամոքսը ինչպէ՞ս շինուած է :

Մ. — Մարդուն ստամոքսը դնդերաւոր պարկի մը պէս է, վասն զի, ինչպէս որ ամէն տեսակ կենդանեաց ակռաները կը տարբերին իրենց կերակուրին համեմատ, նոյնպէս նաեւ իրենց ստամոքսը՝ ուր կը կատարի կերակուրներու պատրաստութիւնը՝ կենդանւոյն ապրելու կերպին համեմատ կը կազմուի «նոստրա» ներք, ինչպէս կովը, ոչխարը, չորս ստամոքս ունին : Խոտակեր կենդանիները ստիպուած են շատ ուտել, վասն զի խոտը բաւական չէ զանոնք սնուցանելու : Երբ կովը մարդերուն մէջ շատ ճարակած և իր ստամոքսը լեցուած է, կ'երթայ շուքի մը մէջ կը նստի՝ ժամերով կ'որոճայ : Դիւրաւ կը ծամէ իր աղացողներուն օգնութեամբը այն խոտը, որ հատանողներու վը դիզած էր իր առջի ստամոքսին մէջ :

7. ՍԻՐՏԸ. — ԱՐԻՒՆԸ

Արիւնը կեանք է :

Ս. — Մայր, բաւական ժամանակ կայ որ կը փափաքիմ՝ քեզ բան մը հարցնել :

Մ. — Հարցո՛ւր, աղջիկս :

Ս. — Կ'ուզեմ գիտնալ թէ ինչ է՞ սիրտը, որուն վրայ յաճախ կը խօսիս, և որուն բարախուճը կուրծքիս մէջ կը գտամ :

Ս. — Օ՛հ, ես դիտեմ զայն, մեծ մեծ կըր զանդուած մ'է, որ երթալով վարի ծայրը կը բարակնայ, մնալաճառներուն քով շատ տեսած եմ :

Մ. — Մարդուն սիրտը տեսածիդ չափ մեծ չէ, հազիւ կռուփի մը չափ կայ, գրեթէ առաջին կարգի դործարաններէն մէկն է, և անոր կարեւորութիւնը պիտի հասկնաս, եթէ մտածես թէ երբ անոր բարախիւնը դադարի կեանքը կը վերջանայ : Սիրտը գրեթէ ամբողջ միս է, ինչպէս որ Արամ միշտ կըսէ : Ասիկայ՝ խոռոչաւոր է, կաթնտուներու և թրուչուններու մէջ սիրտը չորս խոռոչ ունի՝ միջնորմով մը մէջ տեղէն երկու հաւասար մասի բաժնուած է, և այս կէտերէն ամեն մէկըն եւս խոտոր միջնորմով կ'ըստորաբաժնուին :

Ս. — Այս չորս խորշերուն մէջ ի՞նչ կայ :

Ս. — Կեցիլը՝, կարծեմ թէ արեւ կայ :

Մ. — Այո՛, հոն թէեւ արիւն կայ, բայց հոն չմնար, զաւակներս, ուշադրութիւննիդ ինձ դարձուցէր, Սաթենիկ դաստակդ ցուցուր, կեցիլ որ թեւիդ մէկը վեր վերցնեմ, կը տեսնաս դադատակիդ մորթին տակի կա-



պոյտ գծերը, որ ամենէն թափանցիկն են աշխարհացոյցին վրայ գծուած գետերուն կը նմանին :

Ս. — Այո՛, մայր իմ, ատենք իմ երա՛նքն են :

Մ. — Գիտե՛ս թէ ինչու համար կապոյտ կերեւան :

Ս. — Մէջն եղած արեան պատճառաւն է :

Մ. — Հիմայ, դաստակիդ վրայ բութ մատդ տեղ մը գի՛ր, ձեռքիդ զարնելը պիտի զգաս :

Ս. — Այո՛, գիտեմ ատիկայ բազկերակա է, ահաւասիկ :

Մ. — Բազկերակիդ զարնելուն պատճառն ինչ է՞ :

Ս. — Արիւնն է :

Մ. — Գիտես թէ ինչո՞ւ համար բազկերակը կը զարնէ և միւս երակները չեն զարներ :

Ս. — Այ, մայր, գէթ մոռցած եմ :

Մ. — Արիւնը բոլոր մարմնոյն մէջ կը շրջի, տեսակ մը անցքերով, որ որեւէ երեւի կը տեսին, և կենդանւոյն ամեն կողմը կեանք և մտունդ կը տանին. ասիկայ մեծ բաշխում մ'է որ սիրտը կուտայ, երբ արիւնը անկէ կելլայ՝ բայց կարմիր և փրփրած է, ներսնէրէ կերթայ, որ ասդին անդին պղտիկ ճիւղերու կը բաժնուի, և անհուն կատորբաժանի մինչեւ մեր անդամոց ծայրերը հասնի, հոն իր

տարութիւնը և կենսական զօրութիւնը աւելն յետոյ, երակներով ետ կը դառնայ դէպի սիրտը, բայց այն ատեն ո՛չ իր առաջի կենդանութիւնը և տարութիւնը ունի, և ոչ ալ մեր ըսած գեղեցիկ կարմրութիւնը, սեւ կամ երակային արիւնն է որ մորթին տակէն կապոյտ երակներով կերեւան, իսկ ներսնէրէ կարմիր են, և չեն երեւար, վասնզի անոնք երակներուն պէս մորթին մօտ չեն :

Գ. — Ուրեմն, երակային և շնչերակային արիւն նոյն չեն :

Մ. — Նոյնն է, բայց միայն առաջինը այսինքն երակայինը իր կենդանական զօրութիւնը կորսնցուցած է : Սակայն սիրտը դալով նորէն կը կենդանանայ : Վերջապէս երակային արիւնը սրտին աջ կողմի խոռոչը կը մտնէ, ուրկէ թոքերը կերթայ, հոն մեր շնչած օդին կը հանդիպի, և նորէն կը թարմանայ և անկէ սրտին ձախ խոռոչին մէջ կերթայ, ուրկէ զօրութեամբ մը կը մղուի շնչերակներուն մէջ : Ահա այսպէս արիւնը կատարելապէս շրջան մը կընէ մեր մէջ :

Ս. — Այո՛, անդադար նոյն շրջանը կընէ շնչերակներով կերթայ և երակներով կը վերադառնայ դէպի սիրտը :

Մ. — Ասոր կրօնն որքե՛րտե՛ն կա՞ շրջաբերան արեան :

Արամ, այս դավճուկէ (առաձգական խեղ)



ամանին մէջ ջուր լեցուր :

Ա. — Ահա առտիկ , մայրիկ :

Մ. — Հիմայ ասիկայ ձեռացդ մէջ սեղմէ :

Ս. — Ահ անշնորհք , դիս բողբոլիկ թըր չեցիր :

Ա. — Յանցանքն իմն չէ , ես գիտամաք չըրի :

Մ. — Ի պատիւ գիտութեան , պէտք է ներել , աղջիկս , ի վերայ այսր ամենայնի ըրածն ալ մեծ բան մը չէ , թերեւս ասիկայ քեզ յուշարար մը լինի ըսելիքներուս :

Այս առաձգական խիժէ շինուած անօթը կրնայ քեզ գաղափար մը տալ՝ արեան ինչ կերպով սրտէն դուրս ցատկելուն վրայ , որ միշտ կը սեղմուի ու կը թուլնայ , ինչպէս որ պահ մը առաջ ըրաւ Արամը , ձեռքը փոփոխակի սեղմելով ու թուլցունելով :

Ա. — Տե՛ս ահա առտիկ , մէկ երկու , մէկ երկու , մէկ երկու , ճիշտ ասիկայ սրտի բախմանը պէս է :

Մ. — Այս բախումները կը կրկնուին զարկերակներու վրայ : Գատաակիդ մէջ բախող արեանը սրտին շնչերակներով զրկած արիւնն է : — Խրաքանչիւր բախում կը համապատասխանէ այս սքանչելի գործարանին՝ ձգողութեանը :

Ա. — Մայր , ուրեմն սիրտը տեսակ մը ջրհանի կը նմանի :

Մ. — Այո՛ , տղաս սքանչելի ջրհանի մը

կը նմանի , որ շատ կ'աշխատի և քիչ տեղ կը բռնէ : Գիտե՛ս Սաթենիկ թէ մէկ վայրկենի մէջ որչափ անդամ կը զարնէ սիրտը , կամ թէ այսպէս ըսենք որչափ անդամ կը նորոգուի այս բախումը՝ զոր Արամ փորձեց դավչուկէ անօթը իր ձեռքին մէջ սեղմելով՝ նորէն նոյն բանը առաջ բերելու համար :

Ս. — Ոչ , մայրիկ :

Մ. — Ուրեմն , գիտցիր որ մէկ վայրկեանի մէջ 60 անգամ կը զարնէ սիրտը :

8. ՇՆՉՈՂՈՒԹԻՒՆ

Մ. — Արամ քիթդ բռնէ՛ և բերանդ գոցէ , կրնա՞ս երկար ժամանակ այդպէս կենալ : (Արամ նշան ըրաւ թէ չէ կրնա , յետոյ քիթը խփելով բերանը բաց , իւր շնչառութեան ճշգրտութեամբ շնչելէն ապէկ ի՞նչ կայ , ոչ ոքից) :

Մ. — Եթէ քիթդ և բերանդ ամուր մը գոցելին ի՞նչ պիտի լինէիր :

Ս. — Պիտի խլուէի մեռնելի :

Մ. — Ուրեմն շնչառութիւնը կենաց համար անհրաժեշտ է : Ի՞նչ ըրած կը լինի երբ մարդս կը շնչէ :

Ս. — Օդ կը կլէ :

Մ. — Յետոյ ի՞նչ կը լինի այն օդը :

Ս. — Կուրծքին մէջ կ'իջնայ :

Մ. — Յետոյ :



Ա. — Այլ չեմ գիտեր :

Մ. — Միթէ չնչած օդդ կը պահէ՞ս , օ՞նչ է խոր շնչառութիւն մ'ըրէ , լա՛ւ , հիմա կեցիր , կրնաս դարձեալ շնչել : (Արամ որ դէմէ կերպով եւ կարգէր , նշան ըրաւ թէ ոչ , յետոյ բարձր յայնով պտտաց թե ո՛չ ալ չկրնար) :

Մ. — Ի՞նչ պիտի ընեն շնչելէդ ետքը :

Ա. — Պէտք է շնչած օդս դուրս տամ :

Մ. — Ուրեմն շնչառութիւնը երկու շարժում ունի . մին՝ օդը ներս շնչելու , միւսը օդը դուրս տալու :

Ահա ասոր կ'ըսեն ներշնչութիւնը և արտշնչութիւնը :

Ս. և Ա. — Տե՛ս ասիկայ ճիշդ է , մենք ատոր վրայ երբէք ուշադրութիւն ըրած չունէինք :


Մ. — Մեր շնչած օդը կ'իջնայ կուրծքեր , նուս մէջ , ինչպէս որ Արամը ըսաւ , հոն թոքերուն մէջ կը մտնայ ուր կը հանդիպի արեան և զայն կը կենդանացնէ , յետոյ դուրս կը մղուի արտաշնչութեամբ , վասն զի այնուհետեւ ներշնչեալ օդը ալ պիտանի չէ կեանքի համար :

Այսպէս ուրեմն մեր արտաշնչած օդն՝ այլ եւս նոյնը չէ , դէշցած է : Այս պատճառաւ է որ պէտք է բնակարանաց օդը վերանորոգել , նոյնպէս ճիշդ ասոր համար է որ նեղ և ապականեալ օդով լեցուած սրահի մը մէջ շատ մարդոց հաւաքուիլը մարդուս առողջութեան վտանգ կը բերէ :

Ս. — Մայր , կը յիշեմ որ իմ պղտիկ բարեկամուհիներէս մէկը հիւանդացաւ նուագահանդէսի մը մէջ , ուր բազմաթիւ մարդիկ կային : Ուստի պէտք եղաւ զայն շուտով բաց օդի մէջ տանել , կ'ըսէին թէ կը խեղդուէր : Իմ ալ գլուխս այն ատեն սաստիկ ցաւեցաւ :

Մ. — Եւ իրօք ալ այդ բանը շնչելու օդին ապականութենէն առաջ կուգայ : Շատ վրտանդաւոր է և երբեմն ալ իրօք թունաւորում առաջ կուգայ : Ամէն կենդանի կը շնչէ , ամէնքն ալ մեզի պէս շնչողութեան պէտք ունին , նոյնպէս և ձկուներ , վասն զի ըսինք թէ անոնք ջրի մէջ շնչելու գործարաններ ունին :

Ս. — Այն թոքերը՝ որոնց վրայ դու խօսեցար , այս բանը ի՞նչպէս կը կատարեն :



ՍՐՏՑ ԵՒ ԹՈՔ

Մ. — Թոքերը երկու մեծ սպնդային զանգաւածներ են , որ կուրծքին խորը դէպի կ'...



դերուն երկայնութիւնը իջած են : Սիրար  
երկու թորքերուն մէջ տեղը կեցած է : Սրտին  
ծայրը քիչ մը դէպ ի ձախ դարձած կամ ծը-  
ռած է :

Ա. — Ուրեմն թորքերը մեծ . . . բաներ են  
գեղնադոյն կարմիր գունով ինչպէս որ կը տես-  
նուի մնավածառայ կրպակներու մէջ կախ-  
ուած :

Ա. — Ո՛հ, այն կակուղ սպունդի նման բանը :

Մ. — Այո՛, մնավածառները անասնոց թո-  
քերը, սիրտը և լեարդը մէկտեղ կը ծախեն,  
թորքերը ճիշդ սպունդի պէս անհուն ծակտեք-  
ներով լեցուն են :

9. ԶԳԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մ. — Սաթե՛ նիկ, աչքերդ գոցէ՛, հիմա  
տեղիդ դպայ :

Ա. — Ա՛յ ձեռքիս :

Մ. — Ինչպէ՛ս գիտցար քանի որ դու զիս  
չես տեսնար :

Ա. — Կգգամ այդ ալ բա՛ն է որ կը հարցնես :

Մ. — Դեռ, քիչ մ' ալ աչքերդ գոցէ՛ :

Ա. — Ա՛յ, ձեռքս կը խայթես, աղէկ չէ ը-  
րածդ մայրիկ, ալ աչքերս չի պիտի գոցեմ :

Մ. — Մեծ բան մը չըրի, հապա եթէ մէ-  
կը մատդ կարէ՛ր :

Ա. (Ըստ մը ձեռքը քաշելով), Ծ'հ, ալ  
չեմ թագուր :

Մ. — Բայց թող որ մաղերէդ հատ մը կտրեմ  
Ա. — Միայն մէկ մա՛ղ մը, կտրէ՛, ատիկայ  
բան մը չէ՛ :

Մ. — Բայց մաղերդ ձեռքիդ չափ զգա-  
յուն չեն, ես անոնց պիտի դպչիմ առանց դու  
զայն զգալու թէ և աչքերդ ալ բաց լինին : Գի-  
տէ՞ք ինչէ՛ն է այս տարբերութիւնը :

Ա. և Ա. — Ո՛չ :

Մ. — Զգայականութիւնը՝ ըն ըսուած ներ-  
դային ամանի մը մէջ կեցած է, որ ըղեղէն  
ելլալով կուգայ կը տարածուի մորթին տակովը  
ամէն կողմը : Հետեւաբար շիղերն են որ ուղեղը  
հաղորդակցութեան մէջ կը գնեն մարմնոյն բո-  
լոր մասանցը հետ : Ուրեմն մաղերն ալ եղունք-  
ներուն չափ զգայութիւն ունին և ոչ աւելի :  
Հինգ զգայարանայ անունները գիտէ՞ք :

Ա. — Այո՛, ասոնք են շա՛փէլէ, ճա՛լիւլէ,  
հոգոթէլէ, տէլէ և տեսնէլէ :

Մ. — Երբոր աչկապուք կը խաղաք ի՞նչ  
կ'ընէ աչքկապը :

Ա. — Զգուշութեամբ կը քալէ կոյրի մը  
պէս, ձեռքերը առ ջեւէն բռնած, ականջովե  
ալ կը դիտէ :

Մ. — Այո՛, նա կ'ուղէ տա՛փէլէ և տէլէ  
օգնութեամբը, տեսնէան զգայարանի՛ն այսինքն  
աչքին պաշտօնը կատարել, յորմէ զրկուած է  
առժամանակեայ կերպով : Կը յիշե՛ս Սաթե-  
նիկ այն գեղեցիկ կեռասները զոր հօրեղբայրս  
օր մը բերաւ :



Պ. — Ահ, այո՛, աղէկ մը խաբուեցայ այն օրը :

Մ. — Անոնք իրականին այնչափ նման էին որ բերանդ դնելէդ յետոյ զիտցար խաբուելը , ահաւասիկ հոս ալ ճաշակելիքդ էր , որ ուղղեց տեսութեանդ ու շոշափելեացդ սըլ խալանքը : Բայց այն գեղեցիկ վարդը որ նոյն կեռասներուն հետ էր , ի՞նչպէս ճանչցար թէ և նա ալ բնական չէր :

Ս. — Մայր , հոտոտալով ճանչցայ :

Մ. — Ահա՛ , հոս ալ հոտոտելիք ուղղեց աչացդ սխալանքը , այսպէս գործարանները իրարու պակասը կը լրացնեն , անոնց գործակցութեամբն է որ զմեզ շրջապատող բաները կը ճանչնանք . և ահա այսպէս մեր հինգ զգայարանները ջղերով կը գործեն , ջղերն են որ զգայարանաց ձեռքով ընդունած սըլ պաւորութիւնները ըղեղին կը հաղորդեն :

Ա. — Ուրեմն ամէն բան ըղեղին կերթայ :

Մ. — Կը յիշէք այն օրը որ հայրդ մեզ թանգարան տարաւ պատկերներ տեսնելու համար :

Ս. — Այո՛ , այո՛ , կը յիշեմ , այն օրը այնչափ յողնած տուն դարձայ որ կ' ուզէի առանց ընթերելու պառկիլ :

Մ. — Եւ սակայն շատ չը քաղցիկնք :

Ա. — Ոչ , բայց այնչափ գեղեցիկ բաներ տեսած էինք որ . . .

Մ. — Ուրեմն աչքերնիդ յողնած էին , ձեր այնչափ բան դիտելէն :

Ս. — Այո՛ , այդպէս է :

Մ. — Ըղեղը միայն արտաքին տալաւ որութիւնները չ' ընդունիր , այլ ինքն ալ առանձին գործողութիւն ունի :

Կարծեմ դեռ աղէկ չը հասկըցար . — Արամ անցեալ տարուան վերջերը գրութիւն գրած ատենդ ո՛ր տեղդ ցաւ կղզայիր :

Ա. — Երբեմն գլուխս կը ցաւէր :

Մ. — Իրօք գլուխը կամ լաւ եւս է ըսել ըղեղը խորհրդածութեան , կամաց և մտածութեան արտուէ միով բանիւ բոլոր մտաւորական աշխատութեան : Առաջնուղեղը կամ յետնուղեղը , ինչպէս որ կըսուի , կակուղ և ձերմկէկ նիւթէ զանդուած մ' է , որ գանկին ոսկրային տուփին մէջ լեցուած է , ճակտէն սկսեալ մինչեւ գլխուն ետեւը :

Եւ ստուգիւ հոն է մեր անհատականութիւնը կամ մեր անձը կառավարող արտուը , ջղերը՝ որուն վրայ հիմայ խօսեցանք , զգացումները ըղեղին կը բերեն ինչպէս որ հեռագրական թերերը լուրերը կը փոխադրեն մէկ տեղէն միւս տեղը : Միւսնոյն ժամանակ ուրիշ ջղեր ալ ըղեղէն կելլան հրամաններ բերելու բոլոր անդամներուն :

Այսպէս Սթրենիկին ըղեղը նոյն ատեն իր ձեռքին զգայական ջղերովը յայտնեց թէ ես



զայն կը խայթէի, և իսկոյն անիկայ (ուղեղը) անոր ձեռքը ետ քաշելու հրաման ղրկեց :

Ս. — Ի՞նչ, միթէ գլխուս մէջ մէկը կա՞յ որ ինձ կը հրամայէ :

Ա. — Այդ մէկը նոյն իսկ դուն ես, սիրելի բոյրս, միթէ չե՞ս գիտեր, որ երբեմն չար աղջըկան մը կըսեն թէ գէշ է՞մ' ունի :

Ս. — Այո՛ սիրելիս եղբայրս, և դուն ալ չե՞ս գիտեր որ յամառ մանչերուն ալ, յամառ գլուխ ունի կըսեն :

Մ. — Շատ աշխատող տղայոց ալ կըսեն էլ-ի էլ է՞րէ, այս օրուան համար այսչափ բաւական է սիրելի դաւակներս, գնացէք քիչ մ' ալ խաղացէք, և ետքը հիմակուան խօսած ենքուս վրայ խորհեցէք և խօսեցէք :

10. ՏԱՐՈՅՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԿԱՅԻՆ ՑԵՂԵՐՈՒ

ՄԱՐԿԷ

Մարդը բնութեան բազմադրոյն է :

Մ. — Մարդիկ իրենց դոյներուն, գէժ քին գծերուն նայելով երեք դիւսաւոր ցեղերու բաժնուած են :

Ճերմակ ցեղ կամ կովկասեան :

Դեղին ցեղ կամ Մոնկալեան :

Սեւ ցեղ կամ Եթովպեան :

Ասոնց վրայ կրնայ աւելցուիլ պղնձագոյն ցեղը՝ որ կը սպարունակէ իր մէջ կարմրամորթ կոչուած Հնդկ-Սմերիկեան ժողովուրդները :

Ճերմակ ցեղը իր ձուածեւ գլխովը և իր ձերմակ ճակատովը, իր հորիզոնադեր աչքերովը իր քիչ մը ցցուած ծնոսներովը, իր փայլուն մազերովը և մասնաւորապէս իր մորթին ձերմակուածեամբ կ'որոշուի միւսներէն :



ՄԱՐԿԱՅԻ ԾԵՂ

Այս ցեղէն առաջ եկած են ամենէն աւելի քաղաքակրթեալ ազգերը, ասոնց բոլորն ալ եւրոպան բռնած են՝ Ասիայի արեւմտեան կողմէն մինչեւ Գանդէս և Ափրիկէի հարաւային կողմը. այս ցեղը կովկասու լեռներէն եկած է որ սեւ ծովուն ու կասպից ծովին մէջ աեղն է :

Ա. — Ասոր համար է որ իրենք ալ կովկասեան ցեղ կ'ըսուին :



Մ. — Դեւին ցեւը կը ներկայացնէ տափակ երես մը, ցած ու քառակուսի ճակատ մը, գուրս ցցուած կզակ մը, բարակ ու երկայն վտիտ մորուք մը, նեղ աչքեր, գուրս ցցուած խնձորիկներ, ուղիղ և սեւ մազեր, ճիթագոյն մորթ:



ԳՆՂԻՆ ՅԵՂ.

Ս. — Է՛հ, ուրեմն, այնպիսի դէմքը հա՛ճելի չէ:

Մ. — Այս գեղին ցեղը բոլոր արեւելք տիրած է, ուր երբեմն ճերմակ ցեղերը բռնած էին, այժմ՝ այս ցեղը կը գտնուի կեդրոնական Ասիոյ մեծ անապատին մէջ այսինքն Չինաստան, արեւելեան Սիպերիա, Բօուէ, Ճաբոն, Փիլիպեան, Մարիանեան և Բաուօլին կղզիները, նոյնպէս Ամերիկայի արեւելքին մէջ ալ կը գտնուի, այս ժողովուրդը երկու կիսագրնոտին ամենէն ցուրտ տեղերը բնակած են:

Ս. — Հապա՛, սեւերը:

Մ. — Սեւերը կ'որոշուին ճնշեալ գանկով

մը, տափակ և կարճ քթով, ցցուած ծոնտնե՛ներով, խոշոր շրթունքներով, կարծր ու դը՛ռուղ մազերով և սեւ մորթով մը, ասոնք կը բնակին Ափրիկէի մաս մ'ալ Ովկիանիաի մէջ:



ՍԵՒ ՅԵՂ.

Ս. — Սեւերն աղէկ չեն:

Մ. — Կարմրամորթները այսինքն Հնդկ-Ամերիկեան ցեղերը կարմիր պղնձի գոյն մ'ունին քթերը ցցուած, խոշոր բաց աչքեր, ճերմակ ցեղին պէս, ասոնք ալ բարի մարդիկներ են:



ԳՆՂԻՆ ԳՆՂԻՆ ԵՒ ՅԵՂ.



Ահա առաիկ սիրելի զաւակներս, ինչ որ կ'ուզէի ձեզ ըսել մարդոց վրայ, մեր գրքերը ձեզ պիտի սորվեցնեն անոնց պատմութիւնը, վաճառականութիւնը ու անոնց արուեստները :

11. ԵՐԿՐԻՅ ՎՐԱՅ ԿՆԵԳԱՆԵԱՑ ԲԱՇԽՈՒՄԸ

Մ. — Կուղեմ այս դասը վերջացնել երկրիս վրայի կենդանեաց բաշխման վրայ ձեզի դաղափար մը տալով, վտանգի ամեն տեղ մի ենոյն կենդանիները չեն բնակիր. ինչպէս որ մարդոց ցեղերը, նոյնպէս նաև կենդանիները փոխուած են կլիմային և տեղոյն համեմատ :

Ա. — Տե՛ս, և իրօք ալ այնպէս պիտի լինի, ահա առաիկ տաք և պաղ երկիրներու կենդանիներ կան :

Ս. — Առանց հաշուելու զանոնք, որ միայն օդին մէջ կ'ապրին, և զանոնք, որ միայն ջրոյ մէջ կ'ապրին :

Մ. — Սառուցիւ, ստորին կարգի կենդանիները ջրէն դուրս չեն կրնար ապրիլ, ինչպէս են թուլամորթները, կենդանաբոյսները, խեցեմորթները, նոյնպէս նաև ձկները :

Բայց աւելի կ'ուղեմ ձեզի բարձրագոյն կենդանիներուն վրայ խօսիլ, որ ձեզի աւելի ծանօթ են, կաթնատունները և թռչունները, որոնցմէ շատը մարդոց բնտանի են և անոնց պիտոյից համար կը ծառայեն :

Տաք երկիրներու այսինքն երկու արեւա-

դարձներու մէջ կեանքն աւելի գործունեայ է այսինքն շուտ կ'աճի և կենդանեաց տեսակը ամեն տեղէ աւելի շատ է :

Ա. — Նոյնպէս նաև սունկերը, այնպէս չէ՞ մայր :

Ս. — Այո՛, այրեցեալ դօտինն մէջ կան վիթխարի կենդանիներ, ինչպէս են փեռ, ուշ-փեռներ, յեփեփն, ընյողաբ, ուղաբ, արօտիկ ուղաբ, սոսկալի մտակերները, ինչպէս, Արի-ծը Լաբը, Եփաբ, Եփաբ-Ի-Թը, Կիբրեբը, ձկներուն մէջ շանձիկն որ այնչափ աղահ և վտանգաւոր է տաք երկիրներու ծովերու մէջ կը բնակի :



ԱՐՈՒԱՅԻՆ ՈՒՂՏԵՐ

Նոյնպէս նաև երկու արեւադարձներու մէջ կը գտնուին ամենէն մեծ թռչունները, Էլաֆ և Սփրիկէի աւազուտ դաշտին մէջ, և Ասիոյ հարաւային արեւմտեան կողմը, և Ամե-



բիկտյի մէջ՝ Զատարու և Ովկիանի մէջ Կառարու ։

Մարտ և իրեն հաւատարիմ ընկեր շուներ հաւատարապէս կրնան խիստ ցրտի և հասարակածի տաքութեան դիմանալ, մինչդեռ կապիկը որ իր կազմութեամբ մարդուն մօտենալ կը թուի, դրեթէ միշտ կը մեռնի հառաւմաշով երբոր ցրտի և մեր բարեխառն կը շինայից խոնարութեան ենթարկուի ։

Ս. — Երբէք կապիկը չեմ տիրեր, իր ծընձրակերը զիս կը վախցնէ ։

Ա. — Ինչո՞ւ համար մեր խօսքը կ'ընդմիջես, Սաթենիկ, թող որ մայրս խօսի ։

Մ. — Անոր հակառակ, եղբերու լախոնիոյ երկար և խիստ ձմռան ցրտին կրնայ դիմանալ ինչպէս և տաքութեանը, բայց երբեմն ալ մեր բարեխառն կլիմաներուն տակ կը մեռնի ։ Բեւեռային ծովերու ճերմակ արջերը փարիզի բուսարանական պարտիզին մէջ երկար առեն չեն կրնար ապրիլ ։

Բայց կան կենդանիներ որ ամէն երկրի մէջ կրնան ապրիլ. ինչպէս են ասոնցմէ շատերը՝ զորո մարդ ընտանեկան վիճակի փոխած է զոր օրինակ յին, ելը, Կարմը, Խոլը, Կարմն, Կարմրը, Կարմրուր մարդուս ազդեցութեամբն է որ երկրիս վրայ այնչափ կենդանեաց տեսակներ աստին անդին տարածուեր են ։ Մարդիկ բնականաբար փափաք մ'ունին դիւրին կերպով այն անասնոց թիւը շատցնելու, որոնք

մեզի օգտակար կամ հաճելի են, և չնչեղ վերցնել զանոնք, որոնք մեզի վնասակար են, այսպէս, ճին՝ որ կեդրոնական Ասիոյ դաշտավայրներու ծնունդն է, առաջ Ամերիկայի մէջ բոլորովին անծանօթ էր, այս նոր աշխարհը դտնուելէն յետոյ Սպանիացոց ձեռքով հոն փոխադրուեցաւ, դեռ չորս հարիւր տարի չկայ և սակայն այսօր այն ընդարձակ երկրին բնակիչները Հիւազոնի ծովախորշէն մինչեւ Թէուտը-Ֆէօն շատ ձի կը դտնուի, այս կենդանիներէն հոն ալ վայրենիներ կը դտնուին և դրեթէ անթիւ խումբերով ։ Նոյնպէս մեր ընտանի ելը որ հին աշխարհէն նոր աշխարհը փոխադրուած է, հոն շատցած է և միայն հարաւային Ամերիկայի մէջ մեծ տեղ մը բռնած է իր մոթին համար, որ կաշի շինելու կը գործածեն ։

Դժբաղդարար օգտակար կենդանիները համաշխարհային չեն, իսկ մուկը որ Ամերիկայէն առաջ եկած կ'երբուի, և միջին դարուն եւրոպա եկած հիմայ Ովկիանիոյ կզգիներուն մէջ անդամ կը դտնուի ։

Խօսքերս բովանդակեմ ։ կենդանիները շատ մեծ և շատ տարբեր են հասարակածին մօտակայ երկիրներուն մէջ, ուր տաքութիւնը աւելի դործունեաց կենսական զօրութիւն մը կուտայ, բայց բարեխառն երկիրներու մէջ օգտակար կենդանիներ շատ տարածուած են ։



մարդ կային դործունէութեան չնորհիւ . հոն նուազ գիշատիչ կենդանիներ կան, ասոնց մէջ էայլը, աւետիք, կապը, դիւաւորներն են, որոնց դէմ զմեզ կը պաշտպանեմք մեր երկրին մէջ, և դիրենք կը հալածենք հեռաւոր տեղեր՝ ուրոնք երթալով կը քիչնան, և արդէն Աճէրիայի մէջ աւետիք, կապը, բարեմք, մեր առջեւէն փախած են անապատներուն մէջ :

Բայց մեր բարեխառն կլիմաներու զարդի և ուրախութեան համար, թռչնոց բազմութիւնն է որ դեղեցիկ եղանակներու մէջ իրենց գայլայլիկովը և բոյներովը մեր անտառները կը լեցնեն . և ցուրտ եղանակները մօտեցած ատեն զմեզ կը թողուն, ինչպէս ախլը, աւետիք, սեւ սարեւը, հովտային բուռնը, նաև չմռռնանք ձիթեռնիները և արքիւնները :

Ս. — Բայց ձմեռ ատեն ո՞ր կ'երթան թռչունները :

Մ. — Ծովէն անդին տաք երկիրները կ'երթան և այն տեղերուն տաքութեանը համար ապահով են որ ուտելիք պիտի գտնեն . Բայց ամեն գարուն հաւատարմութեամբ կը դառնան իրենց ծնած երկիրները . երբ այս մակոտ թռչունները մեզ կը թողուն՝ միւսները, ինչպէս կարմիրը, վայր բաժնը, կարմրերը, և եւրոպիոյ հիւսիսային ջրատուն թռչունները, կուգան մեր քով ձմերկ, թէեւ ցուրտի սաստկութենէն բոլոր լճերու և ջրերու հոսանքը սառած լինին ա-

նոնք ցուրտէն և անթմութենէն չեն մեռնիր և չեն համարձակիր աւելի հարաւային կողմը երթալ, բոլոր այս գաղթականները զորս ցուրտը կը վանէ՝ երբէք բնակարան մը չունին այն տեղերը ուր կ'երթան իրենց պարենը փնտռելու, հոն պանդխտի պէս կ'ապրին : Միայն մեր երկրին մէջ կ'երգեն իրենց փայլուն փետուրները կը հագնին և իրենց բոյներովը կը շինեն :



3.

ՀԱՆՔԱՐԱՆՈՒԹԻՒՆ

1. ՀԱՆՔԱՐԱՆՈՒԹ. — ԿԱԶ. — ՔՈՔ.

Հանքածուխը արուեստից հոգին է :

Մ. — Սիրելի զաւակներս , ինչպէս տեսանք որ տունկերն և կենդանիներն առանձին որոջ ապրող և միանգամայն գործարանաւոր էակներ են , որք կը ծնին , կ'աճին և կը մեռնին , իրենց յաջորդելու համար իրենց նման մը թողնելէն կամ յառաջ բերելէն զկնի : Բայց հիմա ալ հանքարանութեան այսինքն անգործանաւոր նիւթոց վրայ պիտի խօսինք :

Ահաւասիկ քար մը , մուրճով մը կտարէ , պիտի տեսնաս որ ամէն մէկ պղտիկ կտորն ալ ճիշդ կտորած քարիդ նմանն է , միայն թէ շատ վոքը է : Մ'ինչպե՛ռ եթէ ուղես առննկ մը կամ անասուն մը շատ մասերու բաժնել , պիտի տեսնաս որ իւրաքանչիւր մասը ամբողջին չի նմանիր , և այս գործողութեանգ ատեն բոյսը կամ կենդանին կ'աւրուի : Վասն զի տունկ մը

արմատ , բուն , տերեւներ ու ծաղիկներ ունի , նոյնպէս կենդանի մը կազմուած է գործարաններէ որոց միութիւնը կամ ամբողջութիւնը օգտակար է իր գրութեանը և իր անհասակա՛ն կազմութեանը . տարբերութիւնը կը հասկընա՞ս :

Ս. — Այո՛ , մայր :

Մ. — Հիմա կրնան ինձի քանի մը հանքի անուն տալ :

Ս. — Հողը , աւաղը , քարը , երկաթը , պղինձը , կապարը , ոսկին , արծաթը :

Մ. — Այս վերջինները՞ Գրաւ կ'ըսուին :

Ս. — Բայց այս ամենը մէկէն հա՞նք կ'ըսուի :

Մ. — Այո՛ , ա՛ռ սա հովանոցը և ըսէ ինձի բնութեան երեք բաժանումներէն որո՞ւ կը պատկանին այն նիւթերը՞ որոնցմով շինուած է հովանոցը :

Ս. — Նախ մետաքսը՝ կենդանական կարգին արգիւնքն է , վասն զի շերտանէ շինուեր է մետաքսը , յետոյ կոթը , որ փայտ է՝ բուսական կարգին կը վերաբերի , վերջապէս բունատեղը երկաթ է՝ հանքային կարգին կը վերաբերի , ա՛հ , կէտոսկր ալ կայ , որ դարձեալ կենդանական կարգին կը վերաբերի :

Ս. — Շատ աղէկ . — Արամ , դու գիտե՞ն թէ ի՞նչ է այս սեւ խիճը :

Ա. — Կարծեմ թէ գետնածուխ է :

Մ. — Լա՛ւ , ու՞ր կը գտնուի գետնածու-



խը կամ ինչպէս որ կ'ըսեն հանրապետք :

Ա. — Հողին մէջ, որ երբեմն ալ շատ խորը կը գտնուի :

Մ. — Ուրեմն հանք մ' է, բայց այրելի հանք մը, որ կը վառուի և շատ տաքութիւն կուտայ : Իր գլխաւոր արժանիքը այս է : Հանքածուխը շատ բանի կը ծառայէ, կրնայ ըսուիլ թէ ճարտարութեանց կամ արուեստից հարկն է : « Եթէ հանքածուխը պակաս կ'ըսէ Պ. Սիմոնը, քաղաքներուն մէջ լոյս չի պիտի լինի, շատ առներու և գործանոցներու մէջ կրակ չի պիտի լինի, բոլոր երկաթուղիները պիտի կայնին, գործատուները, տարազագործները գրեթէ բոլոր արուեստանոցները, բոլոր մեքենաները, և շատ մը նաև եր իրենց գլխաւոր գարմանէն այսինքն հանքածուխէն գրկուելով պիտի ստիպուին պարապ մնալ : Եթե՞ կան կեանքը և մտաւորական կենաց մէկ մասը պիտի մարէր : Ինչպէս որ կը մարի մարմնոց կեանքը սնունդի պակասութեամբ » Այս դէպքը յիշեցի որպէս զի հանքածուխին կարեւորութիւնը և օգտակարութիւնը ձեզի հասկցնեմ :

Ա. — Ի՞նչ, Պ. Սիմոնը կ'ըսէ եթէ հանքածուխը պակաս քաղաքին մէջ լոյս չի պիտի լինի :

Մ. — Այո՛, գեթ աղքատները լոյս չի պիտի ունենան վասն զի հանքածուխէն հանուած կազն է որ մեզ կը լուսաւորէ, զոր մեծ և աղէկ գոչուած երկաթէ խողովակի մէջ կը դառն :

որուն ջարդուած է կ'ըսեն ուրիշ կազը կ'ըստացուի :

Ա. — Ես շատ անգամ կազի գործարանին քովէն անցած եմ, զբօսանքի դնացած ատենս ուզած եմ ներս մտնալ տեսնալ, այս կազը ինչի շատ արտաքոյ կարգի կ'երեւար :

Մ. — Ձե՞ս գիտած երբէք փայտի բոցին արձակած լոյսը երբ ձմեռը մեծ կրակ կը շինեն : Գաղղիացի ճարտարագէտ մը Յիլիպ լը Պօն անուամբ, մտածեց 1799 ին օգուտ հանել տուները լուսաւորող բոցերէն : Տեսակ մը կրակաուրներ շինել տուաւ և երկաթէ խողովակներով փայտը կը տաքցնէին, որ ածուխ ու մուխ գառցած՝ ճամբով մը կ'երթար դուրս ելլալու որուն ծայրը կրակ կը գնէին, այսպէսով աղէկ լոյս մը կ'ունենային, բայց այս անօթը շատ սուղ էր : Անգղիացիները աւելի աղէկը շինեցին, դեմնածուխ գործածելով, որ անոնց քով հասարակաց է, և աւելի լուսաւոր նիւթ կը պարունակէ իր մէջ :

Ա. — Ուրեմն հանքածուխին շոգին փոխանակ անմիջապէս վառելու, խողովակներով կ'երթայ և փողոցները կը լուսաւորէ :

Մ. — Այո՛, այդպէս է :

Ս. — Ի՞նչ գնդածայր փողին մէջի մնացածն է, ուրիշ կազը հանած են դեմնածուխը աղէկ մը տաքցընելով, որ նոյն հանքածուխն



է առանց կազի , և ասոր համար է որ քորը  
առանց բոցի կը վառի :

Սակայն շատ կը տաքցնէ , և շատ աղէկ կը  
բուկ կը շինէ : Մենք հանքածուխէն սկսանք  
վասն զի անիկայ կը գործածուի մետաղները  
զտելու համար : Վաղն ալ երկաթին և ձողին  
վրայ կ'սկսինք խօսիլ :

2. ԵՐԿԱԹ. — ՁՈՒԼԱՄՈՅՔ. — ՊՈՂՊՈՏ .

Առանց ոչխատութան  
բան մը առաջ չի գար :

Մ. — Երկ-իւր բնութեան մէջ ամէն կողմը  
տարածուած է և շատ օգտակար է . հանքա-  
ծուխին նման գետնին տակը կը գտնուի , և  
շատ տեղ կը բռնէ : Ասիկայ գորշ կապոյտ մե-  
տաղ մէ , թիչ անգամ մաքուր կը գտնուի  
միշտ գրեթէ ուրիշ նիւթոց հետ խառնուած է :

Ս. — Այս կերպ խառնուածքը զիս կը շը-  
փոթեցնէ :

Ա. — Ինչո՞ւ համար :

Ս. — Ուրեմն երկաթէ գաւաղանները կամ  
ձողերը ուրիկէ կը գտնան :

Մ. — Գրեթէ երբէք կատարեալ ձողեր  
չեն գտներ այլ կը շինեն , աղէկ ուշագրութիւն

ըրէ : Երբ երկաթը գետնէն կը հանեն այն  
խառն կամ անդործ վիճակը ունի : Ասիկայ տե-  
տակ մը անողորկ քար է , դեռ զուտ երկաթ  
չէ : Իր առաջի վիճակին մէջ , կը լուան իր վը-  
րայ եղած հողերը հանելու համար , յետոյ ա-  
ծուխով կ'այրեն , որպէս զի երկաթին մէջ պա-  
րունակած քիւմիւրն ու շուկը հանեն :

Պէտք է հիմայ դեռ մեծ գործ մը կատա-  
րել , որ երկաթը ձող լինի :

Նախ կը շինեն բարձր գործ մը , որուն շէն-  
քին վերի կողմը լայն տեղ մը ունի , որուն  
շուկէր (կէօլառ) կ'ըսեն , մինչդեռ վարի կող-  
մը խոր հալոց մ'ունի , ուր հալած երկաթը  
կը թափի :

Ինձ ուշագրութիւն կ'ընէք այնպէս չէ :

Ա. — Այո՛ , ես արդէն գործ մտացս մէջ  
կաղմեցի :

Մ. — Այս շուկէրին մէջ կարգ մը փայտէ  
ածուխ կամ քօք կամ չոր փայտ կը դնեն , յե-  
տոյ կարգ մ'ալ մետաղ , կարգ մ'ալ կրային  
կամ հալելի նիւթ , այնպէս կը շարեն մինչև որ  
փուռը ամբողջապէս լեցուի :

Ս. — Լաւ , լեցուեցաւ , ետքը :

Մ. — Կրակը կը վառեն և մեծ փքոցներով  
կը հրահարեն . — այն ատեն մետաղը կը հալի և  
կաթիլ կաթիլ հալոցին մէջ կը թափի , իսկ այն  
նիւթերը՝ որ երկաթին հետ վարի հալոցին  
մէջ կը թափին և երկաթ չ'են , հալած երկա-



թին երեսին վրայ կը լողան թեթև լինելուն համար : յետոյ դուրս կը հանուին քրէական կղկղանք անուամբ : Տես , ահաւասիկ կտոր մը քրէական կղկղանք , որ բաւական գեղեցիկ է :

Ա. — Ասիկայ ապակեղէն նիւթի մը պէս է . երբեմն կանանչ գոյն ունի , երբեմն ալ ճերմակ :

Մ. — Երբ հալոցը լեցուի , մէջինը աւաղէ կաղապարներու մէջ կը լեցունեն , մեծ ձողեր շինելու համար , որուն յետոյ երբ կ'ըսեն :

Այս հալած երկաթը կը գործածուի նաւերու մանրախճի տեղ , խողովակներու , կաղապարի , խեցիի գործածութեան և դարդի նիւթերու համար . հիմայ այն ձուլած երկաթին վրայ խօսինք : Ասոր համար պէտք է նախ երկաթը զտել , ազնուացնել ինչպէս կըսեն , արէքի մէջ կը դնեն , որ շատ բարձր ջերմաստիճանով տաքցած է , և հոն իր մէջ եղած ածուխէն կը զտուի , այն ատեն տեսակ մը զանգուած կը լինի՝ որուն հետոյ կըսեն : Մարդիկ մեծ ունելիով մը այս քծուարը կը բռնեն և շողեչարթ մեծ մուրճի մը տակ կը դնեն : Այս ահագին մուրճը , շարունակ կելլայ կ'իջնայ : Մետաղին մասունքները իրար կցելովը՝ մէկ մարմին կը կազմեն , ահա այն ատեն երկաթ կը լինի :

Ա. — Յետոյ :

Մ. — Այս երկաթը քանի որ կարմիր է կը ծեծեն , կը կարծրացնեն և յետոյ կը շինեն , կամ

թիթեղնակերտ մեքենայի մը դըննետրուն տակ կը դնեն՝ երկաթաթիթեղ շինելու համար , այս ամէնը ըլլալէն զինի ծախելու կը հանեն :

Ա. — Որչափ աշխատութիւն . երբէք չ'էի մտածած թէ պղտիկ երկաթի կտոր մը այդչափ աշխատութեամբ առաջ կուգայ :

Մ. — Դու զիտես Արամ որ առանց աշխատութեան բան մը չ'ենք կրնար առաջ բերել կամ ստանալ :

Ա. — Այո՛ , բայց ատիկայ տաժանելի արհեստ մ'է :

Մ. — Այս երկաթով կրնայ տուներ վաճառանոցներ շինուիլ , ինչպէս փարիզիները , նոյնպէս կամուրջներ , երկաթուղիներ և այլն :

Ա. — Այսպէս թափծու երկաթը պարզապէս հետոյ երբ մ'է , մինչդեռ ձող երկաթն էր , որ երկաթագործները և դարբինները կը գործածեն , ծեծած կամ կռածոյ երկաթ մ'է :

Մ. — Պողպատն ալ նոյնպէս երկաթ է , բայց աւելի մաքուր , աւելի ազնիւ է , և կարծրանալու համար շատ աշխատութիւններ պէտք են : Կրկին անգամ կը հալին փոյտի ածուխի փոշիով , որպէս զի որոշեալ համեմատութեամբ մը ածուխ տան մէջը : Եւ յանկարծ կը պաղեցընեն բոլորովին կարմիր եղած ատենը՝ պաղ ջրի մէջ ընկզմելով , ահա ասոր հետոյ կամ ջրհոսի կ'ըսեն : Ամեն գործարան պողպատ շինելու մասնաւոր կերպ մ'ունի , ուստի զայնա-



զան տեսակ պողպատներ կան՝ անոնք որ դո-  
հարեղէններու կը գործածուին բաւական ա-  
ղէկ յղկուած են, հայելիի պէս կը փայլին :

3. ՊՂԻՆԶԸ. — ԱՆԱԳԸ. — ԶԻՆԿԸ. — ՆԻՔԵԼԸ

ԱՆԱԳԱՊՂԻՆԶԸ: — ՍՆԻԿԸ

Ամեն փայլուն ոսկի չէ :

Մ. — Այս առաւօտ պէշէն սկսինք՝ որ կա-  
րևոր մետաղ մ'է, և ոսկիէն աւելի խիստ է :

Քիչ անդամ զուտ կը գտնուի, շատ ան-  
դամ խառնուած է ծծմբի, երկաթի և ծարրա-  
քարի հետ : Պղինձի հանքը կայծքար անուամբ  
ճանչցուած է :

Ա. — Այս հանքածոյն ալ երկաթին չափ  
աշխատութիւն կ'ուզէ :

Մ. — Գրեթէ այնչափ, նախ երկաթի պէս  
կ'այրեն իրեն հետ եղած օտար նիւթերէն զտե-  
լու համար, վերջը հալոցի մէջ կը հալեն, ուր  
նախ և առաջ ածխափոշի կը դնեն, որ անմա-  
քուր քիւմ մը կուտայ : Ասկէ առաջ եկածը  
նորէն հարման մէջ կը դնեն և ապա պէշի կը դառ-  
նայ : Այս տգեղ պղինձը մաքրելու համար,  
զորիչ փռերու մէջ դնելով կը հալին, ուրկէց  
կը հանեն այն կարմիր կամ վարդափայլ պղինձը :

Ա. — Բայց ատիկայ շատ սիրուն անուն  
մ'է, որ պղինձին կուտան :

Ա. — Այդ վիճակին մէջ կրնայ տնական  
անօթներ շինուելու գործածուիլ :

Ս. — Սաներ, կոնքեր կը շինեն այնպէս  
չէ՞ մայր :

Մ. — Այո՞, մաքուր պղինձն է որ միշտ  
անօթ կը շինուի, պղինձէ փորագրութեան  
համար ալ այս կարմիր պղինձը կը գործածուի,  
այն բարակ թերթերը՝ որ փայտէ նաւերուն  
դուրսի երեսը ծածկելու կը գործածուին,  
դարձեալ այս պղինձէն են :

Ս. — Մայր, խոհանոցի համար վտան-  
գաւոր չէ՞ պղինձէ անօթ գործածելը :

Մ. — Եթէ մաքուր պահուին, և եթէ չը  
թողուն որ կերակուրը մէջը պաղի, եթէ ներ-  
սի կողմը շուտ շուտ անագել տան, երբէք  
վտանգ մը չկայ : Բայց իրաւ է որ պղինձէ անօթ-  
ներուն գործածութիւնը մեծ խնամոց կը կա-  
րօտի, և պզտիկ անհոգութիւն մը կրնայ վտան-  
գաւոր լինել :

Ս. — Անագազօծումն ի՞նչ ըսել է, մայր :

Մ. — Անագէ խաւ մ'է : Անագը ինքնին  
փայլուն գորշկէկ ու ճերմակ մետաղ մ'է,  
այնպիսի յատկութիւն մ'ունի որ օդին մէջ  
չաւրուիր և ոչ ալ առողջութեան վտանգաւոր  
է : Ասոր համար մաքուր մետաղ կ'ըսուի, զոր  
հալեցընել տալով կը գործածուի : Դու անա-  
գազօծ տեսեր ե՞ս :

Ա. — Այո՞ :



Ս. — Ուրեմն, մայր, պղնձի վտանգը անմաքրութենէ և անզգուշութենէ առաջ կուգայ :

Մ. — Միշտ այդպէս է, պղնձէ խաղալիքներ վտանգաւոր են աղջիկս, անոնցմէ թունաւորուելով մեռնող տղաքներ ալ եղած են : Եւ երբէք անոնցմէ քեզի համար դնած չեմ աղջիկս, պատահական դէպքերէ շատ կը վախնամ :

Ս. — Յանցաւորը այդպիսի խաղալիք չեւտղներն են, ինչո՞ւ համար խաղալիքներուն մէջ պղինձ կը դնեն :

Մ. — Ինչո՞ւ համար . . . ինչո՞ւ համար երբեմն մարդիկ մեծ տղաքներ կը լինին :

Ս. — Արիկայ տղիտուութենէ առաջ կուգայ :

Ս. — Այո՛, կը մտածեմ նաեւ որ աղէկ պիտի լինէր եթէ ամէն մայր՝ իմ մօրս պէս կը թուած լինէր որպէս զի ծախողներուն տղիտութիւնը ցուցունէին :

Մ. — Սխալ է իրաւունք ունի, վաճառականները սուտ թիթեղներ ու փայլուն բաներ գնողները իրենց քաշելու և սուղ ծախելով ստակ վաստկելու համար է, որ այդպէս կ'ընեն : Ստոնք իրենց արհեստը կը ցուցնեն, գընտղներն ալ պէտք են գիտնալ, ընտրութիւն ընել, և այնպէս գնել, կամ չգնել :

Ս. — Մայր, ներէ՛ ինձ որ դարձեալ պըղնձին վրայ խօսիմ : Ինչ կը լինի որ պղինձը

վտանգաւոր կը լինի, այդ թոյնի դաղաւիարը զիս պաշարեց :

Մ. — Պարոն, խոնաւութիւնը պարարտ մարմինները և թթու բաները պղնձին տեսակ մը կանաչ ժանք առաջ կը բերեն որ շատ սաստիկ թոյն է, և որուն կ'ըսեն պղնձի թոյն :

Ս. — Այդ ժանքը շատ անգամ պղնձէ աշտանակներու վրայ ալ կը տեսնամ, և ինձ շատ տհաճելի է :

Մ. — Պէտք է մաքուր պահել ամէն պըղինձէ շինուած բաները, վասն զի հակառակ իրեն այդ ֆլաստակարութեանը, շատ օդատկար դործածական և աղէկ մետաղ մ'է որուն բաղադրուածը ոսկերչութեան մէջ ալ կը դործածուի, պղինձը զինկին հետ միացած, որ կապուտկէկ ճերմակ մետաղ մ'է, առաջ կը բերէ ուրիշ կամ դեղին պղինձը որ իր կողմութեանը նայելով ոսկիի կը նմանի, որուն կ'ըսեն ոսկետոյն, մանկնի սպի, նանակի, սպի պղնձ : Այս խառնուրդը սուտ գոհարեղէններ շինելու ալ կը գործածուի :

Ս. — Այդ տեսակ գոհարեղէնները չեմ սիրեր :

Մ. — Որչափ որ աւելի պղինձ խառնուած լինի զինկին հետ, այնչափ աւելի ոսկոյ կը նմանի, հետեւաբար այնչափ աւելի գեղեցիկ կը լինին. բայց և այնպէս այնչափ ալ աւելի խաբօղ են :



Ա. — Ասոր համար է որ կրտսն թէ ասի քոյ  
լան ասի քէ :

Ս. — Աճերի հարազատ, հարազատ, ուսկից շատ  
բաներ կը շինուին, ուրկէց առաջ կ'ուզան :

Մ. — Մայրչօսաւոր ճերմակ պղինձ մ'է, որ  
առաջ կուգայ ոսկեպղնձին և նիքելին բաղա-  
դրութենէն :

Ս. — Անագապղինձը ուրկէց առաջ կու-  
գայ, որ այնչափ գեղեցիկ է և այնչափ սիրուն  
բաներ կը շինեն :

Մ. — Անագապղինձն ալ նոյնպէս պղնձի  
և անագի բաղադրութիւն մ'է, որուն մէջ  
գրեթէ միշտ կամ երկաթ կամ կապար կամ  
զինկ կը գնեն իրենց գործածութեանը հա-  
մեմատ : Ինչպէս որ Սաթենիկը ըսաւ, ասիկայ  
գեղեցիկ մետաղ մ'է, բայց իր վրայի մութ  
գոյնը տեսակ մը թթուուկ է որ պարզապէս վրան  
հադած է և այնու անայլայլելի կը լինի . ինչ-  
պէս են փարիզի մէջ Պասթէլի հրապարակին  
սիւնը, Հենրիկոս չորրորդի հեծեալ արձանը,  
Բօն-տը-նէօֆի (նոր կամուրջ) վրայ՝ Լուզովի-  
կոս Լիւին արձանը, Վիգթուաուի հրապարա-  
կին վրայ Լուվրի աշտարակին ստեղնաւոր աշ-  
տանակը և ընդհանրապէս բոլոր անագապղինձ  
արձաններն են որ մեծ քաղաքներու հրապար-  
ակները կը զարդարեն :

Ա. — Մնդիկը ինչ է :

Մ. — Մնդիկն ալ շատ ծանր մետաղ մ'է

սովորական ջերմաստիճանի մէջ հեղուկ է, ջեր-  
մաչափներու և օդաչափներու համար կը գոր-  
ծածեն . ապակին չի թրչեր, այսինքն անոր չի  
փակչիր, շատ բարձր աստիճանի մէջ կեռայ,  
այսինքն 360° ի մէջ, զայն սառեցնելու համար  
զրոյէն 40° վար ցուրտ պէտք է, այսինքն վեր-  
ջին աստիճան ցուրտ որ աշխարհի վրայ միմիայն  
բեւեռներուն կողմը կը գտնուի : Մնդիկը դար-  
ձեալ կը գործածուի հայելեաց անագաթներթ  
շինելու, որուն մէջ մեր պատկերը կը տեսնենք :

Ս. — Մայր, ըսէ մեզի ի՞նչպէս կը շինեն  
հայելիները :

Մ. — Երբոր հալած ապակին հարթ հա-  
ւասար տարածուած լինի հայելի շինելու հա-  
մար, վրան բարակ անագաթիթեղ մը կը գնեն  
որ թեթև անդիկով մը ծածկուած է, յետոյ  
ծանրայնելով զայն կը սեղմեն, այնպէս որ  
անդիկը տակէն կը փակչի, և անագապղինձը  
ապակիին կը կցի : Ահա այն ատեն հայելին կը  
շինուի՝ որուն մէջ զմեզ կը տեսնենք :

4. ԿԱՊԱՐ. — ՄՈՒՄԱ. — ՁԱՌԻԿ.

Մ. — Կապարը աշխարհիս մէջ շատ տա-  
րածուած մետաղ մ'է, կակուղ և մխրագոյն  
ճերմակ, բայց օդին խոնաւութենէն՝ անմիջա-  
պէս վրան գորշ կապոյտ գոյն կառնէ, որ շատ  
վտանգաւոր է, գոնէ պղնձէն զուշանալու  
չափ կապարէն ալ զզուշանալու է : Երբեմն կը



բաւէ շիշի մը յատակը եղած քանի մը կապա-  
րէ գնտակներ մարդոց թունաւորելու պատ-  
ճառ լինել :

Շատ անգամ կապարի բաղադրու թիւնը կը  
գործածուի նկարչութեան գոյներու մէջ, ինչ-  
պէս է կողորէ ձերմալը՝ կործրը :

կապարական ճերմակի գործածութիւնը վնա-  
սակար է գործաւորներուն որ ինքն ինքն-  
անուամբ հիւանդութիւն մը առաջ կը բերէ,  
փառք Աստուծոյ հիմայ ասոր տեղ ամէն կողմ  
շնչի ձերմալ կը գործածեն որ վնասակար չէ և ա-  
ռաւելութիւն մ'ալ ունի որ գէշ հոտերու  
ազգեցութենէն չի սենար :

Ա. — Կողորէ գնդակներ կը շինեն այնպէս չէ :

Մ. — Այո՛, պարո՛ն, բայց միայն ասոր  
համար չի գործածուիր . այլ ուրիշ բանի հա-  
մար ալ :

Այս մետաղը շատ ծանր է երկաթէն ա-  
ւելի, և որովհետեւ շատ կայ, հետեւաբար ա-  
ժան է, դիւրաւ կը հալի, կը ծուխ, ուղած  
ձեւերը կրնան տալ բարակ թիթեղներ կը շի-  
նեն՝ պատշգամները, տուններուն տանիքները  
ծածկելու համար : վերջապէս կապարը իր ա-  
ժանագին լինելուն շատ կը գործածուի, կա-  
զերու և ջրերու խողովակ ալ կը շինուի :

Ս. — Ո՞ր կէտ կը լինի կապարը :

Մ. — Հանքերու մէջ կը գտնուի, ուրիշ  
հանքերու հետ միացած . շատ անգամ ծծում-

բի հետ կը լինի :

Ա. — Բայց ծծումբը մետաղ մը չէ :

Մ. — Ո՛չ, անիկայ դեղին դիւրաբեկ գո-  
յացութիւն մ'է՛ որ վառած ածուխի մը մեր-  
ձեցումէն կը բռնկի և անոյշ կապոյտ գոյնով  
մը կը վառի, հեղձուցիչ հոտ մ'արձակելով :

Ս. — Ա՛հ, այո՛ գիտեմ, ինչպէս որ երբ  
ծծումբէ լուցկիները վառին, հոտառուններուն  
սաստիկ հազ կը պատճառեն, կոկորդը և աչ-  
քը կը կոկծեցնեն :

Մ. — Ծծումբը հրաբուխին մտերը առատ  
կը գտնուի, Սիկիլիայէն և Իտալիայէն շատ  
կ'ելլայ :

Ս. — Ի՞նչ բանի կը ծառայէ այս անհաճոյ  
բանը որ այնչափ դէշ կը հօտի :

Մ. — Է՛հ, բայց նախ ծծումբաւ շինելու  
համար, ինչպէս որ ըսիր, յետոյ ծծումբը վա-  
ռօղի բաղադրութեան մէջ կը խառնեն՝ ածուխի  
և աղբորակի հետ. վերջապէս բժշկութեան և  
արուեստից մէջ կը գործածեն և ձեռագոր-  
ծութեան մէջ ևս մեծ ծառայութիւն կը մատու-  
ցանէ, վասնզի ծծումբական թթուի կամ արջաս-  
պի խարխուխն է :

Ս. — Բարի, ես հիմայ հասկցայ թէ վառօ-  
ղը ինչ բանէ կը շինուի, կապարէն ալ գրն-  
տակ կը շինեն, կեցցէ պատերազմը, բա՛թ,  
բու՛թ, բա՛թ (քանակ մը կ'առնէ և քրօջը  
հետ կը խաղայ) :



Ս. — Է՛Տ, մէկդի, չար, անպիտան ։

Ա. — Յայտնի կ'երևայ որ դու մարդ չ'ես ։

Մ. — Ի՛նչ, Սրամ, ուրեմն դու պատե-  
րազմոյ մ'ես ։

Ս. — Այնպէս չէ՞ մայր, ուրիշը սպաննել,  
ուզելը չարութիւն է ։

Ա. — Սակայն մարդս զէնք ունենայու է  
ինքզինք պաշտպանելու համար, քեզ պիտի  
պաշտպանեմ Սաթենիկ, նոյնպէս նաև զքեզ,  
մայրիկ, երբոր մեծնամ ։

Մ. — Սիրելի զաւակներս, երկուքդ ալ  
իրաւունք ունիք ։ Այո՛, Սաթենիկ, պատե-  
րազմը սոսկալի բան մ'է, և հին ատենուան  
բարբարոսութենէ մնացած ։ Սակայն պէտք է  
յուսալ որ երբ մարդիկ լուսաւորուին կըր-  
թութեամբ և դաստիարակութեամբ, այդ  
գժուարութիւնները ուրիշ կերպով վերջացնել  
պիտի յաջողին, քան թէ այնպիսի ատելի մար-  
դասպանութեամբ, ախոս որ մարդիկ իրենց  
վառքը պատերազմներու, ասլինքն իրենց  
նմանները սպաննելու մէջ կը փնտռեն ։ Բայց  
այսու ամենայնիւ խեղճ տղաքներս, պէտք է  
թողունք մեր եղբայրներուն զինուոր լինել,  
մեր երկիրը պաշտպանելու համար ։

Ս. — Ա՛հ, Սաթենիկ, ազէկ դիտնաս որ  
պէտք է լինել հայրենասէր և պատերազմիլ  
գիտնալ, ինչպէս որ հայրս ալ պատերազմի ա-  
տեն ըրաւ ։

Մ. — Մէկդի թողունք պատերազմները և  
սկսինք խաղաղութեամբ մեր ուսումը . — ո՛ւր  
էինք հասած ։

Ա. — Կապարին վրայ կը խօսէինք ։

Ս. — Ո՛չ, ծծմբին վրայ կը խօսէինք ։

Ա. — Իրաւ է, բայց ես կուզեմ կապարին  
վրայ հարցում մ'ընել ։

Մ. — Խօսէ՛ ։

Ա. — Հայրս երէկ ըսաւ թէ կապարին մէջ  
չատ անգամ քիչ մը զառիկ կը գտնուի, միթէ  
զառիկը Բո՛ւն մ'է ։

Մ. — Այո՛, և սաստիկ թոյն մ'է, ասիկայ  
դեղորէից մէջ կը դործածուի, իրեն սովորա-  
կան ձեւը կը նմանի ճերմակ փոշիի, զոր կը  
դործածեն ֆրասակար կենդանիները սատկե-  
ցնելու համար, և որուն ռամկօրէն Բո՛ւն կը-  
սեն, ասիկայ Բո՛ւն թթուն է. ասոր՝ ալիւ-  
րի և մանաւանդ փոշեցած շաքարի հետ խառ-  
նուածը ֆրասակար դէպքեր կը պատճառէ ։  
Դարձեալ կ'ըսեմ որ վերջին աստիճան վտան-  
գաւոր բան մ'է, սխտորի հոտ մ'ունի, որ երբ  
վառ կրակի մէջ դնենք, այն հոտը չորս կողմ  
կը տարածուի ։

Ս. — Է՛Տ, շատ ազէկ, անցնինք, շուտով  
անցնինք այս գէշ զառիկին վրայ խօսելէն ։

Մ. — Սիրելի տղաս, պէտք չ'է որ միայն  
օգտակար բաները ճանչնանք, այլ կարեւոր է  
գիտնալ նաև ֆրասակարներն ալ, որպէս զի



անսոցմէ չը մնաստիւնք : Զառիկի բաղադրու-  
թիւն մը կայ, զոր նկարչութեան մէջ կը գոր-  
ծածեն, ասիկայ զառիկի ըստած կանաչ գոյնն  
է, որովհետեւ գեղեցիկ ստուեր մը կուտայ, զոր  
փայլուն կանանչ թղթի համար կը գործածեն .  
կառավարութիւնը պարտաւորած է արդելու  
չաքարագործներուն այս մետաղի գոյնով ներ-  
կուած թղթերուն կարկանդակի ծածկոյ ընելը :

Թերեւս օգտակար է ձեզ յայտնել որ այ-  
ցեառմանըուն փայլուն թղթերը՝ կապարի աղով  
ջնարակուած են : Արդ՝ հասկցա՞ք որ այն տղաք-  
ները կը թունաւորուին, որոնք այս թղթերը  
կը ձծեն : կապարի ճերմակը իրօք ի սկզբան  
չաքարի համ մ'ունի, բայց յետոյ մնաստակար  
և աղէտալի դէպք մը առաջ կը բերէ :

Վաղը, սիրելի զաւակունքս, ոսկւոյ և ար-  
ծաթի, երկու թանկագին մետաղներուն վրայ  
պիտի խօսինք :

Յ. ՈՍԿԻ. — ԱՐԾԱԹ.

Զբ բողոսք երբէք որ արծաթի  
սէրը մեր վրայ տիրէ :

Ս. — Արեւմն մայր, նախ արծաթին վրայ  
խօսինք զոր բոլոր աշխարհ կը սիրէ : Առաջի-  
նը ես : զոր երբ քսակիս մէջ կ'ունենամ՝ ու-  
քսակութեանէս կ'այլայլիմ :

Մ. — Ստուգիւ Սաթենիկ, դու արծաթը  
արդէն շատ կը սիրես :

Ս. — Այո՛, մայրիկ :

Մ. — Տղաս, այնպէս ըրէ, որ չափազանց  
չը սիրես, վասն զի յետոյ նա քու աէրգ կը  
գառնայ : Անվայել է մարդուս թողուլ՝ որ  
ստակն իր վրայ տիրէ : Սգահները հպարտ կամ  
ինքնասէր կը լինին միշտ :

Ա. — Մայրիկ, քեզ կը խոստանամ, որ  
եթէ ստակ ունենամ, ես զայն ինձի պիտի  
ծառայեցնեմ, օգտակար կերպով պիտի գոր-  
ծածեմ, աղքատաց և կարօտերոց պիտի տամ :

Մ. — Մենք հիմայ արծաթը իբրև մետաղ  
համարելով՝ անոր վրայ պիտի խօսենք, բայց  
դուք («արծաթ») բառը գործածեցիք բռնի, եւ  
բռնի-նեան տեղ՝ որ միևնոյն բանը չ'է : Վասնզի  
արծաթէ դրամին պէս պղնձէ և ոսկիէ դրամ-  
ներ ալ կան, մինչդեռ հարստութիւնը կը բաղ-  
կանայ այլ և այլ արժէքաւոր իրաց շատութե-  
նէն : Արեւմն արծաթը՝ ինչպէս և բոլոր ուրիշ  
մետաղները որ երկրիս մէջ կը գտնուին, երբեմն  
զուտ, շատ անգամ նաեւ այլ և այլ բաներով,  
այսինքն ծծումբի, կապարի և զառիկի հետ  
խառն կը լինին :

Ա. — Միշտ ծծումբ :

Մ. — Երբոր արծաթը հանածոյ (այսինքն  
չը գտնուած) վիճակի մէջ է, որ խիստ շատ ան-  
գամ կը պատահի, պէտք է արծաթի մէջ եղած



օտար նիւթերը զսեւ, զոր միւս մետաղներուն պէս կրակով կ'ընեն, և ահա կերպը. նախ արծաթի հանածոն կը մանրեն, յետոյ խիտ ջերմ կրակի մէջ կը դնեն, ծծումբը կ'այրի, կապարը քարմարցանի կամ կապարի թթուուկի կը փոխուի, և արծաթը միայն տակի հալոցին մէջ կը թափի: Եթէ այս հանածոն քիչ քանակութեամբ արծաթ պարունակէ, զայն մանրեղէն զկնի կը խառնեն անոնի հետ, որ արծաթը զտելու յատկութիւնն ունի, արծաթին վրայ կ'աղդէ և անոր հետ մէկտեղ տեսակ մը զանգուած կը կազմէ, արծաթը միւս մետաղներէն զատելէն յետոյ այս խառնուրդը ամանի մը մէջ կը դնեն և տակը աղէկ կրակ մը կը վառեն, այն ատեն սնդիկը կը շոգեանայ և միայն արծաթը կը մնայ: Ասիկայ երկար և աչխատաւոր բան է, և ասոր համար է որ արծաթը այնչափ սուղ է: Հիմայ ոսկոյն վրայ խօսինք:

Ա. — Այո՛, խօսինք այն աղւոր մետաղին վրայ:

Մ. — Ունի գրեթէ միշտ զուտ կամ մաքուր վիճակի մէջ կը գտնուի, և եթէ խառնուի ուրիշ մետաղացի հետ, մասնաւորապէս արծաթին հետ կը խառնուի, այն ալ քիչ քանակութեամբ:

Ա. — Ո՛հ, ահաւասիկ, զուտ մետաղ մը:

Մ. — Ոսկին աւաղներու մէջ ալ կը գըլու-

նուի, այս աւաղին կ'ըսեն անոնի անոն: Հոսուն ջրերը երբեմն զայն կը բերեն: Գաղղիոյ մէջ կրնանք այսպիսի ջրոյ հոսանքներ յիշել, ինչպէս Արիէժի գետը:

Ա. — Ոսկին ի՞նչ կերպով մեղ կը ներկայանայ:

Մ. — Պզտիկ բլուրեղներու կամ անկանոն հատիկներու ձեւով: Այն մարդիկ որ ոսկոյ դանակ կը փնտռեն, անոնք կ'ըսուին, այս բանը մեր մէջ շատ յարդի չ'է. կըսեն թէ ամենէն առատ ոսկեղանակներով լեցուն ջրոյ հոսանք մը՝ օրը հազիւ մէկ ֆրանքի ոսկի կրնայ տալ, յայտնի է որ մարդ աւելի աղէկ կը շահի դաշտին մէջ աշխատելով, քան թէ այս մետաղը ժողովելու պարտաւելով:

Ա. — Այո՛, բայց Աւստրալիայի՛ կալիֆօնիայի մէջ ուր հանքերը այնչափ շատ են, պէտք է որ շահաբեր լինին:

Մ. — Արդարեւ ոսկին հոն շատ անգամ բուռական մեծ կտորներով կը գտնուի, որուն անոնք կ'ըսեն. կալիֆօնիայի մէջ գտնուած ամենէն մեծ կտորը 16 քիլոկրամ է:

Ա. — Այսպիսի ոսկոյ կտոր մը մեծ բան է:

Մ. — Անշուշտ, բայց եթէ դիտնայիր, տըրաւ թէ ի՞նչ զրկում, ի՞նչ նեղութիւն, ի՞նչ կորուստներու կ'ենթարկուին այն մարդիկ, որոնք կ'երթան այն հեռաւոր տեղերը ոսկի փնտռելու, և որչափ քիչ մարդիկ անկէ ողջ



Ղամբ ետ կը դառնան :

Շարունակենք . — Ոսկին և արծաթը կը գործածուին աւելի գրամներու նոյնպէս և մեր գոհարներու՝ մեր զեղխութեան անօթնե-  
րու կամ սպասներու համար : Այս մեաաղնե-  
րը մաքուր վիճակի մէջ կակուղ են բայց երբոր պղնձի հետ խառնուելու լինին կը կարծրանան :

Ա. — Օ՛հ , օրինակի համար :

Մ. — Այս ոսկիէ 10 ֆրանքնոցին նոյնպէս նաև արծաթէ ռըրիշ հինգ ֆրանքնոցներուն մէջ ալ պղնձ կայ :

Ա. — Եւ որչա՞փ կայ մայր :

Մ. — Այս գրամներուն մէկ տասանորդը պղնձ է , նոյնպէս գոհարեղեններուն մէջ և երբեմն ասկէ աւելի կը գտնուի :



6. ԱԳԱՄԱՆԳ. — ԹԱՆԿԱԳԻՆ ՔԱՐԵՐ

Մ. — Բան մը կայ տղաքներս որ ոսկիէն աւելի շատ թանկագին է , կը տեսնա՞ք այս մասանին :

Ա. — Մ՛հ , ինչպէս կը փայլի :

Մ. — Ասիկայ ադամանդ մ՞ է :

Ա. — Ատիկայ ի՞նչպէս կը փայլի :

Ա. — Բիւրեղով :

Մ. — Ոչ , սիրելի զուտկս , այն ադամանդ-

ները որոնք բիւրեղով կը շինուին , անոնք սուտ ադամանդ են , և արժէք մը չունին , վասնզի այնչափ փայլուն չեն , ճիշդ ադամանդները բնութիւնը առաջ կը բերէ , անոնք հետու երկիրներու մէջ կը գտնուին , և այն ալ միայն քանի մը երկիրներու մէջ , որոնք ադամանդեղ երևէ կ'ըսուին :

Ս. — Գետնին մէջ այդպէ՞ս կը գտնուին :

Մ. — Այո՛ , միայն թէ այս փայլութիւնը տալու համար պէտք է տաշել , յղկել . ադամանդը այնչափ կարծր է որ միայն իր փոշիով կրնայ տաշուիլ կամ յղկուիլ , ասով է որ իր գինը կ'աւելնայ . բայց ես ձեզ պիտի զարմացնեմ , երբ ըսեմ թէ ադամանդը բիւրեղացած ածուխ է :

Ա. — Ուրեմն եթէ մէկը ուզէ՞ կրնայ ածուխով ադամանդ շինել :

Մ. — Մինչև հիմայ այդպիսի բան մը չի նեղն անկարելի եղած է , գիտնական տարրաբանները շատ փորձեր ըրած են , բայց արդիւնք չեն ունեցած : Ադամանդէն զատ ուրիշ թանկագին քարեր ևս կը գտնուին բոլորովին կարմիր , կանանչ , վարդագոյն , կապոյտ , դեղին մանուշակագոյն , այն պատուական քարերը՝ հանքային բաներ են , որոնք նոյնպէս հողին ժայռերուն մէջ կը գտնուին :

Ա. — Մայրիկ , կ'ուզե՞ս այդ թանկագին քարերուն անունները և գոյները մեզի ըսել , որպէս զի զանոնք ճանչնանք :



Մ. — Ամենայն սիրով, տղաքս, աբամանդը՝ բոլոր փայլուն քարերուն թագաւորն է, և ինքն անգոյն է: Սուսալը որ թափանցիկ քար մ'է և շատ կարմիր:

Շափեղան՝ կապոյտ գոյնով և խիստ թափանցիկ է:

Զրուհիւր՝ գեղեցիկ մութ կանանչ գոյն մը ունի:

Բեւեռը՝ կապուտակէկ կանանչ գոյն մ'ունի: Տպալանը՝ խիստ թափանցիկ և դեղնագոյն է: Մեղեփէլը՝ մանուշակագոյն է:

Գաճաղը՝ տփգոյն կապոյտ, սիրուն և անթափանցիկ քար մ'է:

Արամ, կարծեմ թէ բաւական սովրեցար, գո՞հ ես:

Ա. — Այո՛, մայրիկ, շատ շնորհակալ եմ, սովրածս կրկնեմ նայինք, գոճաղմը կապոյտ, մեղեփիկը մանուշակագոյն, տպաղիոնը գեղին, բիւրեղը տփգոյն կանանչ, զմբուխտը մութ կանանչ, շափեղան կապոյտ, սուտակը կարմիր:



ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ

7. ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍԳ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎՐՅՑ

ԲՐԱԾՈՑԳ

Բրածոները երկրին տարիքը կը ցուցնեն:

Ս. — Մայր, շատ հետաքրքիր եմ գիտնալու թէ երկրաբանութիւնը ըսելով ի՞նչ կ'իմացուի, անցեալ օր այդ բառը հօրս գրքին վրայ գրուած տեսայ:

Մ. — Դիւրին է այդ մասին քեզ գոհ ընելը, աղջիկս, երկրաբանութիւնը՝ գիտութիւն մ'է, որ կը սօրվեցնէ երկրագնտիս կազմութիւնը, որուն վրայ մենք կ'ապրինք, այս ուսումը շատ օգտակար է, վասն զի նա է որ կը տեղեկացնէ երկրիս բաղադրութիւնը, այսինքն քարերուն՝ ժայռերուն և կաւերուն, իրարու վրայ գրուած խաւերուն և այլն կազմութիւնը, նա կը ցուցնէ հանքերուն դրութիւնը, մշակելի երկրին արժէքը, և գետնին տակը եղած ջուրը խաղաղ հոսանքը:

Ս. — Մայր, երկրաբանութիւնը այս ամէնուն վրայ կը խօսի:

Մ. — Այո, աղջիկս, այս ուսումը այժմ կա-




բեւոր գիտութիւններէն մէկն եղած է՝ շատ մը ճարտարութեան, աշխատութեանց համար, ահա ասոր համար է որ շատ անգամ անոր վրայ խօսուիլը կը լսես :

Ս. — Մայր ես կը կարծէի թէ երկրաբանութիւնը աւելի բրածոներու ուսմանց կը ծառայէ :

Ս. — Ի՞նչ են բրածոյ ըստածները :

Մ. — Բրածոները այն կենդանեաց մնացորդներն են որոնք այլ և այլ ժամանակի շրջանի



1. անշունչ ստեղծ. 2. ստեղծած ստեղծ. 3. ստեղծած. մէջ երկրի մեծ յեղափոխութեանց ատեն՝ ջրով տարուած և յետոյ կաւային կոյտերու մէջ թաղուած են, զորս ժամանակը կարծրացուցեր է և որոնցմէ կազմուած են ժայռերէն շատերը, այս բրածոները երկրային խաւերուն մէջ կը գտնուին և ասոր համար է որ ասոնք երկրի տարիքը կը ցուցնեն, ասիկայ շատ լաւ ուսում մ'է, որուն վրայ շատ գիտնական մտորդիկ կղբաղին :

Բայց կը տեսնեմ որ այս ըսածներս շատ աղէկ չը հասկցար, պիտի ջանամ աւելի գիւրաւ քեզի հասկնալի ընել երկրաբանութեան ինչ լինելը, միևնոյն ատեն քեզի համառօտ տեղեկութիւն մը պիտի տամ, երկրաբանութեան մեզ ուսուցած բաներուն վրայ :

Գիտէ՞ք, տղաքներս, որ երկիրս գնտի մը պէս կըր է, բայց հասարակածին կողմը քիչ ուռած է և բեւեռներու կողմը տափկացած է իր այս անկանոն ձեւը՝ առաջ եկած է ի սկզբանէ, այսինքն մեզմէ շատ հեռու ժամանակի մը մէջ երբ երկիրս հալած, հեղուկ վիճակի մը մէջ էր :

Ս. — Ինչպէս որ երկաթն ու ապակին բարձր փուռերու մէջ հալած կը լինին, երկիրս ալ այն ատեն այնպէ՞ս եղեր է, մայր :

Մ. — Ս, յո՛, միայն սա տարբերութեամբ որ այնչափ մեծ հալած նիւթեղէն կաթիլին մէջ շատ մը ուրիշ տարբերքներ ալ խառնուած էին։ Ս, յինքն ամենէն կարծր ժայռեր, խտաքար մետաղներ, մարմարիտներ, առանց հաշուելու որ այս ջերմաստիճանով նուազ խիտ կամ կարծր գոյացութիւնները կատարելապէս ցընդեցան և երկրագնտիս շուրջը կաղային վիճակի մէջ մնացին :

Կամաց կամաց, այն հալած զանգուածը պողեցաւ, շոգիններն ալ խտացան և կազմեցին ջրերը, ուրկէ առաջ եկան գետերը, լեճերը, ծովերը։ Հիմայ ասիէ աղէկ հասկցար



որ՝ առաջին կամ բարձրագոյն կարգի կենդա-  
նիք, ինչպէս են վիզը, ձին, կովը, ոչխարը  
և այլն չեն կրցած ծնիլ և ապրիլ երկրիս վրայ,  
բայց եթէ այն ատեն, երբ որ օդը կարելի  
եղաւ շնչել, այնպէս չէ՛ նոյնպէս կը հասկնաք  
որ կենդանական կեանքը՝ սկիզբն առաւ ամե-  
նէն տարրական այսինքն ստորին կարգի կեն-  
դանիններով, ինչպէս են բուստը, կենդանա-  
բոյսերը, թուլամորթները և բոլոր ջրային  
կենդանիները : Նոյն ժամանակի մտաբեր երև-  
ցան մեծ խոտերը, ինչպէս են յղկաբոյսերը,  
(տեսակ մը ձարխոտ) վայրի ձարխոտները, նախ-  
նական անտառները : այս անտառներուն մէջ  
ի սկզբան հսկայ կենդանիներ կը բնակէին,  
որոնց նմանները ա՛լ հիմայ չկան : Այս նախ-  
կին ստեղծուածները ի՞նչպէս աներևութացան :

Ա. — Ես ալ ատ էր որ քեզ պիտի հարցը-  
նէի, մայր :

Բ. — Ուրեմն ուշադրութեամբ մտիկ ըրէք :  
այն ատեն երկրիս ներքին զանգուածը՝ որ  
նուազ արագութեամբ կը պողէր՝ քան իր մա-  
կերելոյթը, ժայթմունքներ կընէր, և բար-  
ձրանալով երկրին կեղեւէն լեռներ կը ձեւա-  
ցընէր, զորս հրաբուխներով կը ծածկէր, որք  
ծխաններու կը նմանին. ուրիշ դուրս կե-  
լար ստորերկրեայ հուրը՝ շոգիով ու հալեալ  
կարծր նիւթոց հեղեղներով կամ հրափրփուր-  
ներով : Իրենց նախկին սեղերէն սաստկապէս



վեր նետուած ջուրերը՝ կ'ողողէին կամ կ'ա-  
պականէին միւս տեսակները : Այսպէս երկրիս  
վրայի երեսը կամ մակերեսոյթը շատ անգամ  
յեղափոխուած է արդի վիճակը առնելէն առաջ :  
Գետնածուխը կամ հանքաջուրը, որուն վրայ  
առաջին դասին մէջ խօսեցանք, կը գտնուի  
քանի մը երկիրներու մէջ անհուն կարգերով,  
երբեմն հողին երեսին վրայ, երբեմն ալ երկ-  
րիս շատ խորը, որոնց սկիզբը կամ ծագումը  
նախնական անտառներէ առաջ եկած է, զորս  
հեղեղները յառաջագոյն ողողած կամ գետնի  
տակ թաղած են, և երկրիս ջերմութենէն  
ածուխի դարձած են, այն փայտերուն պէս՝  
զորս կ'այրին ամբախակ ամաններու մէջ : Եր-  
կրային հանքածուխը կը վերաբերի երկրիս  
առաջի շրջանին, երբ որ երկրազնտին վրայ  
կենդանիք երեւցան :

Ա. — Քանի որ հանքերն ևս ունին իրենց  
պատմութիւնը, ուրեմն կրնայ մարդ անոնց  
տարիքն ըսել, այնպէս չէ՞ մայր :

Բ. — Այո՛, կարծր ժայռերուն բիւրեղա-  
ցումը, ինչպէս խոտաբարն ու երկաթակուծը  
(տես մարմարիոն) ըստ բաւականին կը ցուցը-  
նեն որ այս ժայռերը հալած են, և այս բանը  
ուրիշ կերպով տեղի չէր կրնար ունենալ, եթէ  
ոչ սաստիկ տաքութեան մը ազդեցութեամբ,  
ուրեմն իրենց սկիզբը առաջ է քան զծագումն  
կրային քարերու և ուրիշ անոնց, որոնք






առաջ եկած են նախկին մեծ ողորմանց կաւա-  
յին կոյտերէ :

Ս. — Մայր , ուրեմն հանքերը բոյսերէն  
առաջ եղած են :

Մ. — Մնչուչտ , ընդհանուր կարգին մէջ ,  
հանքերը գլխաւորապէս ամենէն հինն են , այ-  
սինքն անդրանիկներն , իսկ բոյսերը անոնցմէ  
ետքը եկած են , և ամենէն վերջը կենդանի-  
ները . վերջը պիտի հասկնաս այս ամենուն  
պատճառը :


Տունկերը ի՞նչպէս կապրին , իրենց սնուն-  
դը ո՞ւրի՞նչ կը գտնան , — երկրի վրայ այնպէս  
չէ . կենդանիները ինչո՞վ կապրին , — մեծաւ  
մասամբ բոյսերով : — Ահաւասիկ արարչագոր-  
ծութեան ինչ կարգով լինելը համառօտ կեր-  
պով ձեզ պատմեցի : Որովհետև տիեզերաց  
մէջ եղած կարգին վրայ խօսեցայ , կ'ուզեմ  
վերջին օգտակար դաս մ'ալ այս մեծ տեսա-  
բանէն հանել , և ձեզ դիտել տալ որ ուսմուն-  
քը միայն մեր միտքը զարգացնելու , ընդար-  
ձակելու չի ծառայեր : Այլ կը բարձրացունէ  
նաև մեր հոգին և կը սորվեցնէ զմեզ ճանչ-  
նալ սիրել այս բոլոր բաներուն Սրբաբնիչը :  
Վերջապէս իւր գործքերը կ'ուսուցանեն մե-  
զի սիրել զինքն , նկատելով այն ամէն բարիքը  
որով զմեզ շրջանպատած է իր հայրական և  
անսպառելի բարութեամբ :

ԵՐԵՍ	ՏՈՂ.	ՄՈՒՆ.	ՈՂՈՂ.
5	12	տակը	մէջը կ'մ. յատակը
7	5	ձաղառածելին	սրակին ձաղա-
		պսակը	ռածելը
7	20	տես	այսինքն
22	21	մէկըմէկու	միւս տերեւներ-
			րուն
25	24	սերմանօթէ	սերմանօթներէ
25	25	է	են
27	15	ունի՞	ունէր
30	12	հակաթ զենիներու	հնդկաթ զենի-
			ներս
31	13	հասցնելու	պարփակելու
4	26	են	են զորս
39	1	0/0 60էն	60 աստիճանէն
39	3	0/0 70ի	70 աստիճանի
44	8	զեռունները	այսինքն քառո-
			տանիներ թըռ-
			չունները ձկնե-
			րը և այլն
46	12	2	2. Ա.
59	1	3	3 Բ.
39	2	ՈՐՈՒՆԸ. — ՃԱՒՆԵՐ	ՈՐՈՒՆԸ
59	17	կուրծքին ալ	կուրծքն ալ
69	27	սոյն արագ խաւերը	սոյն խաւերը
			չուտով
78	25	բայց կարմիր	բայ կարմիր
99	26	խիճը	կոճը
101	11	կրակաւորներ	կրակարաններ
120	26	փայլի	լինի





Faint, illegible text on aged, yellowed paper, possibly bleed-through from the reverse side. The text is arranged in several lines and appears to be a list or a set of instructions, but the characters are too faded to be transcribed accurately.





107

2013

<< Ազգային գրադարան



NL0064401



50a.

Uzgodny. 97

